[illegible]

[illegible]

[illegible]

1930р.

К. [illegible]

491.99-5
Д-50

0005-1

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՄԱՍ

ԴԱՍԱԳԻՐՔ ՅՈԹՆԱՄՅԱ, II ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ
ՅԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

---

Դ. բարեփոխված ու լրացրած հրատարակություն

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1930

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան

19 JUL 2013

Հրատ. № 1288

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեպ. № 5102(բ) Տիրաժ 6000 Պատվ. 441

# 1-ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս գրքի Ա. և Բ. մասն էլ I աստիճանի դպրոցներում կա-
տարվող լեզվական գործնական աշխատանքների ամփոփումն են՝
վորոշ սիստեմի վերածված, և II աստիճանի դպրոցների ստորին
խմբերի դասատուների համար ծառայելու յեն իբրև ուղեցույց։
Յերկու գիրքն էլ գործնական նպատակ են հետամտում — աշա-
կերտներին դիտել տալ այս կամ այն լեզվական յերևույթը և այդ
դիտողություններից հանած յեզրակացություններով յուրացնել
տալ՝ հայոց լեզվի ուղղագրությունը, կետադրությունն ու, վորոշ
չափով, վոճը։ Հետևապես միանգամայն խուսափելով դոգմատիզ-
մից ու քերականության տարկայական բնույթ տալուց, լեզ-
վական վոչ մի կանոն կամ սահմանում ուսուցիչը պատրաստի
չպետք է տա աշակերտներին. այդ կանոններն ու սահմանումներն
աշակերտների դիտողությամբ և բանաձևումով պիտի յերևան
գան։ Ինքնուրույն դիտողությունն ու բանաձևումը զարգացնում
են աշակերտի ակտիվությունը, հետաքրքրություն են առաջ բե-
րում նրա մեջ, բարձրացնում նրա յեռանդը և արդյունքն ամ-
րապնդում աշակերտի հիշողության մեջ։

Այս կամ այն դասի նյութ դարձած հոդվածում վորեւէ նպա-
տակ իրեն վորոշակի առաջադրելով, դասատուն առաջադրած նպա-
տակին համապատասխան հատված պետք է ընտրի այդ հոդվա-
ծից (կարելի յե նաև այս գրքի I մասի առաջադրություններից)
և, աշակերտների ուշադրությունն իր առաջադրության վրա հրա-
վիրելու համար, կենդանի զրույց սարքի նրանց հետ՝ հարց ու
պատասխանի միջոցով. ուսուցչի հարցերը պիտի լինեն մտած-
ված, հասկանալի ու վորոշ և համապատասխանեն այս կամ այն
խմբի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին։ Այս-
պես կոչված հուշող հարցերից հնարավոր չափով պետք է խու-
սափել։

Վորոշ նպատակով առաջարկած հարցերից հետո պետք է
անցնել նրանցից բղխող յեզրակացության, վոր աշակերտներն
իրենք պիտի հանեն։ Ուսուցիչը շատ էլ խստապահանջ չպետք է

լինի կանոնների ու սահմանումների բանաձևումների բառացի ճշտության նկատմամբ, քանի վոր, առհասարակ, նման աշխատանքները դժվարին են. սակայն ուսուցիչը պետք է հետևի, վոր բանաձևումների մեջ մտքի սխալներ չլինեն: Վորովհետև բանաձևումը հետևանք է վոչ միայն յուրացման, այլև ստեղծագործության, սինթեզի, իսկ աշակերտության վոչ բոլորի մեջ են զարգացած լինում այդ ունակությունները, ուստի դասատուն պետք է աշխատի առաջ քաշել այդ ունակությունների տեսակետից պակաս զարգացածներին:

Հատվածը դիտելով ու յեզրակացություն հանելով՝ ամեն ինչ չպետք է վերջանա. ամենակարևորը—գործնականը դեռ մնում է: Բավական չէ, վոր աշակերտը կանոններ կամ սահմանումներ յեզրակացնի, բանաձևի և իմանա. նա պետք է կարողանա այդ կանոնները գործնականորեն կիրարկել: Ահա այդ նպատակով, դասատուն աշակերտներին գործնական աշխատանքներ պետք է առաջադրի, վորոնց կատարումից արդեն կերևա, թե աշակերտությունը կամ անհատ աշակերտն ինչ չափով են յուրացրել լեզվական այս կամ այն կանոնը:

Այս գրքերում բավականին թվով այդպիսի գործնական աշխատանքներ են առաջադրված. դասատուն կարող է նման հատվածներ վորոնել և լեզվի դասագրքում:

Հատկապես ուղղագրության ուսուցման նպատակով տրվող գործնական աշխատանքների նպատակահարմարության համար հանձնարարվում է կարդալ Գ. Եղիկյանի նոր կազմած «Ուղղագրության ուսուցման մեթոդիկան»:

Ավելորդ եմ համարել, շատ սակավ բացառությամբ, հարցեր դնել աշխատանքների համար, նախ՝ գրքի ծավալը չմեծացնելու նպատակով, յերկրորդ՝ ընդունելով, վոր ինքնին հասկանալի կլինի, թե ուսուցիչն ինչ հարցեր պետք է տա, քանի վոր նա նախորոք ծանոթ պետք է լինի յուրաքանչյուր վարժության հաջորդող կանոնին կամ սահմանման, վորոնք ինքնին նշում են լեզվի դիտելիք յերևույթը, վորից և, բնականորեն, ծագում են հարցերը:

Քերականական վորոշ խնդիրներ մանրամասնորեն են դըրված, հատկապես դասատուների համար: Առհասարակ, աշակերտներին միայն վորոշ նպատակով տրված հատվածիկները պետք է դիտել տալ ու գործնական աշխատանքներ առաջադրել այս գըրքերի Ա. մասից, Բ. մասն աշակերտների ձեռքը չպետք է տալ,—



այդ մասը կազմված է սոսկ իբրև ուղեցույց դասատուների համար:

Հարկ եմ համարում հայտնել, վոր այս գրքերի տեսական մասի համար աղբյուր են ծառայել Մ. Աբեղյանի կազմած քերականության դասագրքերը: Որինակներն ու վարժությունները ինքս եմ կազմել, կամ հայոց լեզվի՝ համապատասխան տարվա դասագրքերից վերցրել:

**Հար. Պետրոսյան**

## 2-ՐԴ, 3-ՐԴ ՅԵՎ 4-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

«Գործնական քերականության» Բ., Գ. և Դ. հրատարակությունները բարեփոխված են և անհամեմատ լրիվ, քան Ա. հրատարակությունը: Աշխատանքի դպրոցն իր հարաճուն վերելքի ընթացքում, կիրառվող դասագրքերի նկատմամբ միշտ ել բարեփոխման պահանջ կդնի, մանավանդ իր սկզբնական—կազմակերպական շրջանում: Այս հրատարակությունն իր բարեփոխություններով մասամբ բավարարում է այդ պահանջը, բայց հավակնություն չունի լիովին բավարար լինելու, վորովհետև «գործնական քերականության» համար մենք անցյալի փորձ չունենք:

**Հ. Պ.**

# I. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՍԱՑՎԱԾ

ա. *1)* **Գրեց։**
*2) Վաչիկը* **գրեց։**
*3) Վաչիկը դասը* **գրեց։**
*4) Վաչիկը դասը մատիտով* **գրեց։**
*5) Վաչիկը դպրոցում դասը մատիտով* **գրեց։**
*6) Վաչիկը դպրոցում առավոտյան դասը մատիտով* **գրեց։**

*Վերև գրված 6 օրինակները* **ն ա խ ա դ ա ս ո ւ թ յ ո ւ ն ն ե ր** *կամ* **խ ո ս ք ե ր** *են։* **Ամեն մի նախադասություն մի միտք կամ մի մտածություն է արտահայտում։**

*Նախադասությունը կարող է կազմված լինել մի կամ ավելի բառերից. վերևի նախադասություններից 1-ինը կազմված է մի բառից, 2-րդը՝ երկու, 3-րդը՝ երեք բառից և այլն։*

**Նախադասությունն ամենակարճ ձևով կազմվում է մի բառից, վոր կոչվում է բ ա յ.** *օրինակ՝ վերևի 1-ին նախադասությունը—***գրեց***—կազմված է մի բայից։*

*Առանց բայի նախադասություն չի կարող լինել, ուրեմն միտք էլ չի կարող լինել. օրինակ, յեթե 2-րդ, 3-րդ, 4-րդ և այլն նախադասություններից բայը հանենք, կստանանք՝ 1) Վաչիկը..., 2) Վաչիկը դասը..., 3) Վաչիկը դասը մատիտով... և այլն, սակայն այդ բառերը լսողը կամ կարդացողը վորոշ միտք չի հասկանա. իսկ յեթե այդ բառերի վրա ավելացնենք* **գրեց, արտագրեց** *և այլն բայերից մեկնումեկը, այն ժամանակ միտք կըստացվի։*

**Բայերը մենակ կարող են նախադասություն կազմել։** *Մնացած բառերը, վորոնք բայեր չեն, մենակ կամ միքանի բառ միասին, նախադասություն կազմել չեն կարող։*

բ. **Բայը կարող է չգրվել, բայց մտքով հասկացվել.** *օրինակ, յերբ կարդում ենք՝*

Շանհայի փողոցում։
Ամառ։
Կեսօր։
Գործադուլ։
Ցույց է։
Ցնցում։

(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Ռամ-Ռոյը»),—

մենք տեսնում ենք, որ այս վեց նախադասություններից միայն մեկում է բայը դրված (ցույց է), իսկ մյուսներում թեև չի դրված, բայց հասկացվում է. օրինակ՝

Շանհայի փողոցում է։
Ամառ է։
Կեսօր է։
Գործադուլ է։
Ցնցում է։

Կամ յերբ ասում ենք՝

Հասկացողին՝ մին,
Չհասկացողին՝ հազար ու մին,—

մենք հասկանում ենք, թե՝

Հասկացողին մին ասա,
Չհասկացողին հազար ու մին ասա։

Այսպիսով, բայը նախադասության մեջ կարող է զեղչվել զանազան նպատակներով (պատկերների արագ փոփոխություն արտահայտելու, ուժեղ տպավորություն թողնելու և այլն), բայց գոյությամբ հասկացվել։

Լրացրե՛ք հետևյալ նախադասությունները՝ բայեր դնելով.

1) Յերևան։
Աստաֆյան փողոց։
Արևը — կարմիր շաֆրան։
Ամեն ինչ — գորշ, առօրյա։
Ինչպես միշտ — գորշ, փոշոտ փողոց։
Սառը ջուր։
Խաղող։
Գինի։
Մարդիկ,
Կառքեր,
Մարդիկ...



Ծույլ, դանդաղ
Մի քնած եշի
Յերջանիկ յերազի նման —
Տոթ, արև, ամառվա փոշի...
Աշխարհը — փոշոտ մի փողոց...

2) Անձրև։ Մշուշ։
Թաց, խոնավ — անձրևոտ քամի...
Գլխի տեղ -- հսկա մի բերան,
Գլխի տակ — անսահման մի փոր։

(ԵՂ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

Գ. Բայը մենակ կարող է միտք արտահայտել այն պատճառով, որ մի անգամից միքանի գաղափար է արտահայտում. մյուս բառերը չեն կարող մի անգամից միքանի գաղափար արտահայտել. օրինակ, յերբ ասում ենք՝ գրեց, հասկանում ենք, որ մեկը գրելու գործողություն կատարեց, այդ գործողություն կատարողը մեկ է և ոչ թե մեկից ավելի (թվի գաղափար). այդ գործողությունը խոսելուց առաջ է կատարվել (ժամանակի գաղափար) և այլն. իսկ յերբ ասում ենք Վաչիկ, հասկանում ենք մի մարդ՝ Վաչիկ անունով, ուրիշ ոչինչ։

Գ. Սակայն միայն բայով արտահայտված միտքը թերի է. այդ միտքը լրացնելու համար հարկավոր են ուրիշ բառեր, վորոնք լրացնեն բայի միտքը. օրինակ՝ գրեց բայից չի իմացվում, թե՝

1) ո՞վ գրեց.
2) ի՞նչ գրեց.
3) ինչո՞վ գրեց.
4) վո՞րտեղ գրեց.
5) յե՞րբ գրեց և այլն։

Այս հարցերի պատասխանը մենք իմանում ենք՝ հետևյալ բառերն ավելացնելով (6-րդ նախադասություն)— Վաչիկը դըպրոցում առավոտյան դասը մատիտով գրեց։ Ավելացրած այդ հինգ բառերը լրացնում են գրեց բայի արտահայտած միտքը։

Բայի միտքը լրացնող բառերը նախադասության մեջ կոչվում են **բ ա յ ի   լ ր ա ց ու մ ն ե ր**։

Բայի լրացումներն էլ իրենց հերթին կարող են ունենալ լրացումներ, վորոնք կոչվում են **լ ր ա ց մ ա ն   լ ր ա ց ու մ ն ե ր**. վերջիններս էլ իրենց հերթին կարող են լրացումներ ունենալ և այլն. օրինակ՝— աշակերտական խորհրդի քարտուղարի կազմած արձանագրության պատճենը ուղարկվեց — այս նախադասության

մեջ ամենակարևոր բառը, առանց որի միտք չի լինի, ուղարկվեց բայն է. այս բայի լրացումն է պատճենը բառը (ի՞նչն ուղարկվեց — պատճենը). պատճենը բառի միտքն էլ իր հերթին լրացվում է արձանագրության բառով (ինչի՞ պատճենը — արձանագրության պատճենը), արձանագրության բառի միտքն էլ՝ կազմած բառով, վերջինիս միտքն էլ՝ հարցուղարի բառով, այս էլ՝ խորհրդի բառով, վերջինս էլ՝ աշակերտական բառով։

Այսպիսով, նախադասության մեջ յուրաքանչյուր բառ, բացի բայից, լրացնում է որևէ բառի արտահայտած գաղափարը՝ դառնալով նրա լրացումը: Մենք հարցերով կարող ենք իմանալ, թե ո՞ր բառը ո՞րի լրացումն է։

ե. Նախադասության մեջ յուրաքանչյուր լրացում այս կամ այն բառի իմաստը լրացնելով՝ ստորադասվում է նրան. օրինակ՝ վերևի օրինակի մեջ — աշակերտական խորհրդի հարցուղարի կազմած արձանագրության պատճենը ուղարկվեց — պ ա տ ճ ե ն ը բառը ստորադասվում է ուղարկվեց բային, ա ր ձ ա ն ա գ ր ու թ յ ա ն բառը — պատճենը բառին, կ ա զ մ ա ծ բառը — արձանագրության բառին և այլն։

Միևնույն բառին միաժամանակ միքանի նույնանման իմաստով լրացումներ կարող են լինել. օրինակ՝ Աշոտը դեղին, կանաչ, կարմիր յեվ կապույտ մատիտներ ունի նախադասության մեջ դեղին, կանաչ, կարմիր և կապույտ բառերը մատիտներ բառի լրացումներն են, իսկ մատիտներ բառը նրանցով լրացվող բառը կամ նրանց լ ր ա ց յ ա լ ն է։

Միևնույն բառի նույնանման իմաստով լրացումներն իրենց լրացյալի նկատմամբ հ ա մ ա ս տ ո ր ա դ ա ս են, իսկ իրար նկատմամբ — հ ա մ ա դ ա ս։

Նախադասության մեջ նույնանման իմաստով համադաս բառերն իրարից բաժանվում են ստորակետով. վերջին յերկուսն իրար հետ կարող են կապվել յեվ, ու բառերով (դեղին, կանաչ, կարմիր և կապույտ). այս դեպքում վերջին յերկու բառերի միջև ստորակետ այլևս չի դրվում։

գ. Նախադասությունը կամ խոսքը հաճախ լրիվ միտք չի արտահայտում. մի նախադասության վրա հաճախ յերկրորդ, յերրորդ և այլն նախադասություններ ենք ավելացնում՝ լրիվ միտք արտահայտելու համար։ Օրինակ՝ յերբ աշնան քամին փչեց նախադասությունը թեև մի միտք է արտահայտում, սակայն այդ միտքը թերի յե մնում. լսողը կամ կարդացողն սպասում է, որ



ելի բան պետք է ասվի։ Յեթե այդ նախադասության վրա ավելացնենք՝ ծառերի տերևները թափվեցին, այն ժամանակ կստանանք մի լրիվ միտք — յերբ աշնան քամին փչեց, ծառերի տերևները թափվեցին։

Լրիվ արտահայտված միտքը կոչվում է ա ս ա ց վ ա ծ։

Մենք խոսում ենք ասացվածներով։

Ասացվածքի վերջը դրվում է վերջակետ։

Ասացվածները կարող են կազմված լինել մի լրիվ միտք արտահայտող նախադասությունից, կամ մեկից ավելի նախադասությունների միությունից։ Մի նախադասությունից կազմված ասացվածը կոչվում է պ ա ր զ ա ս ա ց վ ա ծ, իսկ մեկից ավելի նախադասություններից կազմված ասացվածը կոչվում է բ ա ր դ ա ս ա ց վ ա ծ։

Բարդ ասացվածը կարելի յե վերլուծել և ցույց տալ, թե քանի և ինչ նախադասություններից կամ խոսքերից է կազմված։ Վորովհետև յուրաքանչյուր նախադասության մեջ պետք է լինի մի բայ, ուստի բարդ ասացվածը կազմված է լինում այնքան նախադասություններից, վորքան բայ կա տվյալ ասացվածի մեջ։ Այս դեպքում պետք է հաշվել նաև զեղչված բայերը։ Օրինակ՝

Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին, նայեց կոշիկների ծամված ծայրերին, դուրս յեկավ սենյակից, դուռը փակեց, բանալին գրպանը դրեց, անցավ բակի յերկայնքով և բարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամբը, վոր պլպլում եր հայելու պես։

(ՆԱՐ-ԴՈՍ «Նեղ որերից մեկը»)

Այս ասացվածի մեջ ութ բայ կա, ուրեմն այս ասացվածը կազմված է ութ նախադասությունից, այն է՝

1. Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած հագուստին,
2. նայեց կոշիկների ծամված ծայրերին,
3. դուրս յեկավ սենյակից,
4. դուռը փակեց,
5. բանալին գրպանը դրեց,
6. անցավ բակի յերկայնքով,
7. և բարձրացավ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պ ա տ շ գ ա մ բ ը,
8. վոր պլպլում եր հայելու պես։

Բարդ ասացվածի մասերը կազմող նախադասությունները, ինչպես միևնույն նախադասության լրացումները, իրար նկատ-

մամբ կարող են լինել համադաս և ստորադաս. ուստի բարդ ասացվածի մեջ նախադասությունների կապակցությունը յերկու տեսակ է լինում — համադասական և ստորադասական,

**Համադասական կապակցության դեպքում յերկու նախադասություն համազոր են, ինքնուրույն, իրար միտք չեն լրացնում քերականորեն, մեկը մյուսի լրացումը չի դառնում:**

**Ստորադասական կապակցության դեպքում յերկու նախադասություններից մեկը պահում է իր ուրույն նշանակությունը, անկախ միտք է արտահայտում, իսկ մյուսը ծառայում է այդ նախադասության վորպես լրացում, ուրույն միտք չի արտահայտում յեվ այդպիսով ստորադասվում է նրան:**

Ստորադասության դեպքում ուրույն միտք արտահայտող նախադասությունը **գլխավոր նախադասություն** է կոչվում, իսկ իբրև լրացում ծառայող նախադասությունը — **յերկրորդական կամ ստորադաս նախադասություն:**

Վերը բերած ութ խոսքից կազմված ասացվածի մեջ 1 — 7 նախադասություններն իրար նկատմամբ համադաս են, իրար միտք քերականորեն չեն լրացնում — մեկը մյուսին իբրև լրացում չի ծառայում. այնինչ 8-րդ նախադասությունը (**վոր պըլպըլում էր հայելու պես**), անկախ միտք չի արտահայտում, առանձին վերցրած՝ թերի է. այդ նախադասությունը ծառայում է վորպես լրացում նախորդ (7-րդ) նախադասության մեջ գործածված **պատշգամբը** բառին, ցույց տալով այն պատշգամբը, վոր պլպլում եր հայելու պես (կարճ ասած՝ հայելու պես պլպլացող պատշգամբը): Այսպիսով՝ այդ նախադասությունը դառնում է յերկրորդական լրացական նախադասություն:

Բարդ ասացվածը վերլուծելով, կարող ենք ցույց տալ, թե քանի և ինչ նախադասություններից է կազմված:

Նախադասությունը վերլուծելով, կարող ենք ցույց տալ, թե ինչ բառերից է կազմված:

Բառերն էլ իրենց հերթին կարող են վերլուծվել բաղադրիչ մասերի — վանկերի, վերջիններս էլ հնչյունների:

**Հնչյուն, վանկ, բառ, նախադասություն** և **ասացված** — ահա լրիվ արտահայտված մտքի բաղադրիչ մասերը:

Հնչյունների և վանկերի ուսումը կոչվում է **հնչաբանություն**, բառերի ուսումը՝ **բառագիտություն**, իսկ նախադասությունների և ասացվածների ուսումը՝ **շարահյուսություն:**



ՑՈՒՅՑ ՏՎԵՔ՝

1. ասացվածները (պարզ յեվ բարդ),
2. նախադասությունները,
3. նախադասությունների կապակցությունը բարդ ասացվածի մեջ (համադասական յեվ ստորադասական),
4. բառերը յեվ բառերի կապակցությունը նախադասության մեջ —

ստորեվ բերված հատվածներում.

1. Գարնան ծիլ ու ծաղկի, ծիծեռնակի ու արտույտի հետ գյուղ **մտավ** առաջին տրակտորը:

Հսկայական բզեզի նման փնչալով ու ծանրաշարժ՝ նա ո**ռոռվեց** նեղլիկ փողոցներով և **կանգ** առավ գյուղի հրապարակում:

Կոմյերիտականների քեֆին քեֆ **չէր հասնում:**

Գարնանը հանդ դուրս յեկող մարուկների նման նրանք ուրախ **թռչկոտում էին** տրակտորի շուրջը:

Հանդում միտինգ յեղավ:

Վարկային ընկերության նախագահը **բացատրեց** գյուղի չըքավորներին հասցրած իրենց առաջին ոգնության մասին: Այսպես **կանգ առավ** վարկային ընկերության, արտելների և կոոպերացիայի դերի ու նշանակության վրա:

(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)

2. Մռայլ **էր** գերմանացի մասնագետը: Իր բերած մեքենաների նման ծանր ու մռայլ:

Ո՞վ **կհամարձակվեր** ծիծաղել նրա առաջ, կամ բարձրաձայն խոսել:

Մեքենաները **սարքի գցեց**, բանվորական խնջույքում բոլորը **խմեցին** նրա կենացը:

Սանթրոսյանը Կարլ Հերմանի «**փեշն**» էլ «**քաշեց**» իր առանձնասենյակում, ապա ձեռքը սեղմելով **դուրս յեկավ:**

(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)

3. Ձորում վերջալույս **է:** Արևն այնքան շուտ **է թեքվում** սարերից այն կողմ: Յերկնքի վրա դեռ նրա շողերն **են յերևում**, իսկ ներքևում մոխրագույն մութն **է:** Ծառերի **տակ** խավար **է** արդեն, և չղջիկներն իրենց թևերն **են թափահարում:** Իսկ փայտփորիկը դեռ **փորում է:**

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Ցեմլոպացին»)

4. Յերբ տերտերը յեկեղեցում **քարոզ եր տալիս, ասում**, թե բոլորը մի **հոտ են** յեկեղեցու համար, թե կա յերկնային մի հովիվ, Ծատուն տղան իսկույն մտքով սարն **եր քշում**, ուր կախ ընկած դմակով վոչխարներն **եյին արածում, չաղանում, դառնում** դեղին վոսկի։

(ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծատուն տղան»)

5. Ուր **ձեռք մեկնես**, այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ
**թող կանաչի**,
Ուր **յերեվաս**, ուր էլ **հասնես**, մի նոր սերունդ այնտեղ **աճի**.
Ով **ծարավ ե**, թող **հագենա**, ով **յարամազ՝ թող կշտանա**...
Այսպես ե մեր Շիր-կանալը, մի գյումրեցու ողուլ ե նա,
Յեվ **գարգիման**, և՛ **սրտաքուխ**, և **լայնաշուրք**, և **հյուրասեր** —
**Քեֆը տեղը, յերգը բերնին, խոսքը շուրթին, լիառատ սեր**։

(Հ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Բոլշևիկ և Շիր-կանալը»)

6. Նորից արևն **ելավ**, Նորից **վառեց** կրակ,
Նորից **հնչեց** կարմիր զորանոցում թմբուկ,
Նորից **բացվեց** ահա մեր սարերի վրա
Խորհրդային ազատ առավոտը խնդուն....

(ԱԼԱԶԱՆ՝ «Առավոտ»)

7. Այս գարունը, վոր հիմա **զրնգում** ե մեր յերկրում,
Անդուլ պայքարն ե **բերում**, աշխատանքից ե **բխում**...

(ԵՂ. ՉԱՐԵՆՑ՝ «Այս գարունը»)

8. Տխուր ե **զնգում** գերանդին,
Հասկերը **շրշում են** — «**ո՛ւշ ե**...»
Ինչքան էլ **յեռա** յեռանդից,
Գերանդին արդեն **անուժ ե**։

(Ն. ԶԱՐՅԱՆ՝ «Հնձվորը»)

## II. ԲԱՌ, ՀՆՉՅՈՒՆ, ՎԱՆԿ, ՏԱՌ

§ 1. **Վաչիկը դպրոցում դասը մատիտով գրեց**։ *Այս նախադասությունը կազմված ե հինգ բառից։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 1. Ամեն մի **բառ** ունի վորեվե նշանակություն կամ իմաստ, վոր լսողը հասկանում ե այս կամ այն կերպ, նայած ինչպես ենք գործածում։ Միեվնույն բառը տարբեր նախադասությունների մեջ տարբեր իմաստներով կարող ե գործածվել կամ տարբեր **առումներ** կարող ե ունենալ. օր.՝ *յես* **քար** *ջարդեցի, նա* **քար** *սիրտ ունի. առաջին նախադասության մեջ* **քար** *բառը պահում ե իր բուն նշանակությունը, իսկ յերկրորդ նախադասության մեջ մի այլ նշանակությամբ ե գործածվում, այն ե՝* անզգա։



§ 2. *Մ-ա-տ-ի-տ,—սրանք* **մատիտ** *բառի ամենապարզ բաղադրիչ մասերը կամ* **հնչյուններն են**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 2. **Հնչյունները** պարզ ձայներ են յեվ բաղադրիչ մասերի չեն վերլուծվում։ Հնչյուններն արտասանվում ու լսվում են։

§ 3. *Ա-շա-կերտ, մա-տիտ, դա-սա-րան, կար-դալ,—այս բառերը գծիկներով* **վանկերի** *յեն բաժանված։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 3. **Վանկ** կոչվում ե այն հնչյունը, կամ յերկու յեվ ավելի հնչյունների կապակցությունը, վոր մի անընդհատ շնչով ե արտասանվում (*ու, ձու, բուն, վարդ*)։ Յերբ վանկը, կամ վանկերի կապակցությունը նշանակություն ունի, **բառ** ե կոչվում։ Վանկերի թվին նայելով, բառերը լինում են՝ **միավանկ** յեվ **բազմավանկ**, վերջիններս էլ՝ յերկավանկ, յեռավանկ, քառավանկ յեվ այլն, նայած վանկերի թվին (*տուն, կատու, աշակերտ, սեղանատուն*...)։

§ 4. *Ա-սա, ա-րի, Ե-մին, ե-գուց, ի-ջավ, ի-մաս-տուն, ու-րախ, ու-տել։—Այս բառերի վանկերի բաժանումից յերևում ե, վոր կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ են կազմում, և կան հնչյուններ, վորոնք մենակ վանկ կազմել չեն կարող։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 4. Այն հնչյունները, վորոնք մենակ կարող են վանկ կազմել, կոչվում են **ձայնավոր** հնչյուններ. դրանք են՝ **ա, ե, ը, ի, ո, ու**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 5. Այն հնչյունները, վորոնք մենակ չեն կարող վանկ կազմել, այլ մենակ կամ ուրիշ բաղաձայնների հետ վորեվե ձայնավորի՝ առաջից կամ վերջից միանալով միայն կարող են վանկ կազմել, կոչվում են **բաղաձայն** հնչյուններ։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 1. Վորոշեցե՛ք հնչյունների թիվը հետևյալ հատվածի բառերի մեջ (օրինակ՝ դուք=3, զոհվեցիք=8 և այլն).*

*Դուք զոհվեցիք պայքարի մեջ որհասական,*
*անշահ սիրով ժողովրդի գործի համար.*
*ինչ ունեյիք՝ դուք բոլորը տվիք նրան,—*
*նրա պատվին, նրա կյանքին, ազատության։*

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Թաղման քայլերգ»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2. Հետեվյալ հատվածի բառերի մեջ ձայնավոր հնչյունների տակը գծեցե՛ք.

*Այսոր ցնծում ենք մենք,*
*այսոր ցնցում ենք մենք*
*աշխարհը հիմքից:*
*Հոկտեմբեր, մենք քո յերգն ենք,*
*Հոկտեմբեր, բռունցքված հին կյանքի դեմ:*
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Հոկտեմբերական»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 6. Հնչյունների նշանները կոչվում են **տառեր**: Հնչյուններն արտասանվում են, իսկ տառերը գրվում: Տառերը գրությամբ լինում են **փոքրատառ** յեվ **մեծատառ**: Տառերի ավանդական շարքը կոչվում է **այբբեն**: Մեր այբբենը ներկայումս հետեվյալ պատկերն ունի—Ա ա, Բ բ, Գ գ, Դ դ, Զ զ, Ե ե, Ը ը, Թ թ, Ժ ժ, Ի ի, Լ լ, Խ խ, Ծ ծ, Կ կ, Հ հ, Ձ ձ, Ղ ղ, Ճ ճ, Մ մ, Յ յ, Ն ն, Շ շ, Ո ո, Չ չ, Պ պ, Ջ ջ, Ռ ռ, Ս ս, Վ վ, Տ տ, Ր ր, Ց ց, Փ փ, Ք ք, Օ օ, Ֆ ֆ:

**Բացի այս տառերից՝ կան նայեվ** Ու ու, ՅԵՎ և **նշանագրերը. և գրվում է նայեվ՝** յեվ:

Տառերը կարող են գործածվել իբրև դասական թվականներ: Այս դեպքում գործ է ածվում մեր հին այբբենը և ստացվում հետևյալը.—1-ին—ա. 2-րդ—բ. 3-րդ—գ. 4-րդ—դ. 5-րդ—ե. 6-րդ—զ. 7-րդ—է. 8-րդ—ը. 9-րդ—թ. 10-րդ—ժ. 11-րդ—ժա. 12-րդ—ժբ. 20-րդ—ի. 30-րդ—լ. 40-րդ—խ. և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 3. ա) Կազմեցե՛ք ձեր խմբի աշակերտների՝ անունների, հայրանունների, ազգանունների ցուցակը:

բ) Գրեցե՛ք ձեր իմացած գավառների, գյուղերի, քաղաքների, յերկրների, գետերի, լճերի, ծովերի, կղզիների, լեռների անունները:

գ) Գրեցե՛ք ձեզ հայտնի հիմնարկների, լրագրերի, հանդեսների, գրքերի անունները:

դ) Շարադրեցե՛ք դիմումներ՝ ուղղված ձեր դպրոցի վարիչին, ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահին յեվ այլն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 7. Մարդկանց, քաղաքների, գյուղերի, յերկրների յեվ այլ աշխարհագրական անուններ, այլեվ գրքերի, լրագրերի, հիմնարկների յեվ այլն **հատուկ անուններ** ու քաղաքավարական գրության մեջ՝ Դուք, Ձեր, Ձեզ... յեվ պաշտոնի անունները դիմումների մեջ—**մեծատառ են գրվում**:



# III. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ա. ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

§ 5. *Գյուղից դեպի հյուսիս, յոթ կիլոմետր այն կողմ, նույնպես մի բարձրություն կա, վորի մյուս կողմից կրկին հարթավայր է սկսվում, ուր նույն բույսերն են աճում...*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 8. Յերկու ձայնավորի միացած արտասանությունը մի շնչով՝ կոչվում է **յերկբարբառ**: Յերկբարբառի ձայնավորներից մեկը պահում է իր ձայնավոր հատկությունը, իսկ մյուսը բաղաձայնի պաշտոն է կատարում յեվ կոչվում է **կիսաձայն**: Հայոց լեզվի մեջ կիսաձայն է յ հնչյունը, վոր բաղաձայնի պաշտոն կատարելով, միանում է ձայնավորների հետ սկզբից կամ վերջից, զանազան յերկբարբառներ է կազմում (այ, ոյ, եյ, իյ, ույ, յա, յո, յե, յի, յու), որինակ՝ *հայ, խոյ, թեյ, գույն, քարյա, յոթ, յեկ, գայի. իյ յերկբարբառ գործ է ածվում ոտար բառերի վերջը, որինակ՝ Վասիլիյ:*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 4. Հետեվյալ բառերի մեջ ընդգծեցե՛ք յերկբարբառները.

1. Պայծառ, գույն, գյուղ, հույս, մրջյուն, յերազ, յերկաթ, յերկայն, արյուն, հյուսիս, հյութ, խոյ, բույս, շշնջյուն, յոթ, վկայական, սենյակ, մանյակ, աղբյուր, աղյուսակ, հույն, փայտյա, արդյոք, Նյու-Յորք:

2. Ո՛, կույր է նա, ով չի տեսնում
յերկինք հասած կրակը թեժ.
յեկե՛ք, յեկե՛ք, ով սիրտ ունի՝
վողջակիզվող ու հրակեզ:

---

Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ
քո վոսկի հրում.
Բայց վառվի պիտի սիրտս մոխրացած՝
քո բոլոր գալիք արշալույսներում...
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ո՛, կույր է նա»)

## բ. յ ՁԱՅՆԱԿԱՊ

§ 6. *Նայել, վկայել, [illegible], քաղաքային, հռոմեյական, եյակ, էյի, էյութ[illegible], շոյել, գոյություն, ձիավոր, միակ, թիակ, Ասիա, Գաբրիել, [illegible]*

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная Библиотека
1040
Լ4299.Ց

ԿԱՆՈՆ 1. ա) ա, ե, ո ձայնավորներին մի այլ ձայնավոր հաջորդելու դեպքում՝ յերկու ձայնավորների մեջ մտնում է յ կիսաձայնը իբրև **ձայնակապ** *(այո, բոպեյական, Մարոյի)*։

*Ոտարազգի այն բառերը, վորոնց մեջ այդ դեպքում յ չի լսվում, գրվում են առանց յ-ի. որինակ՝ իդեա, իդեալիստ, իդեոլոգիա, Մորեա, բոա ոձ, Նաում և այլն։*

*բ)* ի ձայնավորին այլ ձայնավոր հաջորդելու դեպքում՝ յ ձայնակապը չի մտնում *(հիանալ, Իտալիա)*։

## Գ. Ը ՁԱՅՆԱՎՈՐԸ

§ 7. *Սկիզբ, սկսել, սպասավոր, ստանալ, ստորագրել, սթափվել, զգալ, զբոսնել, սփոփել, սքողել, շտապել։*

ԿԱՆՈՆ 2. սկ, սպ, ստ, սք, սփ, շկ, շպ, շտ, սթ, զբ, զգ սկսվող բառերի սկզբում կարճ ը է լսվում, բայց չի գրվում։

§ 8. *Դասընկեր, նախընթաց, զուգընթաց, վերընտրել, դյուրըմբռնելի, նորընտիր, հյուրընկալ, գրել, ջրել, զրկվել, բժիշկ, մկրատ, նկար, դմակ։*

ԿԱՆՈՆ 3. Բարդ բառերի մեջ, յերբ յերկրորդ բառն սկսվում է ը-ով, այդ ը-ն պետք է գրել *(դասընկեր)*։ Մնացած դեպքերում ը-ն կարող է լսվել, բայց չգրվել *(մկրատ)*։

§ 9. *Արամը գնաց, Արամը կարդում է, Արամը տեսավ. Արամն ասաց, Արամն ընկավ, Արամն իջավ, Արամն ուտում է, Արամն սկսեց, Արամն զգաց։*

ԿԱՆՈՆ 4. Բառավերջի ը ձայնավորը ն-ի յե փոխվում, յերբ հաջորդ բառը ձայնավորով կամ սկ, սպ, սթ, ստ, զգ, զբ, սք, սփ, շկ, շպ, շտ-ով է սկսվում։

## Դ. ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ՈՒ ՏՈՂԱԴԱՐՁ

§ 10. *Գը-րեց, գըր-կանք, մը-նաց, քաղ-ցըր, բար-ձըր, Մը-կըր-տիչ, դըպ-րոց, գըզ-գը-զել, ըս-կիզբ, ըզ-բոս-նել։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 9. Գրելիս տողի վերջում բառը չտեղավորելու դեպքում, **տողադարձ** ենք անում։

ԿԱՆՈՆ 5. Տողադարձի ժամանակ բառը պետք է կանոնավոր **վանկերի բաժանել** կամ **հեգել**։

ԿԱՆՈՆ 6. Տողադարձի ժամանակ յերկու ձայնավորի միջև գտնվող մեկ բաղաձայնը հաջորդ վանկն է անցնում *(ա-սա, ա-րի, գա-գան)*։



ԿԱՆՈՆ 7. Յերկու բաղաձայնից մեկը նախորդ վանկում է մնում, մյուսը հաջորդ վանկն է անցնում *(ապ-րի, ար-ձան, Գաս-պար)*։

ԿԱՆՈՆ 8. Յերեք բաղաձայնից յերկուսը նախորդ վանկում են մնում, իսկ յերրորդը հաջորդ վանկն է անցնում *(մարդ-կանց, զարթ-նել, փըրկ-վել, ջարդ-վել)*։

ԿԱՆՈՆ 9. Թե տողի վերջը մնացած յեվ թե հաջորդ տողն անցած վանկերի մեջ լսվող ը-ն գրվում է *(գը-րիչ, բը-ժըշ-կի, ըզ-գալ)*։

ԿԱՆՈՆ 10. Յերբ բարդ բառի յերկրորդ մասն ամբողջությամբ տակի տողն է անցնում, ը տառը չի գրվում *(դա-սա-գրքի, լրա-գրի, կարմրա-դրոշ)*։

*ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1. Որինակներ բերելով՝ ցույց տվեք, վոր* **բաղաձայններից առաջ ղ հնչյունը սովորաբար հնչյում է խ** *(ինչպես՝ յեղբայր, աղջիկ, կեղտ, գաղթել)* **յեվ գըրվում է ղ.** *բացառություն են կազմում միքանի բառեր, ինչպես՝ ախտ (հիվանդություն), բախտ, ապերախտ, զմրուխտ, ուխտ և այլն սակավաթիվ բառեր։*

**Բառը բարդվելու կամ ածանցվելու ժամանակ, յերբ յերկու բաղաձայնի միջից մի ձայնավոր սղվում է, կամ յերկու առանձին բաղադրիչ մասեր են միանում, խ բաղաձայնը կարող է ընկնել նայեվ ուրիշ բաղաձայններից առաջ,** *որինակ՝* **վախ** *բառից կազմվում է* **վախկոտ, փախ** *բառից՝* **փախչել** *և այլն։*

**2. Ն բաղաձայնից առաջ գրվում է ռ, իսկ մնացած բաղաձայններից առաջ՝ ր,** *ինչպես՝ 1) առնություն, լեռնային, գառնուկ, դառնալ, ամառնամուտ և այլն. 2) վարձ, խուրձ, կարծիք, մարդ, կարդալ և այլն։*

**3. Կրկնությամբ կազմված հետեվյալ տեսակի բառերի մեջ առաջին ռ-ն բաղաձայնից առաջ ընկնելով՝ ր-ի յե փոխվում,** *ինչպես՝ գռգիռ, թռթուռ, մռմուռ, սռսուռ, Վառվառե և այլն։*

*Այս տեսակի բառերը,* **նմանաձայնություն արտահայտելու դեպքում, կարող են ռ-ով յեվս գրվել.** *որինակ՝ ճռճռալ, գռգռալ, մռմռալ (կամ՝ ճըռճըռալ...)։*

**4. Ոտարազգի բառերի յեվ անունների սկզբում, ինչպես յեվ ն բաղաձայնից առաջ, գրվում է ռ, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ ր,** *որինակ՝ 1) ռուբլի, ռեզին, Ռոբերտ, Ռոզալիա. 2) դրամա, բյուրո, Բուխարին, Լերմոնտով։*

5. պ, կ, տ, ծ, ճ հնչյունները մ, ն, յերբեմն յեվ ր հնչյուններից առաջ հաճախ արտասանվում են բ, գ, դ, ձ, ջ. օրինակ՝ ամպ, ընկնել, ընտանի, հարկավոր, ճանճ։

6. Յերբ բ, գ, դ, ձ, ջ հնչյուններն ընկնում են ր, յերբեմն նայեվ ն, ղ բաղաձայններից հետո, սովորաբար արտասանվում են՝ փ, ք, թ, ց, չ կամ պ, կ, տ, ծ, ճ. օրինակ՝ սուրբ, վարգ, արջ, խուրձ, անգամ, կենդանի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 5. *Հետեվյալ բառերը գծիկներով բաժանեցե՛ք վանկերի յեվ դիմացը գրեցե՛ք՝ քանի՛ վանկ ե. Օրինակ՝ դաս-սա-րան=3 վ. (կանոն 6—10)։*

*1) Տետրակ, քաղաք, կարմիր, բաժակ, դանակ, յերեխա, ճանապարհորդ, յերիտասարդ, բժիշկ, գրիչ, դռնապան, մարդկություն, գործնական, յերգիչ, սանր, թանձր, դգալ, սպասել, ստանալ, բարություն, հիանալի, գոյություն, միակ, թևավոր, սևանալ, հյութառատ, սենյակ։*

*2) Հին, հաստաբուն խաղողենիների մեջ թաղնված վաճառատան դռների առաջ, խաղողաթփերի, շերիփուկի և չինական մանր վարդերի ցանցապատ ծածկոցի հովանու տակ, սեղանի մոտ գինու շիշն առաջներին, նստած եյին ներկարար Վինչեցցոն և փականագործ Ջիովաննին։*

*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Հեքիաթ»)*

## IV. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

### (Պարզ, բարդ, ածանցավոր.—արմատ, նախածանց, վերջածանց)

*§ 11. Հող, գործ—հող-ա-գործ. նավ, պետ—նավ-ա-պետ. քար, ժայռ—քար-ա-ժայռ. լուր, գիր—լր-ա-գիր. տիպ, գիր—տպ-ա-գիր. լույս, նկար—լուս-ա-նկար. բույս, կեր—բուս-ա-կեր. մատյան, դարան—մատեն-ա-դարան. ատյան, կալ—ատեն-ա-կալ. մատյան, գիր—մատեն-ա-գիր. վեպ, գիր—վիպ-ա-գիր. սեր, տենչ—սիր-ա-տենչ, կես, բաց—կիս-ա-բաց. բժիշկ, պետ—բժշկ-ա-պետ. ամիս, վերջ—ամս-ա-վերջ. լուծ, կից—լծ-ա-կից. լուր, գիր, վաճառ—լր-ա-գր-ա-վաճառ. մատյան, դարան, պետ—մատեն-ա-դարան-ա-պետ. աշխարհ, գիր, գետ—աշխարհ-ա-գր-ա-գետ. հեռու, գիր, տուն—հեռ-ա-գր-ա-տուն. գինի, գործ—գինե-գործ. վոսկի, զոծ—վոսկե-զոծ. վորդի, սեր—վորդե-սեր. տարի, մուտ—տարե-մուտ։ Ջուր, աղաց—ջրաղաց. ազգ, անուն—ազգ-անուն, յերկաթ, ուղի—յերկաթ-ուղի։*



ՍԱՀՄԱՆՈՒՄ *10.* **Բարդ** կոչվում են այն բառերը, վորոնք կազմված են յերկու կամ ավելի բառերի բաղադրությունից (*թանաքաման—թանաք և աման բառերից. հեռագրատուն—հեռու, գիր և տուն բառերից*)։

*10.* Բարդ բառի գլխավոր իմաստը յերկրորդ բաղադրիչ մասի մեջ է գտնվում (*թանաքաման—թանաքի* **աման**)։ Բացառություն են կազմում ոտար լեզուների նմանությամբ **արտ, մակ, գեր, մեջ** յեվ այլն բառերով կամ արմատներով կազմված բարդ բառերը, վորոնց թիվը մեծ չե. *օրինակ՝* ***արտասահման, մակբայ, գերբնական, միջազգային*** *և այլն։*

ԿԱՆՈՆ *11.* Բարդ բառերը կապվում են **ա** հոդակապով (*դաս-ա-գիրք*)։

ԿԱՆՈՆ *12.* Բարդ բառի յերկրորդ բաղադրիչ մասը ձայնավորով սկսվելու դեպքում **ա** հոդակապը չի դրվում (*դաս-ընկեր*)։ *Բացառություն են կազմում* **ամեն** *բառով բարդվածները —ամենաազնիվ, ամենաիմաստուն, ամենաօգտակար, ամենաուրախ, ամենաեյական և այլն։*

ԿԱՆՈՆ *13.* Յերբ բարդ բառի առաջին բաղադրիչ մասը վերջանում է **ի**, *այդ ի-ն միանալով* **ա** *հոդակապին, տալիս է* **ե** (*գինի, գործ—գինի-ա-գործ=գինե-գործ*)։

ԿԱՆՈՆ *14.* Բառն անելու ժամանակ վերջին փակ—այսինքն բաղաձայնով վերջացող վանկի՝

*ա)* **ե**-ն կարող է դառնալ *ի* (*վեպ, գիր—վիպ-ա-գիր*)։

*բ)* **ի** *և* **ու** կարող են **ը** դառնալ (*վոր չի գրվում*), *կամ դուրս ընկնել (սղվել) (ջուր աղաց— ջր-աղաց, գարուն, մուտ— գարնան-ա-մուտ. գիր, դարան—գր-ա-դարան)։*

*գ)* **յա** կարող է դառնալ **ե** (*մատյան, դարան—մատեն-ա-դարան, հրյա—հրեյական, քրիստոնյա—քրիստոնեյական։*

*դ)* **ույ** դառնում է **ու** (*բույս, բան—բուս-ա-բան*)։

*Բաց վանկի, այսինքն ձայնավորով վերջացող վանկի ո-ն դառնում է ոյ (Կարո—Կարոյի, գո—գոյական), ու դառնում է վ, օրինակ՝ կատու—կատվացեղ, ձու—ձվանման։*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ *6. ա) Կազմեցե՛ք բարդ բառեր հետեվյալ բառերից ու գրի՛ առեք.*

*Սար, լանջ.—անձրև, ջուր.—յերկիր, գործ.—դաշտ, վայր.—թանաք, աման.—գրիչ, աման.—ծաղիկ, աման.—բույս, առատ.—շոգի, մեքենա.—տարի, մուտ.—լույս, արձակ.—ջուր, աղաց.—հուր, վառ.—հուր, բուխ.—ատյան, կալ.—հոգի, առ.—կես, քաղ-*

գերի, վաճառ.— լույս, բաց.— վերջ, լույս.— իրիկուն, մուտ.— հեռու, գիր, տուն.—որ, գիր, մատյան.—յերկաթ, ուղի, գիծ.— բարի, գործ,—շոգի, կաթսա.— լուր, բեր.—սիրտ, կից.—բույր, շատ.—ճշմարիտ, սեր.—ձի, վարժ.—անասուն, պահ.—ժողովուրդ, սեր.—լեզու, գետ.—գույն, գեղ.—ամեն, ազնիվ.—բարի,արար.— յերկիր, չափ.—հանուր, հաշիվ.—բուն, գետ.—հանդես, տես.— լույս, նկարիչ, տուն.—ջուր, վեժ.—հոց, թուխ.—ջուր, կիր:

բ) Դիտեցե՛ք հետեվյալ տեսակի բարդ բառերը, վորոնք հոդակապ չունեն.

1. Այստեղ, այդտեղ, այնտեղ, այսպես, այդպես, այնպես, տանուտեր, տանտիկին, մեկմեկու, այսուհետև, այնուհետև (սըրանք անմիջապես կցված բառեր են):

2. Առուտուր, յերթ**եվ**եկ, յել**եվ**եջ, աղուհաց, կերուխում, յելումուտ, նիստուկաց, այլ**եվ**այլ (**յեվ**, ու շաղկապներով կցված բառեր):

3. Վայր**ի**վեր, գլխ**ի**վայր, խոչ**ընդ**ոտ (նախդիրներով կցված բառեր):

4. Զընգզընգալ, վըշվըշալ, թափթըփել, ծըռմըռել, քըմըռսել, խազմըզել (կրկնավոր բարդ բառեր կամ բազմապատկական բայեր):

Այսպիսի դեպքերում բառի արմատը կարող է՝

1. Նույնությամբ կրկնվել. որինակ՝ **զընգզընգալ** (զընգ-զընգ):

2. Արմատի ձայնավորը կարող է փոխվել. որինակ՝ թափ-**թըփ**ել (թափ-թըփ):

3. Արմատի բաղաձայնը կարող է փոխվել. ծըռ-**մըռ**ել (ծըռ-**մըռ**):

4. Արմատի թե ձայնավորը և թե բաղաձայնը կարող են փոխվել. որինակ՝ **խազմզել** (**խազ-մըզ**):

5. Մեծ-մեծ, տաք-տաք, վառ-վառ, տեսակ-տեսակ, մանր-մունր, ծակ-ծուկ, աման-չաման, գունդ ու կծիկ, ջարդ ու բուրդ, աս ու լիս, կեր ու խում (անջատ գրվող, ու շաղկապով կամ գըծիկով միացած բարդ բառեր):

գ) Ցո՛ւյց տվեք ու վերլուծեցե՛ք բարդ բառերը հետեվյալ հատվածների մեջ.

1) Յեվ արեվը ծիրանավառ և յերեկոն ծծմբաշունչ,
յերեկոն ու արեգակը արնափրփուր, հրդեհավառ.
կըտեսնեն, թե ինչպես ես դու կրում պատիժը անտրտունջ,



թե ինչպես լուռ կանշնչանան քո աչքերն ու դեմքը պայծառ:
Սև ամբոխը կրծքում պահած լոկ չարություն ոձագալար՝
իր ովկիանը ըմբոստ մահից առաջ լռին կխոնարհե
ու հարազատ մոր պես գթոտ, խանդաղատագին ու սիրաբար
քո անշունչ դին արյունաներկ դագաղի մեջ մեղմ կորորե...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Գլուխը»):

2) Ներքևում, ուր այլևս զառիվայր չկա և հարթ դաշտավայրն է փռվում, ուղիներն են անցնում գալարապտույտ, ուղիներն են անցնում ժանեման, իսկ այդ ուղիներով սայլերն են անցնում, կմախքի նման ցցած կողափայտերով:

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Արևը, հուրհրան արևը»)

3) Քաղաքում նոյեմբերի արևի տակ պսպղում եյին նվագափողերը պղնձե, լայն փողոցներում ծովացել եր բազմությունը, ալեկոծ դրոշները վե՜ր, բարձր: Թնդում եր քայլերգը:

(Ա. ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծառուն տղան»)

4) Վաղն այս կապտերիզ ջրանցքների ափերին
Կփռվի յերկիրը մեր նորաբաղձ,
Այս չլուտ գետափերին, այս չլուտ քարափներին
Հյուր կգա յերկիր մի նորաբարձր:
Ու կբարձրանան ջրանցքների ափերին
Յերկաթավորված գյուղերը մեր,
Հնադարյան այս խավար գիշերներին
Լուսեղեն գալիքն է գալիս նվեր...

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Ջրանցքների յերկաթե յերգը»)

§ 12. Տուն, **ան**տուն.—գործ, **ան**գործ.—ուշ, **ապ**ուշ.— գետ, **ա**գետ.—մարդ, **ա**մարդ.—հաս, **ա**հաս.—բախտ, **ապա**բախտ, **դժ**բախտ.—գույն, **դժ**գույն.—տես, չտես.—հաս, չհաս.—ձայն, **համա**ձայն:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 11. **Ան**, **ապ**, **ա**, **դժ** և **չ** մասնիկները, վորոնք առանձին վերցրած նշանակություն չունեն, բառերի սկզբից դրվելով՝ նրանց մի նոր նշանակություն են տալիս, կոչվում են **բացասական նախածանցներ**:

Նախածանցներից միայն **ապ** և **համ** մասնիկներն են **ա** հոդակապով միանում, յեթե բառը բաղաձայնով է սկսվում (**ա**պաբախտ, համ**ա**ձայն, բայց՝ ապերախտ, համերաշխ):

Սկզբից կամ վերջից մասնիկ ունեցող բառերը կոչվում են **ածանցավոր բառեր**:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 7. Կազմեցե՛ք բառեր՝ վերոհիշյալ նախածանցներով ու գրի՛ առեք։

Կազմեցե՛ք բառեր **համ** նախածանցով։

§ 13. Նավ, նավակ.—լիճ, լճակ.—տուն, տնակ.—Հայկ, Հայկակ.—հավ, հավիկ.—շուն, շնիկ.—տիկին, տիկնիկ,—Գուրգեն, Գուրգենիկ.—հորթ, հորթուկ.—ձագ, ձագուկ.—հայր, հայրիկ.—մայր, մայրիկ.—քույր, քույրիկ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 12. **Ակ, իկ, ուկ վերջածանցները ցույց են տալիս առարկայի փոքրությունը կամ փաղաքշական նշանակություն ունեն։**

Ցո՛ւյց տվեք ածանցները հետեվյալ հատվածում.

Բա ինչ անի կուզիկ Հակոն,
Բա ինչ անի կաղլիկ Գաբոն,
Հաց է ուզում ծերուկ Ափոն։
(«Պրոլետարական գրողներ», ԽՆԿՈ ԱՊԵՐ՝ «Հայ գյուղացի»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 8. Կազմեցե՛ք բառեր՝ **ակ, իկ, ուկ** նվազական վերջածանցներով։

Հ Ա Ր Ց.

Ի՞նչ նշանակություն են տալիս բառերին հետևյալ **ածանցները**.

1. **ակ, իկ, ուկ,** (Նավակ, Հայկակ, մկնիկ, Սուրիկ, ձագուկ)։
2. **ուհի,** (դուխտ և անուշ բառերն էլ—Հայկուհի, Հայկանդուխտ, Հայկանուշ)։
3. **ոց, անոց, արան. ստան** (ծաղկոց, խոտանոց, ճաշարան, ծառաստան, Հայաստան)։
4. **եղ, վետ** (համեղ, թիկնեղ, թիկնավետ)։
5. **իչ, ող, ան** (գրիչ, մատնիչ, մատնող, կռվան, սուտասան)։
6. **վոր, անի** (հնձվոր, գլխարկավոր, վոտավոր, յերկոտանի՝ գեղանի)։
7. **եղեն** (հողեղեն, վոսկեղեն, փայտեղեն, արծաթեղեն, մըսեղեն)։
8. **ենի, ի** (վայրենի, տանձենի, խողենի, տանձի, վայրի)։
9. **յան, ունի, ենց, ունց** (Գրիգորյան, արեվմտյան, Յերեվանյան, Արշակունի, Հայկունի, գեղունի, Զարենց, Ռուենց, Բակունց։



10. **ատ** (պոչատ, տերեվատ, կռնատ, գունատ)։
11. **ոտի** (ծակոտի, փորոտի, սնոտի)։
12. **երորդ, րորդ** (հինգերորդ, չորրորդ)։
13. **ում, ություն, ույթ, մունք** (ուսում, թաղում, սովորություն, սովորույթ, ուսմունք)։
14. **ուրդ, իկ, տի** (արձակուրդ, ժողովուրդ, խորհուրդ, ընթացիկ, լկտի, անջրտի)։
15. **երեն** (հայերեն, ռուսերեն)։
16. **ինց** (Մակինց)։
17. **լի** (ցանկալի, սիրելի)։
18. **ակի, ացի** (շեշտակի, հանկարծակի, հոգնակի, կանացի, առնացի, տեղացի) և
19. **ան, ապ, տ, դժ** նախածանցները (անտուն, ապուշ, տգետ, դժբախտ)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 9. Կազմեցե՛ք բառեր՝ հետեվյալ վերջածանցներով ու գրի՛ առեք.

Իչ, ող, վոր, անի, ոց, անոց, ուրդ, կի, ստան, վետ, եք, երեն, ուհի, ք, ուն, եղեն, յա, ենի, յան, ատ, ալին, ական, անք, գին, գույն, երորդ, յուն, կան, յալ, նոց, ույթ, ություն, որդ, ոտ, ուտ, ում, ցի, ունի, իք, ին, ինց, ան, ուստ, աստ, ոտի։

Հետեվյալ բառերի վրա **ակ, իկ ուկ** ածանցներից վո՞րը կավելացնեք.—շուն, հավ, ձու, արջ, գայլ, հորթ, խոզ, քույր, նավ, գավառ, առու, աղբյուր, ծաղիկ, վոտ, ձեռ, աչք, սիրտ, մարդ, վարդ, լուսին, աստղ, գետ, բլուր, լեզու, Լեվոն, Շուշան, արծիվ, կտուց, թաթ, գոմեշ, էշ, փուշ, զանգ, ջուր, փոս, ծով, լիճ, խնձոր, ձոր, թիթեռ, տատ, ծիտ, տաշտ, տետր, արեվ, ձուկ, կապույտ, կարմիր։

Ի՞նչ տարբերություն կա հետեվյալ բառերի մեջ.

Լեզվիկ—լեզվակ, խոզիկ—խոզուկ, մարդիկ—մարդուկ, սեվիկ—սեվուկ, կարմրիկ—կարմրուկ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 10. Համեմատեցե՛ք հետեվյալ բառերի նշանակությունը յեվ ցո՛ւյց տվեք նրանց կազմությունը.

Անտերեվ, տերեվոտ.—անպոչ, պոչատ,—անկուռ, կռնատ.—անգետ, տգետ.—անմարդ, տմարդ.—անտուն, տնազուրկ.—անսեր, սիրազուրկ.—անգույն, դժգույն.—անբախտ, դժբախտ.—անկամ, չկամ, դժկամ.—անուշ, ապուշ.—անխելք, խելազուրկ.—գրիչ, գրող.—մատնիչ, մատնող.—քաղաքային, քաղաքական.—

*ցեղային, ցեղական.—ծաղկոց, ծաղկանոց.--վոսկեղեն, հողեղեն, կանաչեղեն.—խնձորենի, վայրենի։*

§ 14. **Տուն**, *ան-***տուն**.— **գործ**, *ան-***գործ**.— **գործ**-*արան*, **գործ**-*ազուրկ*.— **գործ**-*ել*,— **գործ**-*իչ*.— **գործ**-*ուն-յա*.— **գործ**-*ող-ություն*.— **զարմ**-*անալի*,— **զարմ**-*ացք*.— **զզ**-*ուշ*.— **զզ**-*ալ*, **զզ**-*այուն*։

**Տուն** *և* **գործ** *բառերն այս ածանցների կամ բարդության ժամանակ փոխվեցի՞ն, թե վոչ։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *13*. Բառի այն մասը, վոր բոլոր ձևերի մեջ անփոփոխ մնում է, կոչվում է **արմատական բառ** (*յեթե առանձին գործ է ածվում, որինակ՝ վերևի որինակների մեջ* **տուն** *և* **գործ** *բառերը*), կամ **արմատ** (*յեթե առանձին գործ չի ածվում, որինակ՝ հիանալ բառի* **հի** *և* **զզալ** *բառի* **զզ** *արմատները, վորոնք առանձին գործածվել չեն կարող*)։ Այն բառերը, վորոնք վոչ բարդ են ու վոչ ածանցավոր, կոչվում են **պարզ** բառեր (*տուն, ջուր, ճանապարհ*)։

*Ցո՛ւյց տվեք բարդ յեվ ածանցավոր բառերը հետեվյալ հատվածների մեջ ու վերլուծեցե՛ք.*

*1) Գեղախոս թռչնոց յերգի փոխարեն*
*կլսես այնտեղ*
*ճախարակների ռնգային վորոտ*
*և խենթ փոկերի համերգը ահեղ.*
*այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն.*
*պաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն որ,*
*վարդի փոխարեն*
*ծորում, քամվում է արյուն սրտերեն,*
*և շուրջդ բոլոր*
*շոինդ ու ժխոր.*
*կտեսնես՝ ինչպես թանձրացած մխով*
*ծխնելույզները*
*յերկինք են ցցել ագահ յերախով*
*մրոտ պնչերը,*
*կարծես հրաշունչ վիշապի նման*
*ուզում են շնչել*
*ու իրենց քաշել*
*անհուն բարձունքից փայլուն աստղերը,*
*վոր նրանց թաղեն մշուշ ծխի մեջ.*



*կտեսնես շարված սգավոր ու խեղճ*
*արհեստանոցի աղյուս պատերը՝*
*խոնավ ու թաց-թաց,*
*կարծես բանվորի քրտինքով թրջված...*

(*ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Գործարան»*)

*2) Ներքևում գործարանն է, պղնձաձուլարանը։ Այնտեղ է, վոր զտվում է պղինձը և դառնում է մաքուր, դեղին։*

*Այնտեղ է աշխատում «Յեվրոպացին»։*

*Նա վճ՞րտեղացի յե կամ ի՞նչ ազգից։ Վոչվոք չգիտե։*

*Ի՞նչ է նրա անունը։ Վոչվոքի հայտնի չէ։*

*Մի որ նա յեկավ Ալլահվերդի և պղնձաձուլարանի վարպետը դարձավ։ Իսկ հետևյալ որվանից նա դարձավ բանվորների սիրելին։*

*Ահա նա աշխատում է, և ահա նրա քառասուն տարեկան դեմքը պղնձագույն է։ Հալված պղնձի՞ց է արդյոք, թե՞ բնականից։ Զգիտես։*

(*Մ. ԱՐՄԵՆ՝ «Յեվրոպացին»*)

*3) Նոյեմբերի արև որ եր, պայծառ, գուրեկան աշնան որ։ Քաղաքում նոյեմբերի արևի տակ պտտվում եյին նվագափողերը պղնձե, լայն փողոցներում ծովացել եր բազմությունը, ալեկոծ դրոշները վեր, բարձր։ Թնդում եր քայլերգը, ազմուկ կարմիր դրոշները վեր, բարձր։ Թնդում եր քայլերգը, ազմուկ կար, յերգ ու ուռռա, մեկը պատշգամբից գիլ ձայնով մեր վերելքն եր պատմում։*

(*ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծառուն տղան»*)

*4) Խասիկ. այսպես եյին կանչում կապուտաչք, շիկահեր աղջկան։ Նա հազիվ լիներ տասնյոթ տարեկան. Նիհար կազմվածքով, բարձրահասակ, գունատ եր, աչքերի տակ խոր փոսեր եյին իջել։ Բաց կապույտ թաշկինակի տակից շիկագույն մազերը փռվում եյին ճակատին։*

*Աշխատելիս աչքերը հուրհրում եյին, այտերը շիկնում. այդ ժամանակ առանց հոգնելու կարելի յեր յերկար նայել Խասիկի գեղեցիկ դեմքին....*

*Ամառվա առավոտ եր. արևը շուրթը դեմ արավ խոհանոցի պատուհանին։ Խասիկը վեր թռավ իր հնամաշ անկողնից, շորերը վրան գցեց, անփութորեն մազերը հավաքեց թաշկինակի մեջ ու գուլպերը թևը գցած՝ փողոց յելավ։*

(*ԱՐԱՔՍ՝ «Նոր հորիզոն»*)

5) Գողի նման—կասկածամիտ ու կծկված, ու չորեքթաթ—
Գաղտագողի լուռ սողում է ավազի մեջ մի սև գնացք.
Դուրս են նայում ինչ-վոր դեմքեր՝ զարհուրելի ու մտավախ.
Շուրջը՝ ավազ, շուրջը՝ խավար, շուրջը՝ գիշեր մի սևակնած:
Նա կանգ առավ ավազի մեջ վորպես մթին մի թշնամի,
Գետին իջան փըսփըսուկով մութ ստվերներ խորհրդավոր:
Նորից յելան, նորից իջան, փըսփըսացին կասկածամիտ:
Շուրջը՝ ավազ, շուրջը՝ խավար, շուրջը գիշեր մի դարավոր:

(ԱԼԱԶԱՆ՝ «Արյունոտ գիշերը»)

## ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### (Ամփոփում անցածի)

*ա) ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (տես գլ. 2-րդ):*

*Ընդգծեցե՛ք յերկբարբառները.*

Հյուսիսից փչում էր քաղցրաբույր զեփյուռը: Ձյունապատ սարերը փայլում էյին արեգակի ճառագայթների ներքո: Ճանապարհորդը մոտեցել էր գյուղին: Յուրաքանչյուր հարյուր քայլի վրա նա կանգ էր առնում, դյուրությամբ վայր բերում իր բեռը: Բնությունը հիանալի յեր. արևմուտքն արյուն էր կտրել. զեփյուռը շոյում էր արտ ու արոտ: Դեպի հարավ ձգվող հարթությունը հասնում էր բարձր լեռան ստորոտներին:

*բ) Յ ՁԱՅՆԱԿԱԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ա, ե, ո-ից հետո և ի ձայնավորի բացառությամբ (տես § 6, կանոն 1, 2).*

*Ընդգծեցե՛ք յ ձայնակապը.*

1. Ճանապարհորդը յերկար նայեց հիանալի տեսարանին. զեփյուռը շոյում էր նրա դեմքը: Քաղաքի կայարանը հետզհետե միախառնվում էր յերեկոյան մթնշաղի տակ քուն մտնող գորշ դաշտավայրի հետ:

2. Հինգ մայր ցամաքներն են՝ Յեվրոպան, Ասիան, Աֆրիկան, Ամերիկան և Ավստրալիան: Ասիան ու Ամերիկան բաժանված են Մեծ կամ Խաղաղ ովկիանոսով, իսկ Յեվրոպան և Ամերիկան՝ Ատլանտյան ովկիանոսով: Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան Յեվրոպայի պետություններից են:

3. Գաբրիելն ու Մանիան դպրոց էյին գնում. ճանապարհին պատահեցին Նատալիային: Յերեք ընկերները միասին զրուցելով, կատակներ անելով շարունակեցին իրենց ճանապարհը:



*գ) ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՄ ՀԵԳՄԱՆ ՈՒ ՏՈՂԱԴԱՐՁԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (տես կանոն 6—10):*

*Արտագրեցե՛ք—բոլոր բառերը գծիկներով վանկերի բաժանելով.*

Մայիսի յոթին, վաղ առավոտյան, յերբ լույսը նոր էր բացվել, գյուղացին բահն ուսին գնաց արտը ջրելու: Յերբ նա արշալույսի շողերի տակ տեսավ ալեծածան արտը, նրա սիրտը լցվեց ուրախությամբ:

Բնությունն այլևս քնած չէր. Թռչունների դայլայլը, առվակների խոխոջը հիացմունք էյին պատճառում մարդու:

*Դիտեցե՛ք վորոշ բառերի ուղղագրությունը հետևյալ հատվածների մեջ.*

1. Հինգերորդ դասից հետո դպրոցը դատարկվեց: Հովհաննեսն ու Աննիկը պայուսակներն առան, շտապեցին դեպի տուն: Յերբ փողոց դուրս յեկան, առջևի տան պատշգամբի վրա տեսան Մանիային.

— Մանիկ,— ձայն տվեց Աննիկը,— յերեկոյան ժամի յոթին չե՛կ մեզ մոտ՝ միասին պարապենք: Կգաս, հա:

— Լավ,— պատասխանեց Մանիան,— անպատճառ կգամ, աշխարհագրության գիրքն ու քարտեզներն էլ կբերեմ:

2. Դպրոցական խորհրդի նիստը տևեց չորս ժամ անընդհատ: Յոթերորդ խմբի դասախարակ ընտրվեց ընկեր Վարդուհի Սարգսյանը: Աշխորհրդի ներկայացուցիչները որակարգի մեջ էյին դրել դպրոցական կոոպերացիայի ու սեկցիոն պարապմունքների խնդիրը: Ծրագրվեց դպրոցի հանրօգուտ աշխատանքը:

5. Մաթեմատիկայի դասին կրկնեցինք զուգահեռականները, ուղղանկյուն յեռանկյունիները: Ուսուցիչը գոհ մնաց: Աշխարհագրության դասին անցանք արևադարձային յերկրների բուսականությունն ու կենդանական աշխարհը (ֆլորան ու ֆաունան): Հասարակագիտության դասին անցանք գյուղացիական շարժումները Ռուսաստանում: Կենսաբանության դասին՝ կենդանական ու բուսական բջիջների համեմատությունը:

6. Լեզվի դասին, Հովհաննես Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմը և Նար-Դոսի «Ինչպես բժշկեցին» պատմվածքն իրար հետ

համեմատելով, շարադրության ծրագիր կազմեցինք: Ուշադրության առարկա յեր՝ նախապաշարմունքի ազդեցությունը կուլտուրապես յետ մնացած մարդկանց վրա:

## ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 11. Ընդգծեցե՛ք նախածանցները յեվ վերջածանցները հետեվյալ բառերի մեջ (տես վորոշում 11, 12, վարժություն 9).

Գործիչ, գործունյա, գործունեյություն, անգործ, գործարան, գործավոր,—բախտավոր, դժբախտ, անբախտ.—գրիչ, գրող, գրավոր, անգիր.—գիտուն, տգետ, գիտնական, գիտակ, անգետ, գիտական.—դիտակ, դիտող, դիտարան, դիտանոց, դիտավոր, դիտում, դիտումնավոր.—կայուն, կայան, կայարան, անկայուն, կայունություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 12. Միեվնույն արմատից կազմեցեք միքանի բառեր ածանցներով.

Որ.—գործ, գործիչ, գործունյա, անգործ.—փորձ... վարձ, գիր, շարժ, լույս, տող, հայր, մայր, յերգ, գեղ, հաս, բախտ, բույժ, բույս, մուղ, լուր, սեր, վերջ, սկիզբ, սուտ, գութ, թափ, նիշ, հույզ, սույզ, բույր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 13. Արտագրեցե՛ք յեվ նշանակեցե՛ք պարզ, բարդ յեվ ածանցավոր բառերը՝ նշանակելով համապատասխան բառերի վրա պ (պարզ), բ (բարդ), ա (ածանցավոր):

Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին հանդիսավոր տոնակատարություն է լինում:—Մենք տոնակատար հանձնաժողովի ընտրությամբ եյինք զբաղված:—Զուգընթաց խմբերն աջակցում եյին մեզ:—Մենք դասընկերներով հանդիպակաց բլուրը բարձրացանք, դիտեցինք շրջակա լեռնաշղթաները, բարձրավանդակները, դաշտավայրը, ձորակները և մոտիկ քարաժայռերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 14. Կազմեցե՛ք բարդ բառեր հետեվյալ ձեվով (տես վարժություն 6 բ.).

ա) **Թափել, թափթփել.—ծռել, ծռմռել.**—չափել, խաղել, փոխել, ծակել, վազել, խշալ, զնգալ, քսել, կծել, պոկել, կցել, փորել, կապել, տզալ, ճնգալ, թլկալ, փայլել:



բ) **Մարդ-մուրդ.— աման-չաման.— մանր-մունր.**— հաց... ջուր... կլոր... ծակ... պարապ... ավալ... սեփ... փալաս... խաղ... ծուխ...

գ) **Տակն ու վրա.—տուն ու տեղ.**—ծառ ու... կեր ու... վեր ու... ներս ու... լաց ու... առ ու... անց ու... բաց ու... հավ ու... քար ու... մութ ու... որ ու... մեծ ու... լավ ու... չարն ու... տաք ու... ծանր ու... աս ու... կար ու... թուք ու... բաց ու... մի և...

դ) **Ահ ու դող.—ցիր ու ցան.**—լաց ու... գունդ ու... խոսք ու... սուր ու... տըղ ու... կահ ու... ջարդ ու... ահ ու... հալ ու... ձայն ու...

ՏԵՂԵԿԱՆՔ

Ծակել, ծակծկել.—փոխել, փոփոխել.—չափել, չափչփել.—փայլել, փայլփլել.—ճնգալ, ճընգճընգալ.—կապել, կապկպել.—կըցել, կըցմըցել.—կըծել, կըծմըծել.—զընգալ, զընգզընգալ.—վազել, վազվըզել.—թըլկալ, թըլկթըլկալ.—տըզալ, տըզտըզալ.—փորել, փորփըրել.—պոկել, պոկպըկել, քըսմըսել, խըշխըշալ:

Ծակ-ծուկ, հաց-մաց, ավալ-թավալ, փալաս-փուլաս, խաղ-մաղ, ծուխ-մուխ, ջուր-մուր, կլոր-մլոր, պարապ-սարապ:

Կեր ու խում, ներս ու դուրս, առ ու տուր, բաց ու խուփ, ծառ ու ճյուղ, վեր ու վար, լաց ու կոծ, անց ու դարձ, հավ ու ճիվ, քար ու կոշտ, մութ ու լուս, մի և նույն, բաց ու խուփ, թուք ու մուր, կար ու ձև, աս ու լիս, ծանր ու բարակ, տաք ու պաղ, չարն ու բարին, լավ ու վատ, մեծ ու փոքր, որ ու գիշեր:

Ջարդ ու փշուր, ձայն ու ծպուտ, հալ ու մաշ, կահ ու կարասի, տըղ ու վըղ, սուր ու թուր, խոսք ու զրույց, գունդ ու կծիկ, լաց ու կոծ:

Նախադասություններ կազմեցե՛ք, վորոնց մեջ գործածե՛ք վերոհիշյալ բառերը:

## V. ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԸ

§ 15. Գնալ, յերթալ.—մեկ, մի.—սևահեր, սևամազ.— շըրթունք, պռոշ.—այտ, թուշ.—հուր, կրակ:

**ՍԱՀՄԱՆՈՒՄ 14.** **Այն բառերը, վորոնք գրությամբ տարբեր են, իսկ իմաստով բոլորովին նույնն են, կոչվում են նույնանիշ բառեր, ինչպես վերեվի բառերը:**

§ 16. **Մեծ**, հսկա, ահագին, վիթխարի.—հպարտ, գոռոզ, սեգ.—գեղեցիկ, սիրուն, գեղանի.—ահռելի, սոսկալի, սարսափելի, զարհուրելի.—համարձակ, խիզախ, հանդուգն, ըմբոստ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 15. Այն բառերը, վորոնք գրությամբ տարբեր են, իսկ իմաստով բոլորովին իրար մոտիկ են յեվ գործածությամբ են տարբերվում, կոչվում են **հոմանիշ** բառեր, ինչպես վերևի բառերը։

*Ցո՛ւյց տվեք հոմանիշ բառերը.*

*Թռված, կախարդված, տարված այն յերկին՝*
*վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին*
*դեպի յերջանիկ մի ուրիշ աշխարհ,*
*անհայտ ու հեռու, անծանոթ, օտար...*
(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Դեպի անհունը»)

*..... Այն վայրերը լերկ ու բարբաղ,*
*վորոնք իրենց ծնված որից այրի եյին — մերկ-անապատ,*
*Այսօրից հետ հագնելու յեն սիրակարոտ հարսերի պես,*
*Ջուր-զարդարված խաս ու զումաշ, թավիշ, մետաքս, զառուզարբաբ։*
(Հ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Բոլշևիկ և Շիր-կանալը»)

*Գիշերը՝ մութ, գիշերը՝ սև, գիշերն անվերջ մռայլադեմ...*
*Ծովը հուզված ու վրդովված կրծոտում է ափերն իրա...*
*Գիշերը վոնց հսկա չղջիկ, կամ ահագին մի բու անդեմ...*
(ԱԼԱԶԱՆ՝ «Արյունոտ գիշերը»)

*...Վոր ծծում են քրտինքը խոնավ*
*Որերի, մշուշի, մուժի....*
*Անցնում է ծանր, դանդաղ.*
*Բեռը հրում է՝ գնա....*
*Բյուրավոր բանակներ չելան —*
*Վիթխարի, համարձակ, անահ...*
*Դրոշներ ծփացին արնավառ,*
*Դրոշներ՝ կարմիր, բոսոր....*
*Յեվ այսպես — յեկան, չելան դեմ-դեմի —*
*Բանակներ բազում ու բազմամիլիոն....*
*Աշուն է, անձրև, մշուշ.*
*Թաց, խոնավ — անձրևոտ քամի....*
*Կրում է — նո՞ր մի յերազ՝*
*Վիթխարի, անսահման, անծիր...*
(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)



*Դաշտը անծայր ու անսահման, լայնատարած*
*Հրակարմիր տարածվել եր նրանց առաջ։*
*Ճչում եր սուր, հուսակտուր, ու հուսահատ ձայնը նրա,*
*Վորպես անդարձ մահի մի լուր տարածվում եր դաշտի վրա։*
*Փչում եր մեղմ, մարմանդ մի հով՝ բարակ սուլում եր հարավեն։*
*Խավար է մեծ սիրտը նրանց, բայց խավարում անծայրածիր*
*Յերկինքնե՛ր կան կապուտաչյա, հորիզոննե՛ր՝ անծա՛յր, անծի՛ր։*
*Կրկեսի պես մի վիթխարի, խայտաբղետ, խայտանկար*
*Յեզերքի մոտ ճանապարհի յերևում եր քաղաքը քար...*
(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամբոխները խելագարված»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 15. *Հետևյալ բառերին հոմանիշներ դրե՛ք ու գրի առե՛ք.*

*Որ. պարզ, հստակ, ջինջ, վճիտ.— լայն,— կարճ,— փափուկ,— այժմ,— աշխույժ,— գետակ,— բույր,— տաք,— սառ,— վախ,— ուղի,— անիվ,— թռչել,— կոկել,— աղմուկ,— շշուկ,— նվագել,— քամի,— քաղցր,— յերիտասարդ,— մանուկ,— ուժեղ,— լաց,— ավերել,— ճառագայթ,— հիվանդ,— կռիվ,— լրագիր,— դպրոց,— խանութ,— ծախել,— անխիղճ,— զարմանալ,— բարձր,— փոքր,— մեծ,— մառախուղ,— նիհար,— դժգույն,— անհուն,— շոգի,— նվեր,— նստել,— նուրբ,— հով,— սեգ,— չքնաղ,— լույս,— փափագ,— ժպիտ,— կտրիճ,— ափսոս,— տխուր.— հառաչել,— հրաշալի,— չքանալ,— ընկղմել,— լեռ։*

*ՏԵՂԵԿԱՆՔ*

*Խորասուզվել,— հիանալի, սքանչելի,— անհայտանալ, կորչել,— ախ քաշել, հոգոց հանել,— անուրախ, թախծադեմ,— քաջ,— ավաղ,— ծիծաղ,— գեղեցիկ, աննման,— ցանկություն, իղձ, տենչ,— սուս, անխոս, անձայն, անմռունչ,— հպարտ, գոռոզ,— բազմել,— քնքույշ, բարակ, նազուք,— անսահման, անեզր,— գոլորշի,— վտիտ, լղար,— գունատ, սպրդնած,— մշուշ, մեգ, թուխպ,— ահագին, վիթխարի, հսկայական,— պստիկ, փոքրիկ,— վաճառել,— անողորմ, անգութ,— կրպակ,— ուսումնարան,— շող,— տկար,— պայքար, մարտ,— զորեղ,— կոծ,— յերեխա,— ընդարձակ,— կակուղ,— պինդ, կոշտ,— հիմա,— հոտ,— առվակ, առու, գետ,— առույգ, կայտառ, ժիր,— ջերմ,— յերկյուղ, ահ,— պաղ,— ակ,— սավառնել,— հղկել,— փափլոց,— ածել,— հողմ,— անուշ։*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 16. *Կարելի՞ յե ասել.*

**Մեծ** *մարդ, մեծ խելք,— վիթխարի մարդ, վիթխարի խելք,—*

տաք կռիվ, տաք խոսք,— ջինջ յերկինք, ջինջ խոսք,— լայն դաշտ, լայն հագված,— սիրուն դաշտ, սիրուն խելք,— մանր ավազ, մանր տուն,—խոշոր ժայռ, խոշոր աղմուկ,— մութ գիշեր, մութ մարդ, մութ մտքեր, մութ ամպ,— բարձր սար, բարձր միտք,—վսեմ գաղափար, վսեմ տեսարան, վսեմ ծաղիկ։

§ 17. Ակ (սայլի, աղբյուրի, մատանու),—փող (դրամ, փըչելու, հրացանի...),—մայր (ծնող, ծառ),—այր (մարդ, քարանձավ),—համար... տուն... կետ... գլուխ... վոտ... շունչ... խաղ... ժամ... հոտ... մաս... հարկ... գրող...

### ՏԵՂԵԿԱՆՔ

Այս տան **համարը**,—գնաց **տուն**, մի **տուն** վոտանավոր,—**կես** ձուկ, **կես** գնել,—**գլուխը** քորել, մի **գլուխ** վոչխար, մի գըլուխ շաքար,—**վոտը** ցավում է, մի **վոտ** է գնացել,— **շունչ** քաշել, հինգ **շունչ**,—**խաղ** անել, **խաղ** ասել,—**ժամի** վեցն է, **ժամ** գնացող,—անուշ **հոտ**, վոչխարի **հոտ**,—ձեռքի **մաս**, խաղողի **մաս**, **հարկ** տալ, տան **հարկ**, յերկրորդ **հարկ**,—նամակ **գրող**, հայ գը**րող**, **գրողը** տանի։

ՍԱՀՄԱՆՈՒՄ *16.* Այն բառերը, վորոնք գրությամբ նման են, իսկ իմաստով բոլորովին տարբեր, կոչվում են **նույնանուն** բառեր, ինչպես վերևի բառերը։

§ 18. Մեծ, փոքր,— խոշոր, մանր,— լավ, վատ,— բարձր, ցածր,—առողջ, հիվանդ,—թանգ, աժան,— լուսավոր, խավար,— հեռու, մոտիկ,—աջ, ձախ,—գեղեցիկ, տգեղ,—տաք, սառ,—հեշտ, դժվար։

ՍԱՀՄԱՆՈՒՄ *17.* Այն բառերը, վորոնք իմաստով բոլորովին հակառակ են, կոչվում են **հականիշ** բառեր, ինչպես վերևի բառերը։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 17.* *Գտեք հետևյալ բառերի հականիշները յեվ գրի առեք հետևյալ ձևով՝* **ուրախ—տխուր, հեռու—մոտ...**

*Ուրախ,—հեռու,—նեղ,—կուշտ,— ցիրջանիկ,— արագ,— մաքուր,—փակ,—նիհար,—ունևոր,— հարուստ,— մեղմ,— վառել,— ծանր,—դատարկել,—պարզ,— խորունկ,— ուղիղ,— հարթ,— բարի,—թաց,—սիրուն,—զվարթ,—վճիտ,—դառը,— խոնավ,— բարեկամ,—կանխիկ,—ձրի,—կորուստ,—օգուտ,— յելք,— վեր,— աջ,— առաջ,—հին,—լուրջ։*



### ՏԵՂԵԿԱՆՔ

*Դանդաղ, կամաց,—սոված, քաղցած,—անբախտ, դժբախտ,—լայն, ընդարձակ,— մոտիկ, մերձավոր,— տխուր,— կեղտոտ,— խիստ,—բաց,—գեր,—չքավոր,—աղքատ,—հանգցնել,— թեթևսոլիկ,—սեթևեթ,—մուտք,— նոր,— հետո,— ձախ, վար, ներքև,— թեթև,- ծուռ,— սաղր, ծանծաղ,— պարպել,— բարդ,— խորդուբորդ,—չար,—քաղցր,—պղտոր,—մռայլ,— տգեղ,— չոր,— վնաս,— գյուտ,—վճարովի,—ապառիկ,—թշնամի։*

*Ցույց տվեք* **հոմանիշ**, **նույնանիշ** *յեվ* **հականիշ** *բառերը հետևյալում.*

*1. Ասես մի ահագնադղորդ ջրվեժ է, վոր գահավիժում է լեռան կատարից. կատաղի առյուծներ, վորոնք մռնչում են, մի փոթորիկ, վոր վոռնում է, մի լեռ, վոր փուլ է գալիս, կաղկանձող գազաններ, սրտաճաք լացողների ճիչեր, յեռուն կաթսաներ, ճարճատյուն, շառաչյուն, շաչյուն, դղրդյուն, և այս ամենը մերթ իրար խառնված, միաժամանակ, մերթ իրար յետևից, բարձր ու ցածր, մերթ խուլ, մերթ սուր կերպով՝ գալարվում են, վեր բարձրանում անդունդից դեպի կատարը, ապա կրկին խորտակվում և գնում անդունդները։*

*2. Այդ աղմուկից, գոռում-գոչումից, ստորերկրյա վորոտմունքից շատ ավելի ճնշող, սասանեցուցիչ է յերբեմն վրա հասնող լռությունը. դա տևում է միայն մի վայրկյան, վորի ընթացքում մարդ շունչըբռնած, բերանաբաց, ամբողջապես լսողություն դարձած՝ սպասում է, թե ինչ մի աներևակայելի բան, մի վոչնչացնող վորոտմունք պիտի լսե. և սկսվում են հանկարծ իրար յետևից այնպիսի ձայներ, այնպիսի դղրդյուն, վոր ծընկներդ ծալվում են, դողում, և մարդ ջնջված ու յեթերացած կորչում է՝ չգիտես ուր։*

*(ՆԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Վեզուվի գագաթին»)*

*Ցույց տվեք հետևյալ խոսքերի մեջ՝*

*1.* **Սիրտ** *բառի նշանակությունը.— Նա* **սրտով** *մարդ է. Նա թույլ* **սիրտ** *ունի. Նա* **սիրտ** *չունի խոսելու. Քո* **սրտով** *թող լինի. Նա* **սիրտ** *չի անում այնտեղ գնալու.*

*2.* **Տուն** *բառի նշանակությունը.—Նա* **տուն** *չունի. մի* **տուն** *վոտանավոր ասա. Նրանք* **տնով** *գնացին. Նրա վերնա***տունը** *դատարկ է. Նա* **տուն** *դնող չի. Նա* **տան** *զավակ է. Նա* **տան** *կատու յե.*

3. **Աչք** բառի նշանակությունը.—Նրա **աչքը** ցավում է. սեղանի **աչք**. ջրաղացի **աչք**. **աչքով** տալ. մեկին **աչք** դնել. մեկին **աչքով** անել. **աչքդ** հանեցի. **աչքդ** լույս. **աչքդ** խավարի. **աչքից** ընկնել. մեկի **աչքը** մտնել. **աչքա**ծակ.

4. **Բերան** բառի նշանակությունը.—Նա փոքր **բերան** ունի. մի բան **բերան** անել. նա **բերան** պատռող է. նա **բերան** չունի. դու քանի՞ **բերան** ունես. վոր խոսում ես. նրանց տանը տասը **բերան** կա. գետի **բերան**. ձորի **բերան**.

5. **Գլուխ** բառի նշանակությունը.— մարդը **գլուխ** ունի. նա **գլխով** մարդ է. դու քանի՞ **գլուխ** ունես. մեկի հետ **գլուխ** դնել. հինգ **գլուխ** կով. մի **գլուխ** շաքար. սարի **գլուխ**. տարվա **գլուխ**. մի բան **գլուխ** բերել. մի բանի **գլուխ** կանգնել. նա **գլուխը** կորցրել է. ինձ **գլո՞ւխ** ես բերել. **գլխի՛ս** վրա. մի բան **գլխի** ընկնել. մեկին **գլուխ** տալ. յերդվում եմ նրա **գլխով**. նա մեր **գլուխն** է. դե **գլուխ** մի տանի. նա **գլուխ** ուտող է. **գլուխդ** թաղեմ. **գլուխդ** մեռնի. «խելոք **գլուխը**». **գլուխը** տաք մարդ. **վոտով-գլխով** կորչել. **գլուխը** քարը. **գլխակեր**. ձուկը **գլխից** կհոտի. **գլխումդ** նստեց. տարվա ես **գլխին**. են **գլխին**. մի **գլուխ** լաց է լինում։

## ՓՈՓՈԽՎՈՂ ՅԵՎ ԱՆՓՈՓՈԽ ԲԱՌԵՐ

Համեմատեցե՛ք ստորեվ դրված նախադասությունների մեջ գործածված միեվնույն բառերն իրար հետ յեվ տեսեք, թե այդ բառերից վորոնք են փոփոխվում յեվ վորոնք են անփոփոխ մնում բոլոր դեպքերում.

1. Աշոտը գիրքը վերցրեց։
2. Աշոտի գրքի կազմը կարմիր է, վերցրու **յեվ** դասը պատրաստիր։
3. Գիրքն Աշոտին տուր, թող գրքով պատրաստի դասը։
4. Աշոտից գիրքն առ, **վոր** դասը գրքով պատրաստես։
5. Մենք **հիմա** պատրաստում ենք մեր դասերը։
6. Դուք **հետո** կպատրաստեք։
7. Մեզնից մեկը **հիմա** պիտի պատրաստի։
8. **Հետո** մեկից կառնենք, կպատրաստենք։
9. **Ահա** գունավոր մատիտները, կապույտով **յեվ** կարմիրով նկարիր։
10. Աշոտով **միայն** չի լինի, մեկն **էլ** թող գա։
11. **Ահա** նա գալիս է, նրան տվեք, **վոր** պատրաստի։



### ՏԵՂԵԿԱՆՔ

**Փոփոխվեցին**.—Աշոտը (1-ին խոսք), Աշոտի (2), Աշոտին (3), Աշոտից (4), Աշոտով (10). գիրքը (1), գրքի (2), գրքով (3). վերցրեց (1), վերցրու (2). կարմիր (2), կարմրով (9). պատրաստիր (2), պատրաստի (3), պատրաստես (4), պատրաստում ենք (5), կպատրաստենք (6, 8), պիտի պատրաստենք (7). տուր (2), տվեք (11). առ (4), կառնենք (8). մենք (5), մեզնից (7). մեկը (7), մեկից (8) և այլն։

**Անփոփոխ մնացին**.—վոր (4, 11), հիմա (5, 7), և (2, 9), հետո (6, 8), ահա (9, 11) և այլն։

Լեզվի մեջ գործածվող բառերը բաժանվում են յերկու խմբի—**փոփոխվող** և **անփոփոխ** բառեր։

Փոփոխվող բառերը, նայած թե ինչ նախադասության մեջ ինչպես են գործածվում, զանազան կերպ փոփոխվում են։

Հայոց լեզվին հատուկ է այսպես կոչված անփոփոխ բառերն էլ **վորոշ դեպքերում** փոփոխել։

# VI. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

## Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՀՈԼՈՎՈՒՄԸ

### 1. ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՈՒՆԸ

§ 19. Մարդ, կով, ձի, շուն, հավ, ձուկ, քար, գող, վոսկի, վարդ, միտք, ուսում, յերգ,—այս բոլորն առարկաների անուններ են։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 18. Առարկաները լինում են՝ ա. **շնչավոր**, (մարդ, ձի), վորոնք իրենց կամքով շարժվում են, բ. **անշունչ** (քար, հող, բույս, ծառ, ծաղիկ), վորոնք իրենց կամքով շարժվել չեն կարող։

Այլև՝ ա. **նյութական** (մարդ, քար), վորոնք անկախ գոյություն ունեն յեվ մատչելի յեն մեր զգայարաններին, այսինքն՝ կարող ենք աչքով տեսնել, ականջով նրա ձայնը լսել յեվ այլն, բ. **վերացական** (միտք, ուսում), վոր անկախ գոյություն չունեն, բայց մտածվում են իբրեվ անկախ գոյություն ունեցող յեվ հասկացվում են մտքով։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 18. Հետեվյալ բառերից արտագրեցե՛ք նախ՝ շնչավոր, ապա՝ անշունչ առարկա ցույց տվող բառերը.

*Ձու, հավ, միս, ջուր, այծ, վոչխար, խոտ, կաթ, թիթեռ, մրջյուն, սայլ, ծուխ, քամի, հովիվ, կառք, վոտք, ծառ, կայծակ, ժամացույց, պղինձ, թանաք, մատիտ, ճանճ, մոծակ, ճիճու։*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 19. *Հետևյալ բառերից արտագրեցե՛ք նախ՝ շնչավոր, ապա՝ վերացական առարկա ցույց տվող բառերը.*

*Շաքար, ջուր, յերազ, տանձ, ոդ, միտք, կամք, տախտակ, արծաթ, խոտ, բարկություն, կրակ, տանջանք, վախ, ձյուն, ամառ, սառույց, ծուխ, բարություն, հանգստություն, աշխատանք, մուրճ, կացին, ույժ, հիվանդություն, աղ, ձմերուկ, համ, ախորժակ, փափագ, ձգտում, պետություն, ժամանակ, ամիս, տարի, ապակի, ավազ, գինի, ալյուր, տարածություն։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 19. Այն բառը, վորի ցույց տված գաղափարն անկախ գոյություն ունի *(մարդ, քար, ծաղիկ)*, կամ մտածվում է իբրև անկախ գոյություն ունեցող *(միտք, ուսում, գործ)*, կոչվում է **գոյական անուն** կամ՝ **անուն**։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 20. *Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցեք գոյական անունները.*

*Հասանք Հրազդանին։ Հեռվից յերևում եր Մասիսը կամ Արարատը։ Անցանք կամրջով։ Ահա «Արարատ» գործարանը, ուր գինի և կոնյակ են պատրաստում։ Մենք արդեն Յերևան քաղաքումն ենք։ Ահա քաղաքի հրապարակը, Կոմմունարների այգին, Աբովյան փողոցը։ Քաղաքը բավականին փոխվել է. միքանի տարի առաջ այդպես չեր։ Ահա մի շենք, վորի ճակատին գրված է՝ «Կինո Նաիրի», մի ուրիշը՝ «Կինո Պրոլետար». ահա «Խորհրդային Հայաստանի», «Մաճկալի», «Ավանգարդի» խմբագրատունը...*

*ՀԱՐՑԵՐ.*

*1. Բոլոր քաղաքներին Յերևան կարելի՞ չե ասել։*
*2. Բոլոր քաղաքներին քաղաք կարելի՞ յե ասել։*
*3. Բոլոր մարդկանց Արամ կարելի՞ չե ասել։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 20. Այն անունները, վորոնք կարող են տրվել թե մեկ առարկայի ու թե նրա տեսակին պատկանող բոլոր առարկաներին, կոչվում են **հասարակ** անուն *(օրինակ՝ մարդ, սեղան, ջուր, ձուկ, աստղ, վարդ)*։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 21. Այն անունները, վորոնք ցույց են տալիս մի վորոշ անհատ, միայն մի հատ առարկա առանձին վերցրած, իսկ



նրա տեսակին պատկանող բոլոր առարկաներին տրվել չեն կարող, կոչվում են **հատուկ** անուն *(որ.՝ Գրիգոր, Յերևան, Մասիս, Սևանա լիճ, Մարս)*։

ԿԱՆՈՆ 15. Հատուկ անունները մեծատառ են գրվում *(տես վորոշում 7)*։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 21. *Արտագրեցե՛ք յեվ հատուկ անուններն ընդգծեցե՛ք.*

*1. Անդրկովկասի նշանավոր քաղաքներն են՝ Թիֆլիսը, Բագուն, Բաթումը, Յերևանը. առաջինը Վրաստանի ՍԽ հանրապետության և, միևնույն ժամանակ, ամբողջ Անդրկովկասյան ՍՖԽ Հանրապետության մայրաքաղաքն է։ Թիֆլիսի միջով հոսում է Քուռ գետը։ Յերևանը Հայաստանի մայրաքաղաքն է, գտնվում է Հրազդանի ափին։ Բագուն Ադրբեջանի մայրաքաղաքն է, գտնվում է Կասպից ծովի մոտ, Ապշերոնյան թերակղզու վրա, վոր հարուստ է նավթով։*

*2. Յելան, գնացին Ուրալից դեպի Կարպատները լուրթ ու Կարպատներից մինչև Երզրում ու Երզրումից՝ Տրիպոլի, Հռոմ (Կ.Ա.)։*

*3. Յեվ ինչու միայն նա յերգի, միայն նա—Հովակիմը, Կարոն, Սողոմոնը, Մարգարը կամ մի բիթլիսցի, վանեցի Պողոսը, իսկ Իվանը, Յուսուֆը, Ջունկ-Ֆուն, վոր իրար ճանաչում են վաղուց (Կ. Ա.)։*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 22. *Գրեցեք 5-ական հատուկ անուններ՝* **տղամարդկանց, կանանց, պետությունների, քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների, ծովերի։**

## 2. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

§ 20. *Կով, կովեր.—ձի, ձիեր.—քար, քարեր.—միտք, մըտքեր։—Աշակերտ, աշակերտներ.—ճանապարհ, ճանապարհներ։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 22. Գոյական անունները ունեն յերկու թիվ՝ յեզակի յեվ **հոգնակի**։ Յեզակին ցույց է տալիս մի առարկա, հոգնակին ցույց է տալիս նույն տեսակի՝ մեկից ավելի առարկաներ։

ԿԱՆՈՆ 16. Միավանկ բառերից հոգնակի կազմելու համար ավելացնում ենք **եր** մասնիկը, իսկ բազմավանկ բառերին՝ **ներ** մասնիկը։

Միավանկ բառերի **ի**, **ու** ձայնավորները կարող են փոխվել **ը**-ի, վորը չի գրվում *(շուն, շներ.—տիկ, տկեր)*։

*Ցույց տվեք գոյականները յեվ նրանց թիվը.*

*Յելան, սահեցին հանկարծ*
*փողոցի ամառվա փոշում—*
*բյուրավոր բանակներ անահ—*
*զրահապատ բանակներ ուժի։*
*Շողացին սվիններ, սրեր,—*
*յերգեցին կրծքեր հզոր—*
*դրոշներ ծփացին արնավառ—*
*դրոշ կարմիր, բոսոր...*

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ամենապոեմ»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 23. *Կազմեցե՛ք հետեվյալ անունների հոգնակին.*

*ա) Քար, հող, կավ, նավ, ծակ, սար, վարդ, սոխ, բառ, տառ, կով, այծ, ճանճ։*

*բ) Գիրք, միրգ, միս, գիծ, կիր, թուր, ջուր, մուր, խուփ, գունդ, թուղթ։*

*գ) Ատամ, տախտակ, գրիչ, պարտեզ, աշակերտ, տարի, րոպե, վկա։*

*դ) Դասագիրք, սեղանատուն, օդանավ, լրագիր, հեռագիր, հողակույտ, մանկատուն, դասատուն, սևահող, ավազաթումբ, մորաքույր, քարաժայռ, անձրևաջուր։*

*ե) Ջրկիր, հացթուխ, մարդակեր, լուսաբեր, լրատու, դասատու, հեռախոս, թղթատար, յերկրագործ, զորավար, լրտես, հաստավիզ, հաստափոր, հանքափոր, սիրունատես։*

*զ) Ակ, ձուկ, մուկ, նուռ, դուռ, հարս, լեռ, բեռ, կուռ, գառ, թոռ, վոտ, փուռ, ձեռ։*

*է) Մարդ, կին, տղամարդ, անձ, զգացում, հուզում։*

*ը) Մսուր, խշտիկ, նշտար, կշեռք, կրակ, ճրագ։*

*թ) Աստղ, կոճղ, սանր, յեղր, վագր։*

*ժ) Լու, ձու, բու։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 23 ա. Այն միավանկ բառերը, վորոնք գրաբարում ն են վերջանում (*ձուկն, մուկն, գառն*), աշխարհաբարի հոգնակիում, վերականգնելով ն-ն, վերջանում են **ներ** (*ձկներ, մկներ, գառներ*)։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 23 բ. Այն բարդ բառերը, վորոնց **յերկրորդ բաղադրիչ մասը** միավանկ բառ է յեվ այդ միավանկ բառն իր բուն (գոյական) իմաստը պահում է, հոգնակիում վերջանում են **եր** (*դասագիրք—դասագրքեր*), իսկ յեթե այդ միավանկ բառն իր բուն իմաստը չի պահում, իր գոյական նշանակությունը կորցնելով՝ ածական իմաստով է գործածվում (*յերկրագործ—յերկիրը (հողը) գործող կամ մշակող*), այդ դեպքում հոգնակիում վերջանում է **ներ** (*յերկրագործներ, զորավարներ*)։ *Գաղտնավանկ բառերը (մըսուր, կո-ճըղ), վորոնց մեջ ը յե լսվում, բայց չի գրվում, հոգնակիում* **ներ** *են վերջանում, յեթե ը-ն սկզբի վանկում է լսվում (նըշ-տար=նշտարներ), մեծ մասամբ* **եր** *են վերջանում, յեթե ը-ն վերջին վանկում է լսվում (կոճըղ—կոճղեր)։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 23 գ. Միավանկ ու վերջացող բառերի (*լու, ձու, բու*) ու ձայնավորը, բացի սկզբնական ձեվից, մնացած բոլոր ձեվերում վ-ի յե փոխվում. *որինակ՝ ձվի, ձվից, ձվով, ձվում, ձվեր, ձվերի և այլն։*

*Յերկավանկ ու վերջացող բառերի ու-ն միայն յեզակիում է վ-ի փոխվում, իսկ հոգնակիում՝ վոչ. որինակ՝ կատու, կատվի, կատվից, բայց՝ կատուներ, կատուների...*

*Բազմավանկ ու վերջացող բառերի ու-ն յեզակիում կարող է փոխվել վ-ի, կարող է և չփոխվել (Ղամարլվից, Ղամարլուից) յերկուսն էլ գործածական են։*

### 3. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 21 ա) *Այստեղ մի* **գիրք** *կա...* **գրքեր** *կան։— Նա հիսուն կոպեկ* **գրքի** *տվեց...* **գրքերի** *տվեց։— Այս թուղթը* **գրքից** *է պոկել...* **գրքերից** *է պոկել։ Նա դասը* **գրքով** *է պատրաստում...* **գրքերով** *է պատրաստում։— Այդ բոլորը* **գրքում** *գրված է...* **գրքերում** *կան։*

բ) *Արշակի* **գիրքը** *կորավ...* **գրքերը** *կորան։ Նա սպասում է* **գրքին... գրքերին**։

*ՀԱՐՑ.*

*Գիրք բառն ի՞նչպես փոփոխվեց այդ խոսքերում։*

**Գիրք** (*գիրքը*), **գրքի** (*գրքին*), **գրքից**, **գրքով**, **գրքում**.— **Գրքեր** (*գրքերը*). **գրքերի** (*գրքերին*), **գրքերից**, **գրքերով**, **գրքերում**.—*ահա այն բոլոր ձեվերը, վոր կարող է ունենալ* **գիրք** *գոյական անունը աշխարհաբար հայոց լեզվում. այդ ձեվերը հինգ են։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 24. Գոյականները փոփոխվող բառեր են։ Գոյականի ամեն մի փոփոխված ձեվը կոչվում է **հոլով**։ Մի **բառ հոլովել** նշանակում է՝ ասել այն բոլոր ձեվերը, վոր նա կարող է ունենալ լեզվի մեջ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 24. Լրացրե՛ք հետևյալ նախադասությունները.

ա) **Քար** բառով.— Այստեղ մի ... կա: Նա կանգնած է ... մոտ: Նա ... հեռացավ: Այս պատը ... է շարած: Նա մնաց սար ու ...:

բ) **Քարեր** բառով.— Այստեղ ... շատ կան: Նա կանգնած է ... մոտ: Նա ... հեռացավ: Այս պատը մեծ-մեծ ... է շարած: Նա մնաց սարերում ու ...:

գ) **Ջուր** բառով.— Առուն ... կա (ի՞նչ կա): Նա գնաց ... (ինչի՞): Լվաց ... (ինչո՞վ): Հանեց ... (ինչի՞ց): Խեղդվեց ... (ինչո՞ւմ):

դ) **Ջրեր** բառով.— Մեր յերկրում լավ-լավ ... (ինչե՞ր) կան: Այս տեսակ-տեսակ ... (ինչերի՞ն) շշեր են պետք: Խմենք այս աղբյուրներից պաղ-պաղ ... (ինչերի՞ց): Նա կազդուրվեց ... (ինչերո՞վ): Տեսակ-տեսակ ձկներ կան այս ... (ինչերո՞ւմ):

ե) **Գինի** բառով.— Այս կարասում ... (ի՞նչ) կա: Նա սպասում է ... (ինչի՞): Նա հիվանդացավ ... (ինչի՞ց): Նա հարբել է ... (ինչո՞վ): Թաղվեց ... (ինչո՞ւմ):

զ) **Մարդ** բառով.— Սենյակում մի ... (ի՞նչ) կա: Նա հանդիպեց մի ...: Առա մի ...: Նրանց թիվը ավելի յե մի ...: Սիրտ չմնաց խեղճ ...:

է) **Մարդը** բառով.— Ահա յեկավ ... (ո՞վ): Յես սպասում եմ այն ... (ո՞ւմ): Ստացա քեզ ծանոթ ... (ումի՞ց): Այս բանը յեղավ այն ... (ումո՞վ): Էլ ուժ չմնաց իմ ծանոթ (ումնո՞ւմ):

ը) **Դուռ** բառով:— Այս շենքում մի ... փակ է: Նա կանգնած է ... առաջ: Այս դուռն ավելի լայն է այն ...: Յես ներս մտա հարավային ...: Նա մենակ կանգնած մնաց բաց ...:

թ) **Քույր** բառով.— Ահա յեկավ Գուրգենի ...: Հովհաննեսը մի գիրք ընծայեց իր ...: Արշակը նամակ ստացավ իր ...: Այս բանը յեղավ նրա ...:

ժ) **Մայր** բառով.— Նրա ... բարի կին է: Նա կարոտ է փաղաքշող...: Թաթևոսն անջատվեց ...: Նա պարծենում է իր ...: Վոչ իր հորումն է տեսել, վոչ էլ իր ...:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 25. Լրացրե՛ք հետևյալ նախադասությունները՝ համապատասխան փակագծերում դրված հարցերի.



(ինչո՞վ) կտրեց ... (ի՞նչը):— Մենք ... (ինչի՞ց) ... (ի՞նչ) շինեցինք:— Մեր ... (ինչո՞ւմ) մի ... (ի՞նչ) կա:— Յերեկ ... (ո՞վ) ... (ո՞ւմ) մոտից յեկավ ... (ո՞ւր):— Նա շատ է պարծենում իր ... (ումո՞վ):— Իմ ... (ովքե՞ր) շատ խելոք են:

§ 22. Ահա իմ առաջ մի գեղեցիկ **տուն**: Մտնում եմ ներս: Ընդարձակ **սենյակ**, լայն **լուսամուտներ**, մաքուր **հատակ**: Ահա **տանտերը**. բարձրահասակ մի **մարդ**...

Այս հատվածում գոյականները (թե յեզակի և թե հոգնակի) դրված են անփոփոխ, ուղիղ ձևով և պատասխանում են **ո՞վ** կամ **ի՞նչ, ովքե՞ր** կամ **ինչե՞ր** հարցերին:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 25. Գոյականի անփոփոխ, ուղիղ ձևը, վոր պատասխանում է **ով** կամ **ինչ** հարցերին, կոչվում է **ուղղական** հոլով:

§ 23. Մոտեցա **պատին**, նայեցի **ժամացույցին**. Հենց այդ **ժամին** պիտի գնայի, ներկա լինեի մի **ժողովի**:

Այս հատվածում գոյականները պատասխանում են **ինչի՞(ն)** կամ **ո՞ւմը** հարցերին ու դրված են **տրական** հոլով:

§ 24. Այդ բանն իմացա իմ **ընկերներից**՝ **Արշակից**, **Գրիգորից** ու **Սահակից**: Նրանք էլ **փայտից** են պատրաստել:

Այստեղ գոյականները պատասխանում են **ո՞ւմից, ինչի՞ց** հարցերին ու դրված են **բացառական** հոլով:

§ 25. **Սղոցով** կտրեցինք, **ուրագով** տաշեցինք, **սոսնձով** կպցրինք: Մենակ **Արամով** չէր լինի, միասին աշխատեցինք:

Այստեղ գոյականները պատասխանում են **ինչո՞վ, ումո՞վ** հարցերին ու դրված են **գործիական** հոլով:

§ 26. Այդ բանը **գրքում** կարդացի և **տետրակում** նշանակեցի:

Այստեղ գոյականները պատասխանում են **ինչո՞ւմ** հարցին ու դրված են **ներգոյական** հոլով:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 26. Վորովհետև գոյական բառը հայերենում հինգ ձև կարող է ունենալ կամ հինգ տեսակ կարող է փոխվել (§ 21)—հաշվելով նաև նրա ուղիղ ձևը, այդ պատճառով հայերենում հինգ հոլով կա, վորոնցից ամեն մեկը մի ձև է ցույց տալիս: Ուրեմն հոլովը հիմնվում է **ձևի** վրա. առանց ձևի հոլով չկա: Այդ հոլովները հետևյալներն են.

ա) **Ուղղական** հոլով, վոր ցույց է տալիս բառի ուղիղ, կըզընական ձևը և յեզակիում հատուկ վերջավորություն չունի,

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 24. Լրացրե՛ք հետևյալ նախադասությունները.

ա) **Քար** բառով.— Այստեղ մի ... կա: Նա կանգնած է ... մոտ: Նա ... հեռացավ: Այս պատը ... է շարած: Նա մնաց սար ու ...:

բ) **Քարեր** բառով.— Այստեղ ... շատ կան: Նա կանգնած է ... մոտ: Նա ... հեռացավ: Այս պատը մեծ-մեծ ... է շարած: Նա մնաց սարերում ու ...:

գ) **Ջուր** բառով.— Առուն ... կա (ի՞նչ կա): Նա գնաց ... (ինչի՞): Լվաց ... (ինչո՞վ): Հանեց ... (ինչի՞ց): Խեղդվեց ... (ինչո՞ւմ):

դ) **Ջրեր** բառով.— Մեր յերկրում լավ-լավ ... (ինչե՞ր) կան: Այս տեսակ-տեսակ ... (ինչերի՞ն) շշեր են պետք: Խմենք այս աղբյուրների պաղ-պաղ ... (ինչերի՞ց): Նա կազդուրվեց ... (ինչերո՞վ): Տեսակ-տեսակ ձկներ կան այս ... (ինչերո՞ւմ):

ե) **Գինի** բառով.— Այս կարասում ... (ի՞նչ) կա: Նա սպասում է ... (ինչի՞): Նա հիվանդացավ ... (ինչի՞ց): Նա հարբել է ... (ինչո՞վ): Թաղվեց ... (ինչո՞ւմ):

զ) **Մարդ** բառով.— Սենյակում մի ... (ի՞նչ) կա: Նա հանդիպեց մի ...: Առա մի ...: Նրանց թիվը ավելի չե մի ...: Սիրտ չմնաց խեղճ ...:

է) **Մարդը** բառով.— Ահա յեկավ ... (ո՞վ): Ցես սպասում եմ այն ... (ո՞ւմ): Ստացա քեզ ծանոթ ... (ումի՞ց): Այս բանը յեղավ այն ... (ումո՞վ): Էլ ուժ չմնաց իմ ծանոթ (ումնո՞ւմ):

ը) **Դուռ** բառով:— Այս շենքում մի ... փակ է: Նա կանգնած է ... առաջ: Այս դուռն ավելի լայն է այն ...: Ցես ներս մտա հարավային ...: Նա մենակ կանգնած մնաց բաց ...:

թ) **Քույր** բառով.— Ահա յեկավ Գուրգենի ...: Հովհաննեսը մի գիրք ընծայեց իր ...: Արշակը նամակ ստացավ իր ...: Այս բանը յեղավ նրա ...:

ժ) **Մայր** բառով.— Նրա ... բարի կին է: Նա կարոտ է փաղաքշող...: Թաթևոսն անջատվեց ...: Նա պարծենում է իր ...: Վոչ իր հորումն է տեսել, վոչ էլ իր ...:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 25. Լրացրե՛ք հետևյալ նախադասությունները՝ համապատասխան փակագծերում դրված հարցերի.

Ցես ... (ինչո՞վ) ... [illegible] յեկա ... (ո՞ւր):— Նա ...



(ինչո՞վ) կտրեց ... (ի՞նչը):— Մենք ... (ինչի՞ց) ... (ի՞նչ) շինեցինք:— Մեր ... (ինչո՞ւմ) մի ... (ի՞նչ) կա:— Ցերեկ ... (ո՞վ) ... (ո՞ւմ) մոտից յեկավ ... (ո՞ւր):— Նա շատ է պարծենում իր ... (ումո՞վ):— Իմ ... (ովքե՞ր) շատ խելոք են:

§ 22. Ահա իմ առաջ մի գեղեցիկ **տուն**: Մտնում եմ ներս: Ընդարձակ **սենյակ**, լայն **լուսամուտներ**, մաքուր **հատակ**: Ահա **տանտերը**. բարձրահասակ մի **մարդ**...

Այս հատվածում գոյականները (թե յեզակի և թե հոգնակի) գրված են անփոփոխ, ուղիղ ձևով և պատասխանում են **ո՞վ** կամ **ի՞նչ, ովքե՞ր** կամ **ինչե՞ր** հարցերին:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 25. Գոյականի անփոփոխ, ուղիղ ձևը, վոր պատասխանում է **ով** կամ **ինչ** հարցերին, կոչվում է **ուղղական** հոլով:

§ 23. Մոտեցա **պատին**, նայեցի **ժամացույցին**. հենց այդ **ժամին** պիտի գնայի, ներկա լինեյի մի **ժողովի**:

Այս հատվածում գոյականները պատասխանում են **ինչի՞(ն)** կամ **ո՞ւմը** հարցերին ու գրված են **տրական** հոլովով:

§ 24. Այդ բանն իմացա իմ **ընկերներից**՝ **Արշակից**, **Գրիգորից** ու **Սահակից**: Նրանք էլ **փայտից** են պատրաստել:

Այստեղ գոյականները պատասխանում են **ո՞ւմից, ինչի՞ց** հարցերին ու գրված են **բացառական** հոլովով:

§ 25. **Սղոցով** կտրեցինք, **ուրագով** տաշեցինք, **սոսնձով** կպցրինք: Մենակ **Արամով** չէր լինի, միասին աշխատեցինք:

Այստեղ գոյականները պատասխանում են **ինչո՞վ, ումո՞վ** հարցերին ու գրված են **գործիական** հոլովով:

§ 26. Այդ բանը **գրքում** կարդացի և **սեղանում** նշանակեցի:

Այստեղ գոյականները պատասխանում են **ինչո՞ւմ** հարցին ու գրված են **ներգոյական** հոլովով:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 26. Վորովհետև գոյական բառը հայերենում հինգ ձև կարող է ունենալ կամ հինգ տեսակ կարող է փոխվել (§ 21)—հաշվելով նաև նրա ուղիղ ձևը, այդ պատճառով հայերենում հինգ հոլով կա, վորոնցից ամեն մեկը մի ձև է ցույց տալիս: Ուրեմն հոլովը հիմնվում է **ձևի** վրա. առանց ձևի հոլով չկա: Այդ հոլովները հետևյալներն են.

ա) **Ուղղական** հոլով, վոր ցույց է տալիս բառի ուղիղ, ըսկզբնական ձևը և յեզակիում հատուկ վերջավորություն չունի,

*իսկ հոգնակիում վերջանում է* **եր** *կամ* **ներ**, *օրինակ՝ մարդ, ձի, կով, հող, ջուր, չերկիր, մարդիկ, ձիեր, կովեր, հողեր, ջրեր, չերկըրներ։*

*բ)* **Տրական** *հոլով, վոր չեզակիում ունի հետևյալ վերջավորությունները.*

*1)* **ի** *(կովի, ջրի, աշակերտի, լճի) կամ* **ին** *(կովին. ջրին, աշակերտին, լճին—***ն** *հոդով—տես § 27, 28, 29, վորոշում 27—30։*

*2)* **ու** *(գինու, ձիու, մատանու, սիրելու) կամ* **ուն** *(գինուն ձիուն, մատանուն, սիրելուն—***ն** *հոդով)։*

*3)* **ան**, **վան**, **յան** *(դռան, լեռան, տարվան, փողվան, չարության, արյան)։*

*4)* **ոջ** *(քրոջ, կնոջ, տիրոջ)։*

*5)* **որ** *(հոր, մոր, յեղբոր)։*

*6)* **ց** *(միայն հոգնակիում—մերոնց, ձերոնց, վոմանց, Գրիգորենց)։*

*Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 1. Համապատասխան տրական հոլովի չեզակի թվի վեց վերջավորությունների՝ վեց տեսակի հոլովում կա (տես ներքևում «Հոլովումների պատկերը»)։*

*գ)* **Բացառական** *հոլով, վոր վերջանում է* **ից**, **ուց** *(կովից, լճից, գինուց, վոսկուց)։*

*Բացառական հոլովը վորոշ ասույթներում վերջանում է* **է**, *օրինակ՝ չերկրե չերկիր, քարե քար, ծովե ծով և այլն։*

*դ)* **Գործիական** *հոլով, վոր վերջանում է* **ով** *(լճով, գինով, վոսկով)։*

*Գործիական հոլովը կարող է վերջանալ նաև* **բ**, *օրինակ՝ բարությամբ, չարությամբ.—այս դեպքում* **բ**-*ից առաջ* **ն** *հընչյունը* **մ**-*ի չի փոխվում—բարությանբ=բարությամբ։*

*ե)* **Ներգոյական** *հոլով, վոր վերջանում է* **ում** *(լճում, գինում, վոսկում)։*

*Ծ ա ն ո թ ու թ յ ու ն 2.—***Անձնավորություն ցույց տըվող բառերը** *(մարդ, կին, աշակերտ, չերգիչ և այլն)* **ում** *վերջավորությամբ ներգոյական, սովորաբար, չեն գրվում. այդ բառերի ներգոյականը կազմվում է տրական հոլովից՝* **մեջ** *բառն ավելացնելով (մարդու մեջ, կնոջ մեջ և այլն)։*



## ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

### I

| | **Եզակի** | | **Հոգնակի** | |
|---|---|---|---|---|
| **Ուղղ.** | հող | **հողը** | հողեր | **հողերը** |
| **Տր.** | հողի | **հողին** | հողերի | **հողերին** |
| **Բաց.** | հողից | (հողիցը) | հողերից | (հողերիցը) |
| **Գործ.** | հողով | (հողովը) | հողերով | (հողերովը) |
| **Ներգ.** | հողում | (հողումը) | հողերում | (հողերումը) |

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 26. Հոլովեցե՛ք հող բառի նման հետեվյալ բառերը.*

*Քար(ը), ծով(ը), ջուր(ը), կով, այծ, տետրակ, գլուխ, խըրճիթ, բանվոր, ուսուցիչ, ճանապարհ, գործարան, դասագիրք, չերգիչ, գրատախտակ, սևահող, լրագիր, հեռագիր, հայթուխ, ջըրկիր, ջրվեժ, Վարդան, Աշոտ, պարտեզ, լույս, ուժ։*

### II

| | **Եզակի** | | **Հոգնակի** | |
|---|---|---|---|---|
| **Ուղղ.** | գինի | գինին | գինիներ | գինիները |
| **Տր.** | գինու | գինուն | գինիների | գինիներին |
| **Բաց.** | գինուց | (գինուցը) | գինիներից | (գինիներիցը) |
| **Գործ.** | գինով | (գինովը) | գինիներով | (գինիներովը) |
| **Ներգ.** | գինում | (գինումը) | գինիներում | (գինիներումը) |

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 27. Հոլովեցե՛ք գինի բառի նըման հետեվյալ բառերը.*

*Մատանի(ն), կաշի(ն), ձի, թի, վոսկի, հոգի, տարի, գոտի, գարի, մարդ, վայրենի, խնձորենի, կաղնի, խոզենի, գեղանի, Անի, Վանի, սիրելի, սեր։*

## III

| | Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | փուռ | փուռը | փռներ | փռները |
| Տր. | փռան | (փռանը) | փռների | փռներին |
| Բաց. | փռից (փռնից) | (փռիցը) | փռներից | (փռներիցը) |
| Գործ. | փռով (փռնով) | (փռովը) | փռներով | (փռներովը) |
| Ներգ. | փռում (փռնում) | (փռումը) | փռներում | (փռներումը) |

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 28. Փուռ բառի նման հոլովեցե՛ք.

Ձուկ, մուկ, լեռ, կուռ, դուռ, նուռ, գառ, ջիղ, թոռ։— Ուսում, անկում, թաղում, բացում, բորբոքում, զտում, վճարում, ձուլում։— Գոյություն, միություն, արյուն, անկյուն։— Գարուն, ամառ, աշուն, ձմեռ։— Որ, շաբաթ, ամիս, տարի, վաղը, յերեկ, կեսոր, իրիկուն, հերու, հիմա, կիրակի։

## IV

| | Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | քույր | քույրը | քույրեր | քույրերը |
| Տր. | քրոջ | քրոջը | քույրերի | քույրերին |
| Բաց. | քրոջից | (քրոջիցը) | քույրերից | (քույրերիցը) |
| Գործ. | քրոջով | (քրոջովը) | քույրերով | (քույրերովը) |
| Ներգ. | (չունի) | — | (քույրերում) | — |

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 29. Քույր բառի պես հոլովեցեք.

Մորաքույր, հորաքույր, կին, տիկին, տանտիկին, ընկեր, տեր, տանուտեր, աներ։

## V

| | Եզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | յեղբայր | յեղբայրը | յեղբայրներ | յեղբայրները |
| Տր. | յեղբոր | յեղբորը | յեղբայրների | յեղբայրներին |
| Բաց. | յեղբորից | (յեղբորիցը) | յեղբայրներից | (յեղբայրներիցը |
| Գործ. | յեղբորով | (յեղբորովը) | յեղբայրներով | (յեղբայրներովը) |
| Ներգ. | (չունի) | — | (յեղբայրներում) | — |

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 30. Յեղբայր բառի պես հոլովեցե՛ք.

Հայր, մայր, նախահայր, նախամայր, հորեղբայր, մորեղբայր, սանահայր, սանամայր։



## VI

| | Հոգնակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղ. | մերոնք | Ասոյենք |
| Տր. | մերոնց(ը) | Ասոյենց(ը) |
| Բաց. | մերոնցից(ը) | Ասոյենցից(ը) |
| Գործ. | մերոնցով | Ասոյենցով |
| Ներգ. | (չունի) | (չունի) |

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 31. Վերոհիշյալ բառերի պես հոլովեցե՛ք.

Ձերոնք, իմոնք, քոնոնք, պապոնք, տատենք, հերանք, Ներսեսենք, վոմանք, ումոնք, վորոնք։

ՀԱՐՑ.

Ի՞նչպես կհոլովեք (յեզակի և հոգնակի)

1. Մուր, ջուր, սուր, թուր, հուր։
2. Գիր, կիր, բիզ, ցից, գիծ։
2. Կես, եշ։
4. Մակու, Բագու, դակու, բու, լու, ձու։
5. Ղամարլու, Բաշնալու, Ուլխանլու։
6. Կարկուտ, բրուտ, մռութ, յերգիչ, Մկրտիչ, գրիչ, սիրտ։
7. Անձրևաջուր, քարաբլուր, շղագիր, զրահակիր, կուպր։
8. Ասո, Մկո, Գևո, Սաքո, Կարո։
9. Յերգչուհի, Հայկուհի։
10. Լրատու, հարկատու, վերարկու։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 32. Արտագրեցե՛ք յեվ գոյականի վերեվ նշանակեցե՛ք իր հոլովի սկզբնատառը (Ու. Տ. Բ. Գ. Ն).

1. Կապույտ յերկնքով ամպեր են սահում։ Արևի ճառագայթները սփռվել են սարերում ու ձորերում։ Դպրոցում պարապմունքներն արդեն սկսվել են։ Մեր դասարանի աշակերտներից վոմանք բացակա չեն։ Մենք դպրոց ենք յեկել՝ գրքերով, տետրակներով, դասական բոլոր պիտույքներով։ Մեր ընկերներից՝ Թադևոսը, Հովհաննեսը, Գաբրիելն ու Աննիկը չեն բերել իրենց պիտույքները։

2. ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Պրագի, Բեռլինի գործավոր թաղերում,
Լոնդոնի, Պարիզի և Կոպենհագենի,
բյուրավոր մուրճեր ծանրորեն զարկին.
«Լենինը մեռավ, մեծ ընկեր Լենին»։

Վառվում են քաղաքներ՝ Մոսկվա ու Վիեննա,
Բոմբեյ, Կապշտադ՝ դառնագին սրտով.
վողբը պոռթկում է վշտի անդունդից.
«Լենինը մեռավ, մեծ ընկեր Լենին»։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ)

3. Հեղեղատները
ժայռեր են պոկում լեռնալանջերից,
և թնդյուններով, դղրդյուններով,
վորոտումներով և բոմբյուններով
վար են գլորվում ժայռերն ամեհի,
փորում են հողը,
ծառեր են քաշում,
ավեր տարածում։
Բայց ահա քամին դիպչում է ծովին...
ծովը նախ մեղմիկ մրմունջ է հանում,
տրտունջ է հանում,
հետո հուզվում է տակավ առ տակավ,
և բողոքում է, և բղավում է խռովուն ձայնով.
ապա՝ կատաղած՝ փքվում է, ուռչում,
թափահարում է բաշը փրփրած,
հազար ու հազար քաղցած վագրերի
ահեղադղորդ մռնչյուններով զարկում է ափին։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ապստամբություն»)

## 4. ԱՌԱՎՈՏ

Նորից արևն ելավ, նորից վառեց կրակ,
Նորից հնչեց կարմիր զորանոցում թմբուկ,
Նորից բացվեց ահա մեր սարերի վրա
Խորհրդային ազատ առավոտը խնդուն։
Մեր զավոդի դռան հազար ուրախ աչքեր,
Հազար ուրախ դեմքեր բանվոր ընկերների.
— Մենք պատրաստ ենք, յեկանք՝ յերբ սուլիչը կանչեց,
Յերբ արևը բացվեց ազատ մեր լեռներին։
Նորից վառ-վառ աչեր, նորից հայացքներ տաք
Նորից կաշվե բաճկոն, նորից մաշված կեպի,
Առավոտվա պես վառ ու արևից էլ բարկ —
Այդ մեր բանակն է կուռ, պատրաստ աշխատանքի։



Ջա՜ն, մեր բանակը կուռ, մեր կրծքերը յերկաթ,
Բետոնի պես ամուր մեր բանակը կարմիր,
Ջա՜ն, մեր ձեռները կոշտ, մեր ճակատը հպարտ—
Չի կարող մեզ ընկճել և վոչ մի թշնամի...

(ՑԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Գրակ. դասընթաց», ԱԼԱԶԱՆ՝ «Առավոտ»)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 33. Արտագրեցեք յեվ փակագծերում դրած գոյականները հոլովեցեք՝ իմաստի համապատասխան.

Արամը մոտեցավ իրենց տան ... (դուռ)։ Բարձր ... (լեռ) ստորոտում մի գյուղ կա։ Մենք գնացինք... (ձուկ)։ Նա պատահեց իր... (հայր և մայր)։ Յես իմ ... (քույր) նամակ ստացա։ Հոկտեմբերը... (աշուն) ամիսներից է։ Մենք սովորում ենք ... (դպրոց)։ Այս ճանապարհն անցնում է... (սարեր և ձորեր)։ Իմ... (յեղբայր) մի գիրք ստացա։ Դու կոտրեցիր... (գինի) բաժակը։ Հիվանդը... (տաքություն) մեջ է։ Մենք գրում ենք... (գրիչ և մատիտ)։ Մեր ... (գրքեր) նկարներ կան։ Դասարանի ... (ջերմություն) աստիճանը բարձր է։ Մենք յեկանք ... (կառք)։ Այս տունը բարձր է ձեր ... (տուն)։ Հայրս այժմ գտնվում է... (քաղաք)։ Քամին փչում է ... (լեռներ)։ Գնա այս ... (ճանապարհ)։ Սևանա ... (լիճ) շատ ձկներ կան։ Նա քնել է աջ... (կուռ) վրա։ Սերոբը տնքում է ծանր ... (բեռ) տակ։ Այդ... (նուռ) գույն ունի։ Բեր ... (գինի և ողի) բաժակները։ (Բուրդ)... գուլպա պատրաստեցին։ Գնած իրերը փաթաթեց ... (թուղթ)։ Զգուշացիր քացի տվող ... (ձի)։ Ո՞վ չգիտե ... (գումարում) գործողությունը։ Բոլորդ ներկայացեք բժշկական ... (հետազոտում)։ Ամեն որ... (յեղանակ) որագիր կազմեցեք։ Չափեցեք ջրի... (ջերմություն) աստիճանը։ Մուկը վախենում է ... (կատու)։ Ճուտիկը դուրս յեկավ ... (ձու)։ (Առու) ... ափին մի ուռի կա. վորի ... (ստվեր) հոտաղները հանգստանում են ... (ամառ) շոգին։ Ուրբաթ... (որ) դասերը պատրաստել եմ, միայն... (թվաբանություն) դասից յերկու խնդիր է մնում։

## ՀՈԴԵՐ

§ 27. Աղջի՛կ, Վարդիշա՛ն, թե հոգիդ սիրես,
մի զարիդ ցցիր, տե՛ս՝ ինչ է ասում.
աչքս խավարի, տեսիլք դառնամ յես,
տեսիլք եմ տեսել գիշերս յերազում։

*Մի գարիգ գցիր, թե վորդով խնդաս,*
*ես յերազն իսկի յես լավ չեմ փորձել...*
*Անբան գառները մութ ձորի միջին,*
*խաղ եյին կանչում ու ձենով լալիս:*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *27.* Գոյական անունների կամ իբրև գոյական անուն գործածվող բառերի վերջը դրվող **ս**, **դ**, **ն** *(*կամ **ը***)* մասնիկները **հոդեր** են կոչվում:

§ *28. Գիշերս (***այս** *գիշեր) շատ անձրև յեկավ. գյուղիս (***այս** *գյուղի) բանն էլ կորվի. վերջին որերս (***այս** *վերջին որերը) միշտ այսպես է...*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *28 ա.* **ս** հոդը, վոր դրվելով անվան վերջը, **այս** ցուցականի իմաստն է ավելացնում, կոչվում է **ցուցական** հոդ:

*Յերբ բառի վրա ստացական* **այս** *ցուցական վերադիր է դրված, այդ դեպքում* **ս** *ցուցական հոդ չի դրվում:*

§ *29. Յերբ տեղ հասանք, յերկուսս (***մենք** *յերկուսով) մընացինք, յերեքդ (***դուք** *յերեքով) գնացիք: Մնացողներս (***մենք** *մնացողներս) էլ չիմացանք, թե գնացողներդ (***դուք** *գնացողներդ) ուր գնացիք*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *28 բ.* **ս**, **դ** հոդերը, վորոնք դրվելով բառերի վերջը, **յես**, **դու**, **մենք**, **դուք** բառերի նշանակությունն են ավելացնում յեվ այդպիսով բառին առաջին կամ յերկրորդ դեմքի նշանակություն տալիս, կոչվում են **դիմորոշ** հոդեր:

§ *30. Ե՜յ, հին ծանոթներ, եյ, կանաչ սարեր,*
*ահա ձեզ տեսա ու միտս ընկան,*
*առաջս յեկան յերջանիկ որեր...*

*—Վախենում եմ յես... ղամեդ տեղը դիր...*
*սիրտս դողում է տերևի նման...*
*Մոսի ջան, Մոսի, գլխովդ շուռ գամ...*

*—Արտասվելով, լալով եդպես*
*յետ չես դարձնի էլ գերիդ,*
*ինչքան իզուր հանգցնում ես*
*ջահել կրակն աչքերիդ:*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)*



ՍԱՀՄԱՆՈՒՄ *29.* **ս**, **դ**, **ն** *(***ը***)* հոդերը դրվելով բառի վերջը յեվ նրան ավելացնելով **իմ**, **քո**, **իր**, **մեր**, **ձեր**, **նրանց** ստացականների նշանակություն, կոչվում են **ստացական** հոդեր: *Յերբ բառն ունի* **իմ**, **քո**, **իր** *(յուր),* **մեր**, **ձեր**, **նրանց** *ստացական վերադիրներից մեկնումեկը, այդ դեպքում ավելորդ է բառի վրա ստացական հոդ դնել, որինակ՝ սովորական չէ ասել—իմ գիրքս, քո գիրքդ:*

§ *31. Ասում են՝ ուռին*
*աղջիկ եր ինձ պես,*
*Սիրում եր յարին,*
*ու չեկավ նա տես:*
*Խեղճը դողալով*
*անհույս կռացավ...*
*Ջրերի վրա*
*գլուխը կախած*
*դեռ դողում է նա...*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ Անուշ»)*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *30.* **ն** *(*կամ **ը***)* հոդը, վոր դրվելով բառի վերջը՝ նրա ընդհանուր յեվ անորոշ նշանակությունը սահմանափակում է, վորոշ ու ծանոթ առարկա ցույց տալով, կոչվում է **վորոշող** հոդ: Ձայնավորով վերջացող բառերի վրա դրվում է **ն** վորոշող հոդ *(տարին, վկան, կատուն, բաղեն, Մաքոն).* բաղաձայնով վերջացող բառերի վրա, յերբ հաջորդ բառը նույնպես բաղաձայնով է սկսվում, դրվում է **ը** հոդը *(քարը ջարդվեց),* իսկ յերբ հաջորդ բառը ձայնավորով կամ **սկ**, **սպ**, **սթ**, **ստ**, **զգ**, **զբ**, **սք**, **սփ**, **շկ**, **շպ**, **շտ**-ով է սկսվում, **ն** վորոշող հոդն է դրվում *(քարն ընկավ, մարդն զգաց և այլն. տես § 9, կանոն 4):*

*Վորոշող հոդ դրվում է՝*

*1.* Հատուկ անունների վրա. *որինակ՝ Արամն ու Հայկը գընացին:*

*2.* Հասարակ անունների վրա, վորոնք ցույց են տալիս առարկայի սեռը—այս-ինչ կամ այն-ինչ տեսակը. *որինակ՝ կովը կաթնատու կենդանի յե.—խնձորենին ծառ է:*

*3.* Խոսքի մեջ մի անգամ արդեն հիշված ծանոթ անունը. *որինակ՝ մի աստղ ցոլաց յերկնքում, աստղը ցոլաց և անհայտացավ:*

*4.* Այն բառերի վրա, վորոնց վրա դրված են՝ **այս**, **այդ**, **այն**,

սույն ցուցականները. *օրինակ՝ այս բաժակը, այս գինին, այդ կատուն, սույն գրությունը և այլն։*

5. Այն բառերի վրա, վորոնց վրա դրված են՝ **մյուս, մեկել, բոլոր, այս-ինչ, այն-ինչ** անորոշները յեվ **վո՞ր** հարցականը. *օրինակ՝ մյուս տետրակը, մեկել կատուն, բոլոր ծառերը, այս-ինչ մարդը, այն-ինչ տարին, վո՞ր գիրքը և այլն։*

*6.* Այն բառերի վրա, վորոնց վրա դրված է **իմ, քո, իր, մեր, ձեր, նրանց, իրենց, սրա, դրա, նրա, սրանց, դրանց, նրանց, վորի՞, վորո՞նց, ո՞ւմ** բառերից մեկնումեկը, *օրինակ՝ իմ անունը, քո աչքը, ո՞ւմ տետրակը և այլն։*

7. Այն բառերի վրա, վորոնք փոխարինում են զեղչված անվանը. *օրինակ՝ Նա յերկու վորդի ունի, մեկը (մի վորդին) գրագետ է, մյուսը (մյուս վորդին)՝ անգրագետ։ Այդպես նաև՝ իմը (իմ գիրքը), քոնը (քո գիրքը), նրանը (նրա գիրքը), Արամինը (Արամի գիրքը), յերեկվանը (յերեկվա դասը)։*

*Այսպիսի դեպքերում,* յերբ բառը ձայնավորով է վերջանում, **նը** կամ **նն** կրկնակի հոդն է առնում, իսկ յերբ բաղաձայնով է վերջանում, միայն **ը** *(ն)* հոդն է առնում *(տես վերևի օրինակները)։*

*Ցո՛ւյց տվեք հոդերը յեվ նրանց տեսակները հետևյալում.*

*Յերեկ,*
*Անապատումը մեր անծիր ու անսահման,*
*Իմ ուղտ,*
*Իմ սիրելի,*
*Պարանոցդ վեր պարզած՝*
*Ուզում եյիր շեմս-արևը համբուրել....*
*Կարոտ չե՞ս*
*Շեմս-արևին....*
*Պարանոցդ ծռած,*
*Հայացքդ մոլոր ու մութ՝*
*Ավազներին,*
*Ո՞ւմ վոտքի հետքն ես վորոնում։*
*Ինչո՞ւ սիրելիս,*
*Հայացքիդ մեջ թախիծ կա....*

*Ուր ջրշուններն են լողում,*
*Ուր անապատի բորենիներին միացած՝*
*Ուզում են մարմինդ հոշոտել,*
*Սիրելիս։*



*Այն ո՞վ եր,*
*Վոր ծանր բեռ դրեց կռնակիդ.*
*Հիմա*
*Համբույրիս փոխարեն*
*Ոտարներն են քեզ մտրակում,*
*Սիրելիս։*

*(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Վեր կաց, սիրելիս»)*

## Բ. ԴԵՐԱՆՈՒՆ

§ 32. *Սուրիկը դպրոցից յեկավ տուն.* **Նա** *նստեց նախաճաշի։—Աշակերտները բակից հեռացան.* **Նրանք** *այլևս դաս չունեյին։—Աշխենը շատ ուրախացավ.* **Նրան** *մայրը գիրք եր նվիրել։—Իմ յեղբայրը քաղաքում է ապրում.* **Նրանից** *յերեկ նամակ ըստացա։—Ահա քո տված գրքերը.* **սրանք** *կարդացել եմ։—Յես «Լուսարձակ» եմ ստացել. նոր տպված գիրք է* **այդ**։*— Տե՛ս ինչ լավ մատիտ է.* **այս** *կտաս Վաչիկին։— Իմ «Կարմիր Արևը» կորել է. լավ գիրք եր* **այն**։*—Վերցրու այս տետրակները.* **սրանք** *Մինասին կտաս։—Այդ գրքերը թող մնան.* **դրանք** *ինձ պետք են։—Այսօր յեկավ այն աշակերտը,* **վոր** *յերեկ հիվանդ եր։— Մուկուչին գովում եր,* **ով** *տեսնում եր նրա արածը։—Կատարիր այն բոլորը,* **ինչ** *քեզ ասացի։—Ահա այն գյուղը,* **ուր** *յես ապրում եմ։— Յեկա այն որը,* **յերբ** *դու բացակա եյիր։*

*ՀԱՐՑ*

*Ընդգծված բառերը* (**նա, նրանք** *և այլն*) *ինչ բառերի տեղ են դրված։*

**Յես, դու, նա, մենք, դուք, նրանք** *(**նոքա**)*, **այս, այդ, այն, սա, դա, սրանք, դրանք, ով, ինչ, ուր, յերբ — դերանուններ** *են։ Դերանունները նշանակությամբ գոյական բառեր են։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *31.* Դերանուն կոչվում են այն գոյական բառերը, վորոնք դրվում են ծանոթ առարկաների անունների տեղ՝ այդ անունները նորից չկրկնելու համար, *օր.՝ Սուրիկը դպրոցից յեկավ տուն.* **Նա** *(Սուրիկը) նստեց նախաճաշի.—այստեղ* **նա** *բառը դըրված է Սուրիկի անվան փոխարեն, նրա տեղ, վորպեսզի* **Սուրիկ** *բառը մոտեմոտ չկրկնենք։*

*Գոյական անունները վորոշ, հաստատուն նշանակություն ունեն (հաց, ջուր, վարդ), իսկ դերանունները փոփոխական նըշանակություն ունեն, նայած թե ինչ բառի տեղ են դրվում։*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 34. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք դերանունները.

Կանչեցե՛ք Սերոբին, Աշոտին ու Բաբգենին. նրանք սանյեռյակի անդամներ են։ Աշոտն իմ ընկերն է. յես նրան վաղուց եմ ճանաչում, մենք միասին աշխատում եյինք աշկոպում։ Յեկե՛ք գնանք Գուրգենի մոտ. նրանց տունը մոտ է մեզ. նրան կվերցնենք հետներս, կգնանք դպրոց, միասին կպատրաստենք մեր վաղվա աշխատանքները։ Թե՛ յես, թե՛ դու, թե՛ նա — աշխորհըրդին պիտի հաշիվ տանք։ Սրան ձեզ հետ տարե՛ք, իսկ նրան՝ թողե՛ք այստեղ։ Այս պիտի կարդաս, իսկ այն՝ կարելի յե չկարդալ։ Յես ա՛յդ եմ ջարդել և վոչ թե՝ այն։ Սրանով կգրես, իսկ դըրանով՝ կջնջես։ Նրանք իմ ընկերներն են։ Դրանք իմ գրքերն են. յես նրանցով եմ դաս պատրաստում։ Նրանցից առա, սրանց տվի։ Բացի ինձնից, այնտեղ եյիք՝ դու, նա. սա միայն քիչ ուշ յեկավ։ Ով տեսնի՝ կզարմանա։ Ինչ ուզես՝ կտեսնես։ Ուր ուզես՝ կգնաս։ Յերբ ուզես՝ կկարդաս։ Տո՛ւր այն գիրքը, վոր ստացար։ Տո՛ւր այն մատիտը, վորով գրում ես։ Մենք պետք է ոգնենք միմյանց։ Ոգնեցե՛ք մեկմեկու։ Ձե՛ռք տվեք իրար։ Ո՞վ է այսոր բացակա։ Ի՞նչ ասաց նա։ Ո՞ւր գնաց ընկերդ։ Յե՞րբ կորցրիր գիրքդ։ Վո՞րն է լավ և վո՞րը՝ վատ։ Ի՞մը վորն է, քո՞նը վորն է։ Մե՞րը վորն է, ձե՞րը վորն է։

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 33. **Յես** գնում եմ, իսկ **դու** գալիս ես։ Նա չի ուզում **մեզ** հետ գալ։ **Մենք** կարդում ենք։ **Դուք** նկարում եք։ **Նրանք** գնացին։ **Յես** այստեղ եմ։ **Մենք** այնտեղ չկայինք։

Յես, դու, նա, մենք, դուք, նրանք — դրված են անող կամ յեղող անձի անվան տեղ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 32. Յես, դու, նա, մենք, դուք, նրանք, ինքս, ինքդ, ինքը, ինքներդ, իրենք — կոչվում են **անձնական** դերանուններ, վորովհետեվ դրվում են **անձի** անվան տեղ։

§ 34. **Այս** իմ գիրքն է, իսկ **այդ**՝ քոնը։ **Այն** վաղուց է կորել։ **Սրանք** մեծերն են, իսկ **դրանք**՝ փոքրերը։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 33. Այս, այդ, այն, սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք — կոչվում են **ցուցական** դերանուններ, վորովհետեվ առար-



կայի անվան փոխարեն դրվելով՝ արտահայտում են ձեռքով ցույց տալու կամ մտքով ակնարկելու գաղափար։

**Այս, այդ, այն** ցուցականները դրվում են իրի անվան տեղ, իսկ **սա, դա, նա** — անձի անվան տեղ. որինակ՝ մատիտը տո՛ւր, **այդ** ինձ պետք է (չի կարելի ասել՝ **դա** ինձ պետք է)։— Յես **այդ** կտրել եմ (սխալ է՝ յես **դա** կտրել եմ)։— Ահա **այն** տղան. **սա** լավ է կարդում։

§ 35. Աշխենն ու Վարդուշը միշտ ոգնում են **միմյանց**։ Նրանք յերբեք չեն մոռանում **մեկմեկու**։ Լավ գիտեն, վոր ընկերներն **իրար** պետք է սիրեն և ոգնեն։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 34. Միմյանց, մեկմեկու, իրար, — կոչվում են **փոխադարձ** դերանուններ։

§ 36. Ընտրության ժամանակ իմ ձայնը կստանա այն ընկերը, **ով** ամենից ավելի յեռանդուն է։— Կատարեցե՛ք այն աշխատանքները, **ինչ** հանձնարարել ենք ձեզ։— Գնա՛ մոտիկ գյուղը, **ուր** մեր ընկերներն են այժմ։ Յեկ այն որը, **յերբ** յես այստեղ կլինեմ։— Յեկավ մեր ընկերը, **վոր** յերեկ հիվանդ եր։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 25. Ով, ինչ, ուր, յերբ, վոր — կոչվում են **հարաբերական** կամ **շաղկապական** դերանուններ։

§ 37. **Ո՞վ** գիտե նրա տեղը։— Արշակն **ի՞նչ** ասաց։— **Ո՞ւր** գընանք։— **Յե՞րբ** յեկավ նա։— Այս գրքերից **վո՞րն** ես ուզում։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 36. Ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, յե՞րբ, վո՞ր — կոչվում են **հարցական** դերանուններ։

§ 38. Յես էլ մատիտ ունեմ, դու էլ. **իմը** սև է, իսկ **քոնը**՝ կարմիր։— **Իմը** թող չլինի, **իրենը** լինի։— **Մե՞րն** է լավ, թե **ձերը**։— **Նրանցն** ամենից լավն է։— Յես գրում եմ **իմով**, դու գրում ես **քոնով**։— **Իմոնք** տա՛ր, **քոնոնք** բե՛ր։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 37. Իմ, քո, իր (յուր), մեր, ձեր, նրանց (նոցա), — կոչվում են **ստացական** դերանուններ։

§ 39. Յերեկ մի **վոմն** անցնում եր փողոցով. թե ինչ **ոքմին** եր նա, չկարողացա իմանալ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 38. Վոմն, վոք, ոքմին — կոչվում են **անորոշ** դերանուններ։

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

**Յ ե զ ա կ ի**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ուղղ.** | *յես, ինքս* | *դու, ինքդ* | *նա, ինքը* | *նա* |
| **Տր.** | *ինձ* | *քեզ* | *իրեն* | *նրան* |
| **Բաց.** | *ինձնից* | *քեզնից* | *իրենից* | *նրանից* |
| **Գործ.** | *ինձնով* | *քեզնով* | *իրենով* | *նրանով* |
| **Ներգ.** | *ինձնում* | *քեզնում* | *իրենում* | *նրանում* |

**Հ ո գ ն ա կ ի**

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Ուղղ.** | *մենք, ինքներս* | *դուք, ինքներդ* | *նրանք, իրենք* | *նրանք* |
| **Տր.** | *մեզ* | *ձեզ* | *իրենց* | *նրանց* |
| **Բաց.** | *մեզնից* | *ձեզնից* | *իրենցից* | *նրանցից* |
| **Գործ.** | *մեզնով* | *ձեզնով* | *իրենցով* | *նրանցով* |
| **Ներգ.** | *մեզնում* | *ձեզնում* | *իրենցում* | *նրանցում* |

**Յ ե զ ա կ ի**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ուղղ.** | *սա* | *դա* | *ով* | *ինչ* | *վոր* |
| **Տր.** | *սրան* | *դրան* | *ում* | *ինչի* | *վորին* |
| **Բաց.** | *սրանից* | *դրանից* | *ումից* | *ինչից* | *վորից* |
| **Գործ.** | *սրանով* | *դրանով* | *ումով* | *ինչով* | *վորով* |
| **Ներգ.** | *սրանում* | *դրանում* | — | *ինչում* | — |

**Հ ո գ ն ա կ ի**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ուղղ.** | *սրանք* | *դրանք* | *ովքեր* | *ինչեր* | *վորոնք* |
| **Տր.** | *սրանց* | *դրանց* | — | *ինչերի* | *վորոնց* |
| **Բաց.** | *սրանցից* | *դրանցից* | — | *ինչերից* | *վորոնցին* |
| **Գործ.** | *սրանցով* | *դրանցով* | — | *ինչերով* | *վորոնցով* |
| **Ներգ.** | *սրանցում* | *դրանցում* | — | *ինչերում* | *վորոնցում* |

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 35. Հետևյալ նախադասությունները այնպե՛ս փոփոխեցեք, վոր նրանց մեջ յեղած դերանունները հոգնակի դրվեն. օր.՝ յերեկ ո՞վ յեկավ,—յերեկ ովքե՞ր յեկան:*

*Յես յեկա դպրոց: Դու այսօր նրան տեսե՞լ ես: Արշակն ինձ գիրք տվեց: Այս կտաս Գուրգենին: Յերեկ ո՞վ յեկավ: Սա չե այն տղան, վորի մասին ասում եյի: Թե՛ յես, թե՛ դու և թե՛ նա այսօր այնտեղ պետք է լինենք: Իմ, քո և նրա մասին է խոսքը: Ինձնից առաջ, նրան տվիր: Ինձնում ել ուժ չմնաց: Քեզնում ընկերական վոգի չկա: Սրանով և դրանով կարելի չե կտրել: Ինքն է այդ բանն արել: Գիրքն իրեն կտաս:*

*Դիտեցեք ստորակետի կիրառությունն ստորև բերված հատվածներում պատահած գոյական անուններից ու դերանուններից հետո.*



*1. Հասավ Մըսըր, Չինումաչին, Ֆարս, Հնդստան, Արաբստան...*
*2. Ե՛լ թանգագին քիրմանի շալ, ել մարգարիտ, զմրուխտ ու լալ,*
*Հնդու խուրմա, փստա, բադամ և... վո՞ր մեկի անունը տամ:*

*(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Անբախտ վաճառականներ»)*

*3. Եկել են Սասմա քաղաքի վրեն Բաղին, Կողբադին, Սյուդին, Չարխադին:*

*(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Սասունցի Դավիթ»)*

ԿԱՆՈՆ *17.* Խոսքի մեջ իրար հաջորդող, նույն հոլովով դրված ու խոսքի մեջ նույն պաշտոնն ունեցող գոյականները ստորակետով բաժանվում են իրարից. Յերբ այդպիսի նույնահոլով գոյականներից յերկուսը, կամ վերջին յերկուսը բաժանված են իրարից յեվ, ու բառերով, ստորակետ չի դրվում:

*1. Յես, դու, նա միասին գնացինք:*

*2. Մենք, դուք և նրանք շատ ենք աշխատել:*

*3. Նրանք իրար խանգարում են:*

*4. Ո՞վ ինձ նրան ցույց կտա:*

*5. Այս ո՞ւմ պետք է հանձնել:*

ԿԱՆՈՆ *18.* Խոսքի մեջ իրար հաջորդող միատեսակ ու նույնահոլով դերանունները բաժանվում են իրարից ստորակետով, իսկ տարբեր տեսակի դերանունները չեն բաժանվում: *Օրինակ՝ վերևի օրինակների մեջ* **յես, դու, նա** *ուղղական հոլով դրված անձնական դերանուններ են և ստորակետով բաժանված են.* **ո՞վ, ինձ, նրան** *տարբեր տեսակի դերանուններ են—* **ո՞վ** *հարցական դերանուն է,* **ինձ**՝ *անձնական,* **նրան**՝ *ցուցական.—այդ պատճառով այդ դերանուններն իրարից ստորակետով բաժանված չեն:*

*Դիտեցե՛ք ստորակետի կիրառությունը հարաբերական կամ շաղկապական դերանուններից առաջ՝ ստորև բերված օրինակների մեջ.*

*1. Մեր վստահությունը չի վայելի* **նա, ով** *կխուսափի շինարար աշխատանքից:*

*2. Միայն* **նա՛** *կհասկանա,* **ով** *աշխատել է գյուղում:*

*3. Այսպես Հրահատը կատարեց* **այն, ինչ** *հրահանգված եր իրեն:*

*4. Կատարի՛ր այն* **խոսքը, ինչ** *վոր ասել եմ:*

*5. Ահա այն* **վայրը, ուր** *նոր դպրոց պետք է կառուցվի:*

*6. Ահա այն* **շենքը, վոր** *պետք է նորոգվի:*

*7. Յեկ այն* **ժամին, յերբ** *այստեղ եմ լինում:*

ԿԱՆՈՆ 19. **Ով, ինչ, ուր, յերբ, վոր** (ով վոր, ինչ վոր, ուր վոր, յերբ վոր) հարաբերական կամ շաղկապական դերանուններից առաջ ստորակետ է դրվում, յերբ այդ դերանուններով սկսվող խումբը վերջադաս է (հետո յե դրված)։

## ՀՈԼՈՎՆԵՐԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### 1. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

*Յեվ ինչո՞ւ միայն* **նա** *յերգի,*
*Միայն* **նա — Հովակիմը, Կարոն,**
**Սողոմոնը, Մարգարը,**
*Կամ մի բիթլիսցի, վանեցի* **Պողոս**։
*Այս տողերս քո* **կամքը** *յերգեց,*
*Այս տողերս* **դու** *յերգեցիր։*
*... Թե խաբեն* **որերն** *այս հրկեզ,*
*...* **Յես** *ելի ..... կերգեմ։*
(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

ՀԱՐՑԵՐ

1. *Միայն ո՞վ յերգի —* **նա, Հովակիմը, Կարոն, Սողոմոնը** *և այլն։*
2. *Այս տողերն ո՞վ յերգեց — քո* **կամքը**, **դու** *յերգեցիր։*
3. *Ովքե՞ր յեթե խաբեն — այս* **որերը**։
4. *Ո՞վ ելի կերգի —* **յես** *ելի կերգեմ։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 39. Ուղղական հոլովը նախադասության մեջ, պատասխանելով **ով, ինչ, ովքեր, ինչեր** հարցերին, մեծ մասամբ ցույց է տալիս այն անձը կամ իրը, վոր կատարում է բայի ցույց տված գործողությունը, վոր մի բան անում է կամ լինում, *կարճ ասած՝ այսպիսի ուղղականը նախադասության մեջ* **յենթակա** *յե լինում։ Յենթական խոսքի մեջ կարող է լինել մի հատ և մեկից ավելի կամ* **բազմակի**։

**Բազմակի յենթականերն** *իրարից բաժանվում են ստորակետով։ Որինակ՝ Սուրիկը, Լևիկը, Արշոն ու Մինասը կարդում են։*

*Բազմակի յենթականերից վերջին յերկուսը կարող են կապվել* **յեվ, ու** *բառերով. այս դեպքում ստորակետ չի դրվում։*

*Ե՜յ, հազար-հազար* **լույսեր** *ելեկտրյան....*
*Յեվ դուք, աշխարհի* **գեղեցկուհինե՛ր** —
*Հաղթ* **մեքենանե՛ր** *ու* **գործարանե՛ր**....
*Դուք,* **նավե՛ր, ջրե՛ր, յերկաթուղինե՛ր,**



**Հանքե՛ր ու ցանքե՛ր**....
*Չքնաղ* **թատրոննե՛ր**, *հանճարի* **սե՛ր**....
*Ո՞ւմ եք պատկանում։*
(ՀԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Հավասարություն»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 40. Ուղղական հոլովը, ցույց տալով այն առարկան, վորին դիմում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար, գործ է ածվում իբրև **կոչական-ուղղական**, կարճ ասած՝ իբրև **կոչական** բառ։

Կոչական բառի վրա դրվում է շեշտ, կամ յերկար նշան։

*Յեթե կոչական բառն ունի վորևէ նախադաս լրացում, շեշտը դրվում է լրացումի վրա (սիրելի՛ Արամ)։*

*Ցույց տվեք ուղղական հոլովի դերը նախադասության մեջ ստորև բերված որինակներում.*

*Տիբեթից կարող է թռչել*
**Ռաշտ, Պետրոգրադ, Թիֆլիս**....
*Բիթլիսից՝* **Մարսել, Յերևան,**
**Պեկին, Կահիրե, Չիկագո**։

*ՀԱՐՑ.*

**Ո՞ւր** *կարող է թռչել — Ռաշտ, Պետրոգրադ և այլն։*

*Մենք ութ* **ժամ** *աշխատում ենք։— Ամբողջ* **որն** *անձրև յեկավ։— Արշոն հինգ* **տարի** *այնտեղ մնաց։*

*ՀԱՐՑ.*

**Վո՞րքան** *ենք աշխատում —* **ութ ժամ**։

*Այս գիրքը մի* **ռուբլի** *արժե։— Շաքարի բեռը քառասուն* **կիլո** *կշռեց։*

*Մենք յերեկ* **ներկայացում գնացինք**։ *— Սաքոն* **վորս** *գնաց, իսկ Ներսոն՝* **հունձ**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 41. Ուղղականը պատասխանելով **ուր, վորտեղ, մինչև յերբ, վորքան ժամանակ, ինչքան, վորքան** հարցերին, խոսքի մեջ կարող է ցույց տալ գործողության **տեղը** (վորտեղ հանգում կամ վերջանում է սկսված գործողությունը — *հասավ Յերևան*), գործողության տևողության **ժամանակը** (*հինգ* **տարի** *ապրեց*), **քանակը** (*քառասուն* **կիլո** *կշռեց*), **նպատակը** (**վորս** *գնաց*)։

*Ծանոթություն.— Կան լեզուներ (որ.՝ ռուսերենը), վորոնց մեջ ուղղականի այս տեսակին փոխարինում է այսպես կոչված* **հայցական** *հոլովը, վոր հաճախ իր ձևով*

տարբերվում է ուղղականից։ **Հայերենում հայցական հոլով** **ք ա ս ձ և վ ի** չկա, ուստի հայցականն իբրև առանձին հոլով չի դրվում։ Մեր քերականներից վոմանք, հետևելով ոտար լեզուների քերականներին, մեր հոլովների շարքում դնում են առանձին հայցական հոլով, նկատի ունենալով բառի վոչ թե ձևը, այլ նրա պաշտոնը խոսքի մեջ։

Դիտեցեք ուղղական հոլովի կիրառումը ստորև բերված օրինակներում.

Աթոն **արևը** շատ էր սիրում.—Իրենց ախոռից միակ **կովն** ու յերկու **յեզները** տանում էր դուրս.—Աթոն հագնում էր **սո-րերը**.—Գեղ կանգնի՝ գերան կկոտրի.—Մեկը **հոռովել** էր գլում.—Հետո մյուս հոտաղն էր հոռովելի **խոսքերն** ասում.—Նա կուսակցական **դպրոցն** ավարտել է։ (Մ. ԱՐՄԵՆ)։

Նա **հայր** ուներ, իսկ հայրը՝ **ոչխարներ**.—Ծեզին **ոչխարը** քշիր քաղաք.—Ծառուն տղան տաս ձիու բեռ **ապրանք** բերեց.—**Ապրանքը** թանգացնում էր ժամե-ժամ։ (ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ)։

Փողոցում մի **մարդ** տեսավ.— Ավազակները մի մարդ են սպանել.— Ասո ապին **որդի** ունի.— Մուկուչը **հայր** էլ ունի, **մայր** էլ, **քույր** էլ, **յեղբայր** էլ.—Սեթոն իր **հայրն** էլ է կորցրել, **մայրն** էլ, **յեղբայրն** էլ.— Մի **կով** են մորթել ու մի **յեզ**.— Ցես Կարո-Մարո չեմ տեսել։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 42. Ուղղական հոլովը, պատասխանելով **ինչ** հարցին, հաճախ ցույց է տալիս բայի այն լրացումը, որ կրում է իր վրա բայի ցույց տված ու յենթակայի կատարած գործողությունը։ Օրինակ՝ Մարոն կոտրեց **բաժակը** նախադասության մեջ **Մարոն** և **բաժակը** բառերը յերկուսն էլ ձևով ուղղական հոլով են գրված, բայց նախադասության մեջ տարբեր, նույնիսկ իրար հակառակ պաշտոն ունեն—**Մարոն** կոտրելու գործողությունը կատարողն է՝ **կոտրողը**, իսկ **բաժակը**—այդ գործողությունն իր վրա կրողը՝ **կոտրվողն** է. այսպիսով, **Մարոն** այս խոսքի մեջ **յենթակայի** պաշտոն ունի, իսկ բաժակը՝ **կրող խնդրի**։

Հայերենում **կրող խնդիրը** կարող է ուղղական հոլով գրվել թե այն դեպքում, յերբ անշունչ առարկա (իր) է ցույց տալիս, և թե այն դեպքում, յերբ շնչավոր առարկա (անձ) է ցույց տալիս. օրինակ՝ **ավազակները մարդ սպանեցին** նախադասության մեջ **մարդ** բառը շնչավոր առարկայի անուն է, բայց, պատասխանելով **ի՞նչ սպանեցին** հարցին, գրված է ուղղական հոլովի ձև-



վով։ Այս դեպքում շնչավոր առարկան մտածվում է իբրև իր։ Այդպես նաև հետևյալ օրինակներում—Արամը փողոցում մի **մարդ** տեսավ (ի՞նչ տեսավ).—Դպրոցում **աշակերտ** չտեսա (ի՞նչ չտեսա).—Նա իր **հայրն** ուրացավ (ի՞նչն ուրացավ) և այլն։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Ռուսերենում կրող խնդիրը յեթե արական և չեզոք վերջավորություն ունեցող բառ է, շնչավոր առարկա ցույց տալու դեպքում դրվում է սեռականակերպ հայցական հոլով, իսկ անշունչ առարկա ցույց տալու դեպքում՝ ուղղականակերպ հայցական է դրվում։ Իգական վերջավորություն ունեցող բառերի հայցական հոլովը ռուսերենում ունի իր հատուկ վերջավորությունը։ Այսպիսով ռուսերենն ունի հայցական հոլով։

Մեր լեզուն, սակայն, ժամանակի ընթացքում կորցրել է այդ հոլովի ձևը ու նույնացել **ուղղական** և, ինչպես տրական հոլովի վերաբերյալ մասում կտեսնենք, **տրական** հոլովին։

Մեր քերականներից վոմանք այս տեսակի ուղղականն էլ (կրող խնդրի) **հայցական** հոլով են անվանում, հիմնվելով վոչ թե բառի ձևի, այլ պաշտոնի (ֆունկցիայի) վրա։

## 2. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Վաղն այս կապտերիզ **ջրանցքների ափերին**
Կփռվի յերկիրը մեր նորաբաղձ,
Այս չլուտ **գետափներին**, այս չլուտ **քարափներին**
Հյուր կգա յերկիր մի նորաբարձր։
(Մ. ԱՐՄԵՆ՝ «Ջրանցքների յերկաթե յերգը»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 43. Տրական հոլովը նախադասության մեջ լինում է I. վորևե բայի, կամ ածականի լրացում (գիրքը **տվի Արամին**.—**քեզ պես** աշխատում է նա). II. վորևե գոյականի լրացում (սեղանի վոտը)։ I. **Բայի կամ ածականի լրացում լինելով**՝ տրականը ցույց է տալիս՝ 1. այն առարկան, վորին մի բան տրվում է, ուղղվում է մի բան (գիրքը տվի **Արամին**.— **Արամին** նամակ ուղարկեցի), 2. վորի ոգտին կամ վնասին մի բան լինում է (**Աշոտին** գիրք առա), 3. տեղն ու ժամանակը, ուր կա կամ լինում է մի բան (հրեն Կապսը **սարին** կանգնած.— յես յեկա **հունիսին**), 4. այն առարկան, վոր կրում է իր վրա անցողական բայի գործողությունը (կրող խնդիր)․ օրինակ՝ Հայկը տեսավ **Մուկուչին**։

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.—Այս վերջին տեսակի տրականը

քերականներից ոմանք անվանում են **հայցական** հոլով (ինչպես և կրող խնդրի ուղղականը)։ Այսպիսով կրող առարկան հայերենում, մերթ **ուղղականի** ձևով և մերթ **սեռականի** ձևով, ըստ այդ քերականների, միևնույն հայցական կոչված հոլովն է դրվում։ Սակայն, ինչպես վերը տեսանք, իրի «հայցականը» (ուղղականակերպ հայցական) ձևով նույնացել է ուղղականին, այդպես նաև անձի «հայցականը» (տրականակերպ հայցական) ձևով նույնացել է տրականին։ Այնպես որ այս դեպքում ևս հայերենն առանձին հայցական հոլով ըստ ձևի չունի։

Կրող խնդիրն ուղղականի, կամ տրականի ձևով դնելը կախված չէ առարկայի շնչավոր կամ անշունչ լինելուց, ինչպես նաև որոշ կամ անորոշ լինելուց, այլ խոսողի մտածողության յեղանակից։ Յեթե խոսողը կրող առարկայի մասին խոսում է իբրև **իրի** մասին (որպես պատասխան **ինչ** հարցին), այս դեպքում առարկայի անունը դնում է ուղղական հոլովի ձևով. օրինակ՝ փողոցում մի մարդ տեսա (ի՞նչ տեսա — մարդ). իսկ յեթե առարկայի մասին խոսում է իբրև անձի մասին (որպես պատասխան **ում** հարցին), այս դեպքում առարկայի անունը դնում է տրական հոլովի ձևով (փողոցում մարդուն տեսա,—մարդ մարդու չի սպանի,—նա իր հայրն էլ է կորցրել, իր մայրն էլ)։

II. **Գոյականի լրացում լինելով**՝ տրական հոլովը ցույց է տալիս 1. պատկանելություն, մի առարկա, որ տեր է մի ուրիշ առարկայի (**Զավենի** գիրքը), 2. ամբողջը, որի մի մասն է վերցվում (**շաքարի** կիլոն), 3. նյութը, որից կազմված է առարկան (**խոտի** դեզ), 4. տեղը, ուր կա կամ լինում է մի բան (գըլխի մազերը), 5. ժամանակը, ուր կա կամ լինում է մի բան (**այսօրվա** դասը), 6. գինը կամ արժեքը (հիսուն **կոպեկի** միրգ), 7. որակը կամ տեսակը (առաջին **աստիճանի** դպրոց, նոր **ձևի** գլխարկ)։

*Ծանոթություն.*— Քերականներից ոմանք այս վերջին տեսակի տրականները, որ գոյականի լրացում կամ վերադիր են լինում, հետևելով օտար լեզուների քերականություններին՝ **սեռական** հոլով են անվանում։

Օտար լեզուներում, օրինակ՝ ռուսերենում, կա առանձին սեռական հոլով, որ իր ձևով տարբերվում է տրական հոլովից (սակավ բացառությամբ)։ Հայերենում, սակայն, սե-



ռական հոլով ըստ ձևի չկա. այս հոլովն էլ ժամանակի ընթացքում նույնացել է տրականին ու վերջինիցս տարբերվում է միայն իր կիրառումով, մինչդեռ բուն տրականը բայի կամ ածականի լրացում է լինում, «սեռական» տրականը լրացում է լինում որևէ անվան (գիրքը տվի մի **մարդու** — տրական,— այս **մարդու** գիրքը — «սեռական»)։

### 3. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Յելան, գնացին՝
**Ուրալից** — դեպի Կարպատները լուրթ,
Ու **Կարպատներից** — մինչև Երզրում,
Ու **Երզրումից** — Տրիպոլի, Հռոմ...
Բոլոր **կողմերից** հավաքված յելան....
Գալիս էր **Մոսկովից** դեղին...
Անցնում էր Նաիրի **վրայից** —
Բռնել էր Բաղդադի ուղին...
(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

1. Ճանապարհորդը դուրս յեկավ **գյուղից**։—Արշակը բռնեց Պետիկի **թևից** (ո՞րտեղից)։—Հորթը կապեցին սյունից (ինչի՞ց)։
2. Մարտ **ամսից** նրանք այստեղ են (յե՞րբվանից)։
3. Նա **գործից** անտեղյակ մարդ է։
4. **Դրսից**՝ քահանա, **ներսից**՝ սատանա։—Զորս **առարկայից** թույլ է։
5. **Ամենից** լավ սովորողը նա յէ։
6. Սեթոն **ցրտից** հիվանդացավ։
7. **Մեզնից** ոմանք չեն յեկել։
8. Որը **ոսկուց** է պատրաստված, որը՝ **արծաթից**։
9. Նա հրաժարվում է այդ **անելուց**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 44. Բացառական հոլովը ցույց է տալիս գործողության սկզբնակետը, այն առարկան կամ տեղն ու ժամանակը, որից առնվում, բաժանվում, հեռանում կամ ծագում, առաջ է գալիս մի բան։

### 4. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Որը **կացնով**, որը **փետով**,
որը **ձիով**, որը **վոտով**,
որն անդատակ, որը բոբիկ —
դեպի դուշման գյուղը մոտիկ։
(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Մի կաթիլ մեղր»)

Չինաստանով էլ են հետաքրքրվում, բյազի գնով էլ, կոոպերատիվի հաջողությամբ էլ:

(ԱՆՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Տրախոմի մաշին»)

Ծաղկոցով հարուստ է Ծաղկաձորը, խոտը մարդաբոյ է քշում, հովը ծփում է բուրմունքով:

(ԱՐԱՔՍ՝ «Ծաղկաձորի Թաթիկը»)

Նա պիտի անցներ հայրենի գյուղով,
Սոսենու ճերմակ անտառի միջից,
Ուր յեղնիկներն են փախչում յերկյուղով
Հովից վայր ընկած տերևի շնչից…

(ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ՝ «Մայրը»)

1. Սղոցով, կացնով կտրել.—դանակով տաշել (ինչով):
2. Ճանապարհով անցնել.— լանջով բարձրանալ (վորտեղով):
3. Միքանի ժամով բացակայել:— Գիշերով աշխատել:
4. Սրտով մարդ:— Շնորհքով տղա:— Շեկ մազերով (ինչպիսի):
5. Ծագումով գյուղացի:— Լեզվով ճարտար:
6. Հինգ ռուբլով ծախել:
7. Գետինը ձյունով ծածկվեց:
7. Նրա մտքով նույնիսկ չանցավ:—Վզովը փաթաթվել:
8. Դուք չորսով մնացիք.—Ամբողջ խմբով գնացինք:
9. Մսով կերակուր.—Բրնձով քաշովի.—Յուղով փլավ:
10. Վերջին լուրերով՝ նա կգա:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 45. Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, վորով կամ վորի միջոցով, իբրև գործիքով, կամ միասնությամբ կատարվում է մի բան:

### 5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Զրընգում է մեր յերկրում ձեր բանակը հիմա հոծ:
Դուք զվարթ եք ու ազատ խորհրդային մեր յերկրում,
Ձեր հանգերում հարազատ, ուր աշխատանքն է բերկրում:
Ցավ ձեր գործում ամեն որ, ձեր հոգսերում ու խաղում—
Մեր նոր կյանքն է խլրտում, մեր գարունը ծիծաղում:
Այս գարունը, վոր կյանքում չի վառի վոչ մի արև,
Ցեթե ինքներս անդուլ աշխատանքով չվառենք:



Ցեթե հրում այս մարտի, վոր յեռում է յերկրում դեռ —
Չդառնա քույրը՝ մարտիկ, չդառնա կինը՝ ընկեր:
Այս գարունը, վոր հիմա զրընգում է մեր յերկրում —
Անդուլ պայքարն է բերում, աշխատանքից է բերկրում…

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Այս գարունը»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ 46. Ներգոյական հոլովը ցույց է տալիս այն առարկան, տեղը կամ ժամանակը, վորի մեջ մի բան կա կամ լինում է:

## Գ. ԱԾԱԿԱՆ

§ 40. Մենք կանգ առանք գեղեցիկ և բարձր շենքի առջև: Արևի պայծառ շողերով վողողվել է կանաչ դաշտավայրը: Թանձր ծուխը բարձրանում է քարաշեն գործարանի հսկայական ծխնելույզներից: Տան յերրորդ հարկում յերեք սենյակ կա:

Գեղեցիկ, բարձր, պայծառ, կանաչ, թանձր, քարաշեն, յերրորդ, յերեք — բառերը առարկաների հատկանիշներ են ցույց տալիս:

ՍԱՀՄԱՆՈՒՄ 47. Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերն ածական են կոչվում, վորոնց ցույց տված գաղափարներն անկախ գոյություն չունեն կամ իբրև անկախ գոյություն ունեցող չեն մտածվում: Ածականի արտահայտած գաղափարը մտածվում է վորևէ այլ գաղափարի հետ կապված. որ.՝ գեղեցիկ յեվ բարձր շենք կապակցության մեջ գեղեցիկ և բարձր բառերի արտահայտած գաղափարները մտածվում են շենք բառի գաղափարի հետ կապված:

§ 34. Ցես ունեմ մի լավ գիրք:—Այդ լավ գրքին մի ուրիշի չեմ տվել:— Այդ լավ գրքից արտագրիր միքանի տող:— Այդ լավ գրքով պատրաստիր դասդ:— Այդ լավ գրքում գրված է:— Այդ լավ գրքերը,—այս լավ գրքերի…

ԿԱՆՈՆ 20. Ածականը յերբ գործ է ածվում գոյականի հետ, անփոփոխ է մնում, չի հոլովվում:

§ 41. Այդ մատիտներից մեծը տուր, իսկ փոքրը թող մնա: Մեծով կգրեմ, փոքրով չեմ գրի:— Մեծին փող կտամ, փոքրին չեմ տա:—Մեծերից մեկը վերցրու:

ԿԱՆՈՆ 21. Ածականը, յերբ գործ է ածվում առանց գոյականի, փոխվում է, հոլովվում է գոյականի նման, ընդունելով ն (ը) հոդը:

## ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 36. *Արտագրեցե՛ք յեվ ընդգծե-ցե՛ք ածականները.*

*Մենք գրում ենք սև թանաքով սպիտակ թղթի վրա։ Ըն-դարձակ ու յերկար փողոցի յերկու կողմերում բարձր տներ են շարված։ Վերին հարկից դեպի ստորին հարկը թեք սանդուղք է դրված։ Թանձր խավարը լուսավորվում է ճրագի աղոտ լույսով։ Ահա մի վոսկե ժամացույց՝ արծաթե շղթայով։ Պիոներական ա-կումբի թատերական դահլիճում յերեքշաբթի որը հետաքրքրա-կան ներկայացում կար։ Սանիտարական հանձնաժողովը յերրորդ և չորրորդ խմբերի աշակերտներից է կազմված։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 48. Առարկայի վորակ *(ինչպիսի լինելը)* ցույց տվող ածականները կոչվում են **վորակական** ածականներ. *որինակ՝* **սիրուն** *մատիտ,* **կարմիր** *մատիտ,* **մեծ** *մատիտ,* **փոքր** *մատիտ,* **բարակ** *մատիտ,* **աժան** *մատիտ,* **թանկ** *մատիտ,* **լավ** *մատիտ,* **վատ** *մատիտ և այլն։*

*Ցո՛ւյց տվեք վորակական ածականները հետևյալում.*

*Մենության խավար գնդանից կրկին*
*յես վերադարձա հզոր ու հպարտ,*
*և ինձ վողջունեց աղմուկը զվարթ*
*ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին։*
*Անխոս տանջանքիս գիշերում անքուն*
*իբր հուրը վառեց մի պայծառ կարոտ,—*
*Նոր սիրով լեցուն՝ դարձա յես ձեզ մոտ,*
*և նոր յերգեր են հնչում իմ հոգում։*

§ 42. *Այս շենքն ընդամենը* **յոթ** *սենյակ ունի. յուրաքան-չյուր սենյակ* **յերկու** *կամ* **յերեք** *լուսամուտ ունի։* **Չորրորդ** *ու* **հինգերորդ** *սենյակների լուսամուտները փողոցի կողմն են...*

*Այս հատվածում ընդգծված յոթ, յերկու... չորրորդ, հինգե-րորդ... բառերը թվական ածականներ են։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 49. Առարկաների թիվ ու համար ցույց տվող ածականները **թվական** են կոչվում յեվ յերկու տեսակ են լինում.

ա. **Քանակական** ածական, վոր ցույց է տալիս առարկայի քանի կամ վորքան լինելը. *որինակ՝* **յերկու** *բաժակ,* **չորս** *մետր,* **հարյուր** *մարդ,* **տասներկու** *գրիչ։*

բ. **Դասական** ածական, վոր ցույց է տալիս, թե առարկան



վորեվե շարքում քանիերորդ տեղն է բռնում. *որինակ՝* **յերրորդ** *հար-կի* **չորրորդ** *սենյակը.* **հինգերորդ** *շարքի* **յերկրորդ** *նստարանը։*

ԿԱՆՈՆ 22. Դասական ածանցն է **րորդ**, վոր ավելանալով քա-նակական թվականների վրա՝ ստացվում է՝ *յերկ-***րորդ***=յերկրորդ, յեր-***րորդ***=յերրորդ, չոր-***րորդ***=չորրորդ, հինգե-***րորդ***=հինգերորդ, այսպես նաև՝ վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասնե-րորդ, տասնմեկերորդ, քաներորդ և այլն։*

*ՀԱՐՑ.*

*Ինչո՞ւ դասական թվականներից* **յերրորդ** *ու* **չորրորդ** *յերկու* **ր**-*ով են գրվում, իսկ մյուսները՝ մի* **ր**-*ով։*

*ՏԵՂԵԿԱՆՔ.*

*Յերրորդ բառի արմատն է՝* **յեր**, *չորրորդ բառինը՝* **չոր**։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 37. *Կազմեցե՛ք խոսքեր, վորոնց մեջ թվականներն առանց գոյականների գործածված լինեն, այ-սինքն՝ գոյականները զեղչված։*

*Ի՞նչ փոփոխություն կրեցին թվականները։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 50. Առարկայի անորոշ քանակ ցույց տվող ա-ծականները կոչվում են **անորոշ** ածականներ. *որինակ՝* **շատ** *մար-դիկ,* **միքանի** *մարդ,* **քիչ** *հաց,* **սակավ** *ջուր,* **բավականին** *պա-շար,* **վորեվե** *գիրք,* **բոլոր** *գրքերը և այլն։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 51. Այն անորոշ ածականները, վորոնք հարցա-կանով են գործածվում, **հարցական** ածական են կոչվում. *որի-նակ՝* **քանի՞** *գիրք,* **վո՞րքան** *ժամանակ,* **ի՞նչպիսի** *սենյակ,* **քա-նի՞երորդ** *սենյակը և այլն։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 52. Ցուցական դերանունները *(տես սահմանում 28)* դրվելով առարկայի անվան վրա՝ ցուցական ածականների նշա-նակություն են ստանում. *որինակ՝* **այս** *գիրքը,* **այդ** *գրիչը,* **այն** *տետրակը։*

ԿԱՆՈՆ 23. Այն գոյականը, վոր ցուցական ածական ունի, վերջից **ը** կամ **ն** հոդն է ընդունում. *որինակ՝ այս գիրքը, այդ գիր-քը, այն գիրքը (տես կանոն 4)։*

*Ցո՛ւյց տվեք ածականները.*

*1. Յելան, սահեցին հանկարծ*
*փողոցի ամառվա փոշում —*
*բյուրավոր բանակներ անահ —*
*գրահապատ բանակներ ուժի։*

Շողացին սվիններ, սրեր,—
յերգեցին կրծքեր հզոր—
դրոշներ ծփացին արնավառ—
դրոշներ՝ կարմիր, բոսոր...
(ՆԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ամենապոեմ»)

2. Բարձրաբերձ սարերն ի վեր սողաց իժն ու փռվեց այն-տեղ խոնավ կիրճի մեջ և կծիկ դարձած՝ դիտում եր ծովը։ Բարձր յերկնակամարի վրա փայլում եր արևը, ու լեռները տոթազին շնչում եյին յերկինքն ի վեր, և ցածրում ալիքները զարնում եյին ամրակուռ քարին... Գլխովին ճերմակ փրփուրի փոխված,ա-լեզարդ-հուժկու, ճեղքում եր սարը և ծովը թափվում՝ ցասկոտ կոկանով։
(ՆԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Բազեյի յերգը»)

3. Հազար ու հազար արնոտ լուսերով
ջահերն են վառվում սև դաշտերի մեջ.
բոցավառ նավթը հուր կաթիլներով
թափվում է գետին,
գետինը ներկում դեղին ու կարմիր
և նարնջագույն փայլուն բծերով։
Ջահերի շուրջը
մկտնուտ, հուժկու բազուկների մեջ
ցցվել են ահա ալ-կարմիր ու սև
դրոշակների յերկայն ձողերը։
(ՆԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ապստամբություն»)

Դիտեցեք ստորակետի կիրառությունը ստորեվ բերած հատվածներում պատահած ածականներից հետո.

1. Ու խոլ պատկերներ՝ տգեղ, այլանդակ,
անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ...
(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Լոռեցի Սաքոն»)

2. Յեվ իմ հոգին՝ անխախտ, հպարտ, աներեր,
կայանը իր՝ մոլորակներն է ընտրել...
(ՆԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ոդաչու»)

3. Մեր դպրոցի առաջին, յերկրորդ, յերրորդ խմբերը ներ-քևի հարկումն են գտնվում։
4. Այս գեղեցիկ արձանը նոր են կանգնեցրել։
5. Այդ առաջին բարձր տունը պետք է տեսնել։
6. Մեր այս պողպատյա սիրուն դանակը...



Յե՞րբ են իրար հաջորդող ածականներն ստորակետով բա-ժանվում իրարից և յերբ չեն բաժանվում։
ԿԱՆՈՆ 24. Յերբ վորևե գոյականի վրա դրված յեվ իրար հա-ջորդող ածականները նույն տեսակին են պատկանում, նույն հար-ցին պատասխանող ածականներ են, իրարից բաժանվում են ստո-րակետով. յեթե այդ ածականներից վերջին յերկսի միջեվ շաղկապ է դրված (յեվ, ու), այդ դեպքում ստորակետ չի դրվում։ Օրինակ՝ մեր դպրոցի առաջին, յերկրորդ, յերրորդ խմբերը կապակցության մեջ առաջին, յերկրորդ և յերրորդ բառերը խմբերը բառի վրա դրված ածականներն են և բոլորն էլ դասական ածականներ են, ուստի իրարից բաժանված են ստորակետով։
Տարբեր տեսակի ածականներ իրար հաջորդելու դեպքում ստորակետով չեն բաժանվում։ Օրինակ՝ մեր այս պողպատյա սի-րուն դանակը՝ կապակցության մեջ մեր, այս, պողպատյա, սի-րուն բառերը դանակը բառի վրա դրված տարբեր տեսակի ա-ծականներ են. մեր—ստացական ածական է և պատասխանում է ո՞ւմ հարցին. այս — ցուցական ածական է և պատասխանում է վո՞ր հարցին, պողպատյա—դանակի ինչ նյութից պատրաստված լինելն է ցույց տալիս, իսկ սիրուն — վորակական ածական է և պատասխանում է ի՞նչպիսի հարցին. Տարբեր տեսակի ածական-ներ լինելով՝ այդ բառերն իրարից ստորակետով չեն բաժանվում։
Դիտեցեք ածականների դասավորությունն իրենց գոյա-կանների նկատմամբ.
Կապույտ, կարմիր, դեղին ժապավեններ.—լավ թուղթ.—յեր-կու մարդ,—յերրորդ նստարանը,—այս տղան.—ինչպիսի թուղթ, շատ ծառեր.—կտրած բաժակ.
ՍԱՀՄԱՆՈՒՄ 53. Ածականները սովորաբար իրենց գոյականից առաջ են դրվում. այսպիսով՝ ածականը նախադաս է լինում։
Դիտեցե՛ք ածականների դասավորությունն իրենց գոյա-կանների նկատմամբ՝ ստորեվ բերված օրինակներում.
Բայլշևիկ է Շիր-կանալը — մի աժդահա հեքիաթային. — ցան-վայրերը լերկ ու բարբաղ,—հոգսը քաշող ամեն մարդի.— ցան-ցել է իր արյունատար յերակներով համատարած (Հ. ՀԱԿՈԲՅԱՆ)։
Խորհրդային ազատ առավոտը խնդուն.—նորից հայացքներ մեր պատրաստ աշխատանքի. — մեր սառ.—այդ մեր բանակն է կուռ, պատրաստ աշխատանքի. — մեր կրծքերը յերկար.—մեր ձեռները կոշտ.—մեր ճակատը հպարտ (Ա-ԼԱԶԱՆ)։

*Այս գարունը, վոր հիմա զրնգում է յերկրում* **մեր**. — *Զըր-րնգում է մեր յերկրում ձեր բանակը հիմա* **հոծ** *(ՅԵ. ՉԱՐԵՆՑ)*։

*Հացաշատ Շիրակի դաշտերով՝* **մեկ**.—*դաժան ապառաժն* **այս**.— *մարդկային շարաններ* **յերեսուն**. — *իմ յերկրի շենքերը, ծխնե-լույզները* **բա՛րձր**,—*հին յերկիրն* **այս ժանգակալած**.— *ժայռերից իջնող շարքերը* **ձեր**. — *պողպատե յերկրի տերն եք* **հպարտ**, *(Գ. ԱԲՈՎ)*։

ՍԱՀՄԱՆՈՒՄ *54*. Ածականը հաճախ կարող է գոյականից հե-տո դրվել, այսպիսով՝ ածականը յետադաս է լինում։ Այս տեսակի դասավորությունը **շրջում** է կոչվում։ *Շրջումը մեծ մասամբ վո-տանավոր գրվածքների մեջ է գործածվում, սակայն արձակ գըր-վածքներում էլ կարող է գործածվել։*

*Շրջումները կարելի յե ուղղել— բառերի սովորական* **շարա-դասություն** *ստեղծել. որինակ՝ վերևի շրջումները կարելի յե ուղ-ղել հետևյալ կերպ.*

*Մի* **հեքիաթային** *աժդահա.—* **լերկ** *ու* **բարբաջ** *վայրերը.—* **ամեն մարդի** *հոգսը քաշող.—* **համասարած** *յերակներով. —* **խըն-դուն** *առավոտը.—մեր* **յերկար** *կրծքերը.— մեր* **կուռ** *ձեռները.— մեր* **հպարտ** *ճակատը.—***մեր** *յերկրում.— ձեր* **հոծ** *բանակը.—* **այս** *ապառաժը.* **յերեսուն** *շարաններ.— Բարձր շենքերը, ծխնելույզ-ները.—պողպատե յերկրի* **հպարտ** *տերն եք։*

*Դիտեցե՛ք շրջումները հետևյալ հատվածներում յեվ աշ-խատեցեք փոխել սովորական շարադասության.*

*Մի՞թե «ազգադավ» կարգերը,*
*բարքերը* **մեր**
*Տանելի դարձան քեզ...*
*Դժվար*
*Էլ իմ քրտինքով*
*Դու ներկես կաշիդ* **փափուկ**,
*Դժվար թե խաբես դու ինձ*
*Աչքերիդ փայլով* **ծախու**։
*(ԱԼԱԶԱՆ՝ «Որբերդ Ոլգա»)*

*Լաստս տանում է ինձ*
*Դեպի ովկիանն* **անծայր**,
*Ուր թափվում են*
*Աշխարհի գետերը* **բոլոր** —
*Աշխարհի քրտինքը* **բոլոր**, —



*Շառաչող ովկիան....*
*Լողում են լաստանավեր* **հազա՛ր-հազա՛ր**...
*Լողում են առաջ*
*Լողվորներ* **միլիոն** *ու* **կրկին միլիոն**
*Նրանք, վոր ուժ ունեն*
*Բազուկներում* **իրենց**....
*Վոր գիտեն շարժել թիերն* **իրենց**....
*Գալիս են, գալիս են, գալիս*
*Ջուլհելու հուզված սրտին*
**Մեծ ովկիանի**...
*(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Լաստանավորդներ»)*

*Յերեկ, անապատումը* **մեր**
**Անծիր, անսահման**...
*Յերեկ, ավազխումն* **Էլ-Սամի**...
*Այն վո՞ր քարավանն էր* **աղեղնավոր**...
*(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Վե՛ր կաց, սիրելիս»)*

*Կանգնած հնդիկ զինվորներ* **հիսունմեկ**
*Դեմառդեմ շարքերի* **անանց**...
*Մի ջահել սպա* **սպիտակ**
*Յեկած Լոնդոնից* **հեռավոր**,
*Տալիս է հրաման* **կտրուկ**...
*Գեղջուկները* **սևուկ Հինդի**,
*Կարոտ որերին* **ազատ**,
*Զինների գլխին* **են** *թափում*
*Գնդակներ* **հազար-հազար**...
*Թռչում է Շանհայից հեռու*
*Խոհուն միտքը* **Ռամ-Ռոյի**,
*Ռամ-Ռոյի հոգին* **յեռուն**...
*Հեյ-հե՜յ, հեռավոր Հինդում,*
*Բիխուրի գավառում* **փոքրիկ**,
*Հայրենի գյուղն է յերևում,*
*Գյուղը* **աշխատող** *ու* **սոված**...
*(Ա. ՎՇՏՈՒՆԻ՝ «Ռամ-Ռոյը»)*

*Շտկեցեք հետևյալ շրջումները.*

*Գրչովն* **իմ պրոլետ-պոետի**,
*Իմ կոպիտ, անտաշ տողերով*

Մանյակներ՝ մաքուր մարգարտից,
Գիտեմ, վոր շարել չեմ կարող։
(Ն. ԶԱՐՅԱՆ)

(Պրոլետ-պոետի իմ գրչով, իմ կոպիտ, անտաշ տողերով, գիտեմ, վոր մաքուր մարգարտից մանյակներ շարել չեմ կարող)։

Բյուրավոր բանակներ յելան՝
Վիթխարի, համարձակ, անահ...
Յելան բյուրավոր մարտիկներ,
Զինվորներ՝ յերկաթե, բրոնզե...
Բյուրավոր բանակներ անահ,
Զրահապատ բանակներ ուժի...
Դրոշներ ծփացին արնավառ,
Դրոշներ կարմի՜ր, բոսոր...
Ծփծփում էր բանակը հոծ...
Վառվում էր արև մի բոսոր...
Թվաց, թե հարսանիք է մի...
Ուրալից դեպի Կարպատները լուրթ...
Գործարաններում վիթխարահսկա,
Վորոնց յերկաթե շչակները բյուր...
Յերազներ՝ մահի, արյունի, հրի...
Դիակի բերդեր ու բուրգեր մսե...
Բանակներ բազում ու բազմամիլիոն...
Կանգնեցին քաղաքներ մսե...
Յերկիր մի՝ գարերի ուրու...
Գալիս էր Մոսկովից դեղին...
Իր ստեպները անծայր ու լեն...
Կանչեց աշխույժով հրձիգ...
Բանվորներ ամբողջ յերկրի...
Սա չէ մեր կռիվը վերջին...
Իսկ յեթե հույսերից իմ այս վառ...
Մեծ աշխատանքդ հզոր, անծիր...
Թե խաբեն որերն այս հրկեզ...
(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

## ՀԱՏԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

§ 43. Մեր դասարանն ավելի մեծ դասարան է, քան ձեր դասարանը։ Այս դասարանը դպրոցում ամենամեծ դասարանն



է։— Ավելի մեծ, ամենամեծ — հատկության աստիճաններ են ցույց տալիս։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 55. Հատկության աստիճանները յերկու յեն.

ա) **Բաղդատական**, յերբ հատկությունը համեմատվում է մի այլ առարկայի հատկության հետ յեվ մեկի մեջ ավելի կամ պակաս է նկատվում. օրինակ՝ ավելի լավ, ավելի վատ, ավելի մեծ, պակաս խելոք։

բ) **Գերադրական**, յերբ համեմատության մեջ մի առարկայի հատկությունը գերազանցում է այդ առարկայի հետ հատկությամբ համեմատվող բոլոր առարկաների հատկությանը. օրինակ՝ ամենալավ (ամենից լավ), ամենավատ (ամենից վատ) և այլն։

Յերբ առարկայի հատկությունը չի համեմատվում և չի սաստկացվում, ածականը դրական աստիճան է դրվում։

Յերբ առարկայի հատկությունը բարձրացվում կամ իջեցվում է առանց համեմատության, հատկության աստիճանը սաստկական է կոչվում. օրինակ՝ խիստ ցուրտ, չափազանց տաք։

ԿԱՆՈՆ 25. Գերադրական աստիճանն արտահայտող բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերը (ամեն բառով բարդված) միասին են գրվում, իբրեվ մի բարդ բառ. օրինակ՝ ամենալավ, ամենամեծ՝ բայց՝ ամենից լավ, ամենից մեծ։

ԿԱՆՈՆ 26. Յերբ գերադրական աստիճանն արտահայտող բարդության առաջին բաղադրիչ մասը (ամեն) դրվում է ձայնավորով սկսվող բառի վրա, հակառակ հոդակապի սովորական կանոնի (տես կանոն 9) ա հոդակապ դրվում է. օրինակ՝ ամենաազնիվ, ամենաուրախ, ամենաընդունակ և այլն։

§ 44. Յես յերեք տեսակի մատիտ ունեմ՝ սև, կարմիր և կապույտ։ Ամենից շատ սեվով եմ գրում. Կարմրով ու կապույտով նկարում եմ։ Այսոր կարմիր մատիտով վարդ նկարեցի, իսկ կապույտ մատիտով՝ մանուշակ։

ՀԱՐՑ.

Յե՞րբ են ածականները հոլովվում, յերբ չեն հոլովվում։
Ի՞նչպես են հոլովվում ածականները։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 56. Յերբ ածականները դրվում են գոյականի հետ, անփոփոխ են մնում (բարի մարդ, բարի մարդու, բարի մարդկանցից). յերբ գոյականը զեղչվում է, չի դրվում, նրա ածականը, գոյականաբար գործածվելով ու համապատասխան հոդ ըն-

Մանյակներ՝ մաքուր մարգարտից,
Գիտեմ, վոր շարել չեմ կարող։
(Ն. ԶԱՐՅԱՆ)

*(Պրոլետ-պոետի իմ գրչով, իմ կոպիտ, անտաշ տողերով, գիտեմ, վոր մաքուր մարգարտից մանյակներ շարել չեմ կարող)։*

Բյուրավոր բանակներ յելան՝
**Վիթխարի, համարձակ, անահ...**
Յելան բյուրավոր մարտիկներ,
Զինվորներ՝ **յերկաթե**, բրոնզե...
Բյուրավոր բանակներ **անահ**,
Զրահապատ բանակներ **ուժի**...
Դրոշներ ծփացին **արնավառ**,
Դրոշներ **կարմի՛ր, բոսոր**...
Ծփծփում եր բանակը **հոծ**...
Վառվում եր արև **մի բոսոր**...
Թվաց, թե հարսանիք է **մի**...
Ուրալից դեպի Կարպատները **լուրթ**...
Գործարաններում **վիթխարահսկա**,
Վորոնց յերկաթե շչակները **բյուր**...
Յերազներ՝ **մահի, արյունի, հրի**...
Դիակի բերդեր ու բուրգեր **մահ**...
Բանակներ **բազում** ու **բազմամիլիոն**...
Կանգնեցին քաղաքներ **մահ**...
Յերկիր **մի՝ դարերի ուրու**...
Գալիս եր Մոսկովից **գեղին**...
Իր ստեպները **անծայր** ու **լեն**...
Կանչեց աշխուժով **հրձիգ**...
Բանվորներ **ամբողջ յերկրի**...
Սա չե մեր կռիվը **վերջին**...
Իսկ յեթե հույսերից **իմ այս վառ**...
Մեծ աշխատանքդ **հզոր, անծիր**...
Թե խաբեն որերն **այս հրկեզ**...

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

## ՀԱՏԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

§ 43. *Մեր դասարանն* **ավելի մեծ** *դասարան է, քան ձեր դասարանը։ Այս դասարանը դպրոցում* **ամենամեծ** *դասարանն է։*— **Ավելի մեծ, ամենամեծ** — *հատկության աստիճաններ են ցույց տալիս։*



ՍԱՀՄԱՆՈՒՄ 55. Հատկության աստիճանները յերկու յեն.

ա) **Բաղդատական**, յերբ հատկությունը համեմատվում է մի այլ առարկայի հատկության հետ յեվ մեկի մեջ ավելի կամ պակաս է ընկալվում. *օրինակ՝ ավելի լավ, ավելի վատ, ավելի մեծ, պակաս խելոք։*

բ) **Գերադրական**, յերբ համեմատության մեջ մի առարկայի հատկությունը գերազանցում է այդ առարկայի հետ հատկությամբ համեմատվող բոլոր առարկաների հատկությանը. *օրինակ՝ ամենալավ (ամենից լավ), ամենավատ (ամենից վատ) և այլն։*

*Յերբ առարկայի հատկությունը չի համեմատվում և չի սաստկացվում, ածականը* դրական *աստիճան է դրվում։*

Յերբ առարկայի հատկությունը բարձրացվում կամ իջեցվում է առանց համեմատության, հատկության աստիճանը **սաստկական** է կոչվում. *օրինակ՝* **խիստ** *ցուրտ,* **չափազանց** *տաք։*

ԿԱՆՈՆ 25. Գերադրական աստիճանն արտահայտող բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերը (**ամեն** *բառով բարդված*) միասին են գրվում, իբրև մի բարդ բառ. *օրինակ՝ ամենալավ, ամենամեծ՝ բայց՝ ամենից լավ, ամենից մեծ։*

ԿԱՆՈՆ 26. Յերբ գերադրական աստիճանն արտահայտող բարդության առաջին բաղադրիչ մասը *(ամեն)* դրվում է ձայնավորով սկսվող բառի վրա, հակառակ հոդակապի սովորական կանոնի *(տես կանոն 9)* ա հոդակապ դրվում է. *օրինակ՝ ամենաազնիվ, ամենաուրախ, ամենաընդունակ և այլն։*

§ 44. *Յես յերեք տեսակի մատիտ ունեմ՝ սև, կարմիր և կապույտ։ Ամենից շատ* **սեվով** *եմ գրում.* **կարմրով** *ու* **կապույտով** *նկարում եմ։ Այսօր* **կարմիր մատիտով** *վարդ նկարեցի, իսկ* **կապույտ մատիտով**՝ *մանուշակ։*

*ՀԱՐՑ.*

*Յե՞րբ են ածականները հոլովվում, յերբ չեն հոլովվում։*
*Ի՞նչպես են հոլովվում ածականները։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 56. Յերբ ածականները դրվում են գոյականի հետ, անփոփոխ են մնում *(բարի մարդ, բարի մարդու, բարի մարդկանցից)*. յերբ գոյականը զեղչվում է, չի դրվում, նրա ածականը, գոյականաբար գործածվելով ու համապատասխան հոդ ըն-

դունելով *(ս, դ, ն, (ը))*, հոլովվում է *(բարի, բարու, բարիներից.— կարմիրս, կարմրիս, կարմիրներիցս)*։

Ածականների հոլովումը նման է գոյականների հոլովման։

## Դ. ԲԱՅ

### 1. ԲԱՅ, ԹԻՎ ԵՎ ԴԵՄՔ

§ 45. *Մայրս վերջին անգամ* **գրկեց** *ինձ,* **համբուրեց** *և* **ասաց**.

— **Գնա՜ս** *բարով...*

*Հայրս* **չհամբուրեց** .. *Յես* **գնում եյի** *մի արդյունաբերական քաղաք, ուր* **ձգտում եյին** *ամենքը*։

*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Դեպի պանդխտություն»)*

2. *Յես* **նկարում եմ**, *դու* **կարդում ես**, *իսկ Սիրուշը* **խաղում է**։ *Փոքրիկ Վաչիկը* **հիվանդ է**. *նա* **պառկած է** *անկողնում*։

**Գրկեց, համբուրեց, գնաս, գնում եյի...—բայեր են**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ *57*. **Բայ** կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե այս կամ այն առարկան ի՛նչ է անում, ի՛նչ է լինում, ի՛նչ դրության մեջ է, ու մենակ կարող են խոսք կազմել։

Բացի բայից, մյուս բառերը մենակ խոսք կազմել չեն կարող։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 38. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք բայերը.*

*Լույսը դեռ նոր եր բացվել, յերբ յես քնից արթնացա, ըդգեստներս հագա ու լվացվեցի։ Թեյը պատրաստ եր։ Նախաճաշեցի, գրքերս վերցրի, քայլերս դեպի դպրոց ուղղեցի։ Աշակերտները խաղում եյին բակում։ Սպասում եյի, վոր զանգը հնչի, վորից հետո դասարան հավաքվեյինք, ուսուցիչը գար, պարապմունքն սկսվեր։*

§ 46. 1. *Յեկավ վիթխարի ծերունի մի մարդ,*
*կանգնեց վրդովված տղերանց միջին,*
*մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ՝*
*եսպես նա պատմեց, զոռ տալով չիբուխին...*

2. *Ես վոր լսեցին, դես ու դեն ցրված*
*տղերքը ճեպով ձորը ներս մտան*
*ու մտի տակին, ճամփիցը ծռված,*
*յերկու մարդու թարմ վոտնատեղ գտան։*

*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)*



ՍԱՀՄԱՆՈՒՄ *58*. Բայերը յերկու թիվ ունեն—**յեզակի** և **հոգնակի**։ Յեզակի բայը ցույց է տալիս մի առարկայի կատարած գործողությունը կամ դրությունը, հոգնակի բայը՝ մեկից ավելի առարկաների։

§ 47. **Յես** *գրում եմ.* **դու** *գրում ես.* **նա** *գրում է։* **Մենք** *կարդում ենք.* **դուք** *կարդում եք.* **նրանք** *կարդում են։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *59*. **Յես** (ինքս), **դու** (ինքդ), **նա** (ինքը), **մենք** (ինքներս), **դուք** (ինքներդ), **նրանք** (իրենք) բայի արտահայտած **դեմքերն են**, վորոնցով անող կամ յեղող առարկայի գաղափարն է արտահայտվում։

Դեմքից անբաժան է թվի գաղափարը։

*Յես*—**առաջին** *դեմք կամ խոսող անձը.*

*դու*—**յերկրորդ** *դեմք կամ խոսակիցը.*

*նա*—**յերրորդ** *դեմք կամ վոչ խոսողը և վոչ խոսակիցը.*

*մենք*—**առաջին** *դեմք կամ խոսողը և իր հետ յեղածները.*

*դուք*—**յերկրորդ** *դեմք կամ խոսակիցը և նրա հետ յեղածները.*

*նրանք*—**յերրորդ** *դեմք կամ վոչ խոսողները և վոչ խոսակիցները։*

### 2. ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 48. *Աշակերտը կարդում է (այժմ, խոսելու րոպեյին)։— Աշակերտը կարդում եր, կարդալու յեր, կարդացել եր, կարդացած եր, կարդաց, կարդար, կկարդար, պիտի կարդար (անցյալում, խոսելու րոպեյից առաջ)։—Աշակերտը կարդալու յե, կարդա, կկարդա, պիտի կարդա (հետագայում, խոսելու րոպեյից հետո)։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ *60*. Բայի արտահայտած գաղափարներից մեկն է նաև **ժամանակը**, վոր ցույց է տալիս, թե բայի յեղելությունը յերբ է կատարվում։

Բայը յերեք ժամանակ ունի.

1. **Ներկա** ժամանակ, վոր ցույց է տալիս, թե բայի յեղելությունը կատարվում է խոսելու րոպեյին *(կարդում եմ, գրում ես)*։

2. **Անցյալ** ժամանակ, վոր ցույց է տալիս, թե բայի յեղելությունը խոսելու րոպեյից առաջ է կատարվել, կամ առաջ եր կատարվում *(յես գնացի, գնում եյի)*։

3. **Ապառնի** ժամանակ, վոր ցույց է տալիս, թե բայի յեղե-

յուբյունը խոսելու ռոպեյից հետո յե կատարվելու (*գնալու յեմ, գը-նամ, կգնամ, պիտի գնամ*)։

Բայերը փոփոխվում են դեմքով, թվով, ժամանակով։

*Ցույց տվեք բայերի ժամանակները հետեվյալ հատված-ներում.*

*1. ամպի տակից ջուր է գալիս,*
*դոշ է տալիս, փրփրում,*
*են ծում յարն է նստած լալիս*
*հոնգուր-հոնգուր են սարում։*

*2. . . . Ուռին*
*աղջիկ էր ինձ պես,*
*մնում էր յարին,*
*ու չեկավ նա տես...*
*Խեղճը դողալով՝*
*անհույս կռացավ,*
*դարդից չորացավ,*
*ուռենի դարձավ։*

*3. Յես կվառվեմ, հուր կդառնամ,*
*յես կհալվեմ, ջուր կդառնամ։*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)*

### 3. ԲԱՅԻ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

### ա. Հրամայական յեղանակ

§ 49. 1. *Արամ, առավոտյան շուտ* վե՛ր կաց, լվացվի՛ր, *նախաճաշդ* արա՛, վերցրո՛ւ *մեր զամբյուղը և* գնա՛ *շուկա, ճաշի համար անհրաժեշտ մթերքներ* գնի՛ր, *տուն բեր. ճանապարհին* մի՛ ուշանա, *սրա-նրա հետ յերկար* մի՛ խոսի։ *Հետո Շուշիկի հետ* գնացե՛ք *դպրոց, դասից յերբեք* մի՛ ուշանաք, *դասից հետո տուն* վերադարձեք։ *Գալիս, լրագրի այսօրվա համարը* վերցրե՛ք։ *Ասածներս* մ՛ի մոռանաք, *ճշտությամբ* կատարեցե՛ք։

*2. Վոչխարն են սարով*
- տո՛ւր տուր, տո՛ւն արի,
փախի՛ր *գիշերով*
*ու թագուն* արի՛։
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)*



*3. Ընկե՛ր բանվորներ,* բաց արե՛ք *ձեր աչքերը,* նայեցե՛ք *ձեր շուրջը, գոնե մի հայացք* գցեցե՛ք *այս քաղաքի փողոցների վրա։*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Կապիտալի աշխարհում»)*

4. Զա՛րկ, *թմբո՛ւկ,* զա՛րկ *ուժգին,* փչի՛ր *փող,* շեփորի՛ր,
նե՛տս թափվեք *դռներից ինչպես զորք մոլեգին*
*յեկեղեցին* – հեռացե՛ք, *աղոթողներ,*
*դպրոցները* — հեռացե՛ք, *աշակերտներ։*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Զա՛րկ, թմբուկ»)*

*Այս հատվածների մեջ բոլոր բայերը* հրամայական յեղանակով *են գրված։*

**Յեղանակը բայի արտահայտած գաղափարներից մեկն է, վորից յերեվում է, թե խոսողն ինչ կերպ է խոսում յեղելության մասին։** *Ուրեմն* **բայի արտահայտած գաղափարներն են՝ թիվ, դեմք, ժամանակ, յեղանակ ու յեղելություն։**

ՍԱՀՄԱՆՈՒՄ *61.* Հրամայական յեղանակը ցույց է տալիս, վոր խոսողը խոսակցին հրամայում է կամ հորդորում մի բան անելու կամ չանելու. վերջին տեսակի հրամայականը (*մի խոսի կամ մի խոսիր*) **արգելական հրամայական** է կոչվում։ Հրամայականի վրա հաճախ դրվում է նայեվ **մի** մեղմական մակբայը, վոր չպիտի շփոթել **մի՛** արգելական մակբայի հետ. *որ.՝* **մի** *գնա, նրան ասա՝ թող գա։* — **Մի** մեղմական մակբայը շեշտ չունի։

Հրամայական յեղանակն ունի յեզակի յեվ հոգնակի թիվ ու միայն մի դեմք (*2 րդ դեմք կամ խոսակիցը*), վորովհետեվ հրամա-յել կարելի յե միայն խոսակցին կամ խոսակիցներին։

ԿԱՆՈՆ *27.* Հրամայական յեղանակով արտահայտված բայի վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է դրվում. *որ.՝ գնա՛, ստա-ցի՛ր, հարցրո՛ւ։*

ԿԱՆՈՆ *28.* Արգելական հրամայականի շեշտը դրվում է ար-գելական **մի** բառի ձայնավորի վրա. *որ.՝ մի՛ գնա, մի՛ ստանա, մի՛ հարցնի։*

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 39. Հետեվյալ նախադասու-թյունների բայերը փոխեցե՛ք հրամայական յեղանակի ու գրե՛ք առեք. օրինակ՝ գնաս՝ գիրքս բերես—գնա՛, գիրքս բեր.*

*ա) Այս նամակը կարդաս։—Գնաս, ինձ համար ջուր բերես։—Մի գնաս, Արամին տեսնես և այս գիրքը նրան տաս։*

ը) Այս շշերը լցնես ու բերանները փակես։— Այդ մասին Արշակին մեկ հարցնես։—Փողն ինքդ ստանաս ու ինձ բերես։

գ) Կուտես ու համը կտեսնես։ Կգաս ու կիմանաս։ Այս բանը կանես ու կդառնաս։ Կգնես այնտեղ, կթողնես ու կգաս։ Կըփախցնես, կբերես։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 40. Հետեվյալ նախադասություններում հրամայական բայերը փոխեցեք արգելական հրամայականի ու գրի՛ առեք. որ.՝ Նամակն ստացի՛ր և ինձ բե՛ր— Նամակը մի՛ ստանա և ինձ մի՛ բերի։ Սեղանը մոտեցրու՛ պատին։— Հարցրու՛ և իմացի՛ր պատճառն ու ինձ ասա՛։— Նստի՛ր և դասերդ պատրաստի՛ր։— Վե՛ր-վեր թռի՛ր ու ձայն տո՛ւր։— Կորի՛ր այստեղից։—Փախի՛ր շուտով։ — Սառի՛ր ցրտից։ — Կե՛ր ու կշտացի՛ր։ — Կարդա՛ ու մարդ դարձի՛ր։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 41. Հետեվյալ նախադասություններում հրամայական բայերը փոխեցե՛ք արգելական հրամայականի՝ վոչ բառը բայերի վրա դնելով. որ.՝ Կե՛ր ու կշտացի՛ր.—վոչ կե՛ր, վոչ կշտացի՛ր, կամ՝ վոչ կե՛ր, վոչ էլ կշտացի՛ր։

Առ ու գնա՛։ Հասի՛ր, տե՛ս, ստացի՛ր ու բե՛ր։ Գրիգորին էլ ասա՛, Տիգրանին էլ, Հովհաննեսին էլ։ Հաց էլ կե՛ր, գործ էլ արա։ Արամ, աթոռը մոտեցրու՛, վրան բարձրացի՛ր, նկարը պատին կա՛խ տուր։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 42. Գտեք հետեվյալ բառերի հրամայականը յեվ արգելականը.

Գնալ, մնալ, կարդալ, գրել, սրել, յերգել, նկարել, զարմանալ, ստանալ, մեծանալ, հպարտանալ, կոտրատել, ջարդատել, փշրատել, մոտեցնել, հարցնել, կորցնել, փախցնել, թռչել, թռցնել, սառչել, սառցնել, տեսնել, հասնել, մտնել, չլինել, տանել, ուտել, կարդացնել, կոտրվել, հագնվել, սանրվել, գալ, տալ, լալ, պար գալ, թափ տալ, սիրտ անել, վեր կենալ, ականջ գնել, ծափ տալ։

## Բ. Յենթադրական յեղանակ

§ 50. 1. Այս շենքի բարձրությունը մոտավորապես հինգ մետր կլինի. յերկարությունը տասնհինգ մետր կլինի։ Այս շենքի դահլիճը հարյուր հիսուն մարդ կտանի։ Մեր ընթերցարանում մեր բոլոր լրագրերը կգտնես։



2. Ձեզ կհայհոյեն ու կծաղրեն, կասեն ու կհալածեն, ձեզ համար մտրակներ, գնդակներ ու բանտեր կպատրաստեն։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Կապիտալի աշխարհում»)

3. Գլխատության մռայլ ժամին գլուխդ վայր կբերես,
և զանգերը կղողանջեն, և դաշույնը կփաղփաղի,
ու մկանունք կդողդողեն և կլինի շքեղ հանդես,
մեծապայծառ տոն ու հանդես կարմիր արյան ու մետաղի։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Գլուխը»)

**Այս հատվածներում բոլոր բայերը գրված են յենթադրական յեղանակ։**

ՍԱՀՄԱՆՈՒՄ 62. Յենթադրական յեղանակը ցույց է տալիս, վոր խոսողը բայի յեղելության մասին յենթադրաբար է արտահայտվում, յենթադրում է կամ կասկած է հայտնում։

Յենթադրական յեղանակով գրած բայը միշտ ապառնի յե և ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ։ Ապառնի ներկան ցույց է տալիս մի յեղելություն, վոր ներկայի նկատմամբ ապառնի յե. որ.՝ նա կգնա։ Ապառնի անցյալը ցույց է տալիս մի յեղելություն, վոր անցյալի նկատմամբ ապառնի յե. որ.՝ նա կգնար։ Յենթադրականը բոլոր դեմքերն էլ ունի։

ԿԱՆՈՆ 29. Յենթադրականի վրա դրվող կ-ն ընդունված է բային կպած գրել—կգնա, կասի։

Յենթադրական յեղանակը, բացի իր բուն նշանակությունից, կարող է ցույց տալ՝

1. «Առածական ներկա»--առածների և ասացվածների մեջ. որ.՝ ձուկը ծովում կմեծանա,— կուշտը քաղցածին մանր կբրդի։

2. Սովորության ներկա յեվ անցյալ. օրինակ՝ ամեն որ վեր կկենա ու կլվացվի,—նա լավ կերակուր կեփի։

3. Կրկնության ներկա. օրինակ՝ որենը հինգ անգամ կգնա, կգա։

## ՊԱՏԿԵՐ

| **Յենթ. ապ. ներկա** | | **Յենթ. ապ. անցյալ** | |
|---|---|---|---|
| Յես կասեմ | մենք կասենք | յես կասեյի | մենք կասեյինք |
| դու կասես | դուք կասեք | դու կասեյիր | դուք կասեյիք |
| նա կասի | նրանք կասեն | նա կասեր | նրանք կասեյին |

ԿԱՆՈՆ 30. Յենթադրականի բացասական ձեվը կազմելու համար գործ են ածվում վոչ, չ. որ.՝ վոչ կգնամ և վոչ կասեմ, կամ՝ չեմ գնա և չեմ ասի։

## գ. Հարկադրական յեղանակ

§ 51. Դուք բոլորդ վաղը դպրոց պետք է գաք։ Դպրոցի ճակատը զարդարված պետք է լինի։ Ամենքս կարգ պետք է կանգնենք։ Բոլորս պետք է մասնակցենք տոնական թափորին։ Վոչվոք չպետք է բացակայի։ Վոչ պետք է խոսեք, վոչ շարքից դուրս գաք, վոչ իրար հրեք։ Որինակելի կարգապահություն պետք է լինի։ Թափորն առավոտյան ժամի տասին պետք է սկսվի։

Այս հատվածում բոլոր բայերը գրված են հարկադրական յեղանակով։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 63. Հարկադրական յեղանակը ցույց է տալիս, վոր խոսողը յեղելության մասին խոսում է իբրեվ անհրաժեշտության կամ մի անհրաժեշտ բանի մասին, կամ անհրաժեշտ ու ստիպողական է գտնում, վոր բայի յեղելությունն այս կամ այն կերպ լինի։

Հարկադրական յեղանակով գրված բայը միշտ ապառնի յե և նույնպես ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ ձևերը. որ.՝ յես պետք է գնամ. յես պետք է գնայի. — յես չպետք է գնամ. յես չպետք է գնայի.—յես վոչ պետք է գնամ և վոչ էլ պետք է տեսնեմ.—յես վոչ պետք է գնայի և վոչ էլ պետք է տեսնեյի։— Ունի բոլոր դեմքերը։

ԿԱՆՈՆ 31. Հարկադրական յեղանակի վրա դրվում է պետք է կամ պիտի բառերից մեկն ու մեկը, իսկ յերբ բայը բացասական է, այդ դեպքում չպետք է կամ չպիտի. որ.՝ չպիտի գնամ, չպետք է գնամ. կարելի յե նաև՝ պիտի չգնամ, պետք է չգնամ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 43. Կազմեցե՛ք ինքներդ հարկադրական ապառնի ներկայի յեվ հարկադրական ապառնի անցյալի խոնարհման պատկերը թե դրական յեվ թե բացասական։

## դ. Ըղձական յեղանակ

§ 52. 1. Աշոտ, գնաս Ոննիկի մոտ, ասես՝ գիրքը տա, վոր դասս պատրաստեմ. թե դու չկարողանաս, խնդրեմ Մինասին ասես՝ նա բերի. դե, սիրելիս, չմոռանաս, միտդ լավ պահես։ Բան է՝ թե Մինասին էլ չտեսնես, ինձ իմաց անես։



2. Կորչեմ բեզար, դադարկյուն,
քար-սարեսար, դադարգյուն,
մեռնեմ, պրծնեմ ես որից,
բալքի առնեմ դադար, քուն։
... վայ թե հանկարծ իմանա,
յես ազատվեմ ես ցավից,
աչքը լալով նա մնա։
(ՆԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

Այս հատվածում բոլոր բայերը գրված են ըղձական յեղանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 64. Ըղձական յեղանակը ցույց է տալիս, վոր ասողը կամ խոսողը ցանկանում է՝ այս կամ այն յեղելությունը կատարվի, լինի. ըղձականն իր նշանակությամբ հակառակ է հրամայական յեղանակին. որ.՝ ըղձական — գնաս՝ ջուր բերես, հրամայական —գնա՛, ջուր բե՛ր։

Ըղձականը հաճախ իր հետ կարող է ունենալ ցանկություն արտահայտող մի բառ. որինակ՝ յերանի՜, գոնե, ո՞ւր է թե և այլն։ Ըղձականի վրա հաճախ դրվում է մի մեղմական մակբայը (չշըփոթել մի՛ արգելականի հետ). որինակ՝ մի գնաս, նրան ասես։

Ըղձական յեղանակն ունի ապառնի նշանակություն և յերկու ձև՝ ըղձական ապառնի ներկա, ըղձական ապառնի անցյալ (որ.՝ գնամ, գնայի)։ Ունի բոլոր դեմքերը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 44. ա) Ինքներդ կազմեցե՛ք ըղձական ապառնի ներկայի յեվ ըղձական ապառնի անցյալի լրիվ պատկերը, վորեվե բայ վերցնելով իբրեվ որինակ ձեր կազմած պատկերը գրի առեք։

բ) Ցո՛ւյց տվեք, թե ըղձական, յենթադրական յեվ հարկադրական յեղանակների մեջ ձեվական յեվ իմաստի ինչ տարբերություններ կան. (որ.՝ տաս ռուբլի լինի, տաս ռուբլի կլինի, տաս ռուբլի պիտի լինի)։

բ) Կազմեցեք վորեվե բայի բացասական ըղձականի պատկերը՝ չ, վոչ ավելացնելով այդ բառի վրա։

Ըղձականի վո՞ր ձևն է գործածված հետևյալ վոտանավորներում.

1. Ա՛խ, յես յերանի
կայծակ լինեյի,
վորոտ-ճայթյունով

մռայլ ամպերից
ժայթքեյի ըմբոստ,
զարկեյի ուժգին,
պատռեյի խավար
կամարը յերկնի...
(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Բանաստեղծութ.»)

2. Կուզեյի՝ հնչեր իմ փողն ահարկու,
թնդացներ սրտեր յուր ձայնով հուժկու,
քնածը զարթներ, թույլն արիանար՝
կռվելու մինչ մահ՝ սուրբ գործի համար։
(ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ «Բանաստ.»)

3. Յերբ Զինի ազատ կանչը հնչի,
Յերբ թնդա սիրտը Զինի,
Զինի քեզ,
Դահիճ չինի,
Հրաման տա —
— Առաջ, կրակ։
(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Ռամ-Ռոյը»)

## Ե. Սահմանական յեղանակ յեվ նրա ժամանակները

§ 53. Այսօր արևը պայծառ ժպտում է. ամեն ինչ վողողված է նրա շողերով։ Առավոտյան դեռ շատ վաղ վեր եմ կացել. ահա նախաճաշում եմ, վորից հետո գնալու յեմ դպրոց։ Ժամի յոթը խփեց։ Քայլերս ուղղում եմ դեպի դպրոց։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 65. **Սահմանական** յեղանակը ցույց է տալիս, վոր ասողը յեղելության մասին խոսում է իբրև իրական, ճիշտ մի բանի մասին։ Այսպիսով սահմանական յեղանակը խիստ տարբերվում է բոլոր մյուս յեղանակներից, վորոնք կամ յենթադրություն ու կասկած, կամ անհրաժեշտություն, կամ ցանկություն յեվ կամ հրաման են արտահայտում։

§ 54. 1. Յես կարդում եմ, դու գրում ես, նա նկարում է։ Մենք կարդում ենք, դուք գրում եք, իսկ նրանք նկարում են։



2. Անլռելի վշշում է
պղտոր ջուրը Դեբեդի,
Նրա ափին կանաչում է
մենակ շիրիմ իգիթի...
Ու խոսում է գիշեր-ցերեկ
արցունքն անբախտ աղջկա,
բայց իր սիրած տղեն յերբեք
չկա՛, չկա՛ ու չկա՛...
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի ներկա ժամանակ (անկատար կամ բուն ներկա)։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 66. **Անկատար ներկան** (կամ բուն ներկան) ցույց է տալիս մի յեղելություն, վոր տեղի յե ունենում խոսելու ռոպեյին յեվ դեռ շարունակվում է։ Ունի բոլոր դեմքերը։

Անկատար ներկան բացի իր բուն նշանակությունից, կարող է ցույց տալ՝

1. «**Մշտակատար ներկա**», ամեն ժամանակի համար ընդունելի ճշմարտություններ. որ.՝ Յերևանը քաղաք է... յերկիրը պտտվում է արևի շուրջը։

2. «**Առածական ներկա**»,—խոսք ու կարծիք՝ ամեն ժամանակի համար արժեք ունեցող. որ.՝ ճտերն աշնանն են համրում։

3. «**Սովորության ներկա**», — որ.՝ հարսանիքներն աշնանն ու ձմեռն են անում։

4. «**Կրկնության ներկա**», — որ.՝ նա առավոտները լողանում է։

5. «**Պատմական ներկա**», — յերբ անցած բանը ներկայով ենք պատմում, վոր կենդանի լինի. որ.՝ վերցնում է իր զորքը, գնում է կռվի դաշտ, ջարդում թշնամուն։

6. «**Նկարագրական ներկա**»,— որ.՝ ծառերն են։ Ծառերի տակը՝ հողն է։ Հողի տակ մարդիկ են (Մ. ԱՐՄԵՆ)։

ԿԱՆՈՆ 32. Անկատար ներկայում՝ **եմ, ես, է, ենք, եք, են**,— միշտ առանձին են գրվում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 45. Ինքներդ կազմեցեք վորեվե բայի անկատար ներկայի պատկերը, դրական յեվ բացասական։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 46. Դրե՛ք հետևյալ բառերի անկատար ներկան.

Խոսել, տանել, նստել, նստեցնել, հարցնել, փախչել, փախ-

ցընել, ուտել, գալ, տալ, լալ, ջարդվել, կորվել, թափ տալ, պար գալ, սիրտ անել, լինել։

§ 55. Յես գնում եյի դպրոց, դու գալիս եյիր դեպի տուն. Աշոտը քեզ հետ եր։ Մենք գնում եյինք, դուք գալիս եյիք, նրանք յերգում եյին։

2. Նստում եր Հասոն ժայռերի գլխին։ Յեվ նվագում եր։ Վոչխարները լսելուն պես՝ թողնում եյին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս, Հասոյի շուրջը հավաքվում։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Լուր-դա-լուր»)

3. Կեսօրվա ժամի մեկն եր։ Ճաշի գնացած բանվորներին ճշտապահ շվին նորից գործի յեր կանչում...

Բանվորները խումբ-խումբ քայլում եյին դեպի գործարանը, մի պահ խռնվում դարպասի առաջ ու, ներս մտնելով, ցրվում ամեն մեկն իր տեղը։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Մարտակոչ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի **անկատար անցյալ** ժամանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ *67*. Անկատար անցյալը ցույց ե տալիս մի յեղելություն, վոր սկսված ե յեղել անցյալում (*խոսելու րոպեյից առաջ*) յեվ չի վերջացել։ Ունի բոլոր դեմքերը։

ԿԱՆՈՆ *33*. Անկատար անցյալում՝ **եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին**—միշտ առանձին են գրվում։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 47. Ինքներդ կազմեցե՛ք վորեվե բայի անկատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։*

*Խոսքեր կազմեցեք, վորոնց մեջ անկատար անցյալը ցույց տա՝*

*1. «Սովորության անցյալ».*
*2. «Կրկնության անցյալ»։*

§ 56. Մեր կոլլեկտիվի վորոշման համաձայն, վաղը մենք **գնալու յենք** եքսկուրսիա։ Մեզ հետ **լինելու յե** մեր ուսուցիչը։ **Հետազոտելու յենք** կաշվի գործարանը։ Ուսուցիչը **ցույց ե տալու և բացատրելու յե** կաշի պատրաստելու ձևերը։ Մեր եքսկուրսիան շարադրության նյութ **ե լինելու**։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի **ապառնի ներկա** ժամանակ։



ՍԱՀՄԱՆՈՒՄ *68*. Սահմանական յեղանակի **ապառնի ներկան** ցույց ե տալիս մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից հետո յե կատարվելու իբրեվ իրական մտադրություն, վորոշում կամ համոզում, հակառակ յենթադրականի (*տես § 25, վորոշում 45*)։

ԿԱՆՈՆ *34*. Ապառնի ներկայում՝ **յեմ, յես, յե, յենք, յեք, յեն** առանձին են գրվում։ **Յ** ավելանալու պատճառն այն ե, վոր նախորդ բառը վերջանում ե ձայնավորով (*գնալու յեմ*)։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 48. Ինքներդ կազմեցե՛ք վորեվե բայի ապառնի ներկայի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։*

§ 57. Յերեկվա վատ յեղանակի պատճառով մեր հետաձըգված եքսկուրսիան **լինելու յեր** առավոտյան։ **Մասնակցելու յեր** մեր ամբողջ կոլլեկտիվը։ Բոլորս մեր հուշատետրերը **վերցնելու եյինք** մեզ հետ։ **Հետազոտելու եյինք** կաշվի գործարանը և ապա շարադրության նյութ **եյինք դարձնելու**։

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի **ապառնի անցյալ** ժամանակ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ *69*. Սահմանական **ապառնի անցյալը** ցույց ե տալիս մի յեղելություն, վոր տեղի յեր ունենալու անցյալում իբրեվ իրական մտադրություն կամ համոզում, վորը, սակայն, զանազան պատճառներով տեղի չի ունեցել։ Ունի բոլոր դեմքերը։

ԿԱՆՈՆ *35*. Ապառնի անցյալում՝ **եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին** գրվում են առանձին։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 49. Ինքներդ կազմեցեք անկատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։*

§ 58. 1. Պետրոս, այսօր դասից **ուշացել ես**. զանգը վաղուց **տվել ե**. ընկերներդ **հավաքվել են** դասարան, ուսուցիչը ներս **ե մտել**, դասն **սկսվել ե**։

2. Յեվ դարերը, վոր **անցել են** մեր Նաիրյան փոշոտ ճամփով,
կարծես վոչինչ **չեն հարցրել** գալիքների թափին տենդոտ.—
**անց են կացել** նրանք խոժոռ ու **չեն նայել** յետև յերբեք
ու **թողել են** հյուղեր փոշոտ ու սրտամաշ մշուշ ու մեգ,
ու **թողել են** ժամեր անդեմ ու զանգերի յերազը ծեր,
ու **թողել են** թախիծ անթև ու հողագույն դիմագծեր։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Գյուղի յերգ»)

*3. Աստված է* **մեռել**, *յերկինք է* **փլել**,
*Յերկիրն է* **նեղվել**, *թե ովկիանոսն է տեղահան յեղել։*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ապստամբություն»)*

*Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի* **վաղակատար ներկա**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 70. **Վաղակատար ներկան** ցույց է տալիս մի յեղելություն, վոր ավելի վաղ է կատարվել, քան խոսելու ռոպեյին կատարվող մի ուրիշ յեղելություն *(դու այս գիրքը նոր ես կարդում, իսկ նա արդեն կարդացել է)*։

ԿԱՆՈՆ 36. Վաղակատար ներկայում՝ **եմ, ես, է, ենք, եք, են**— գրվում են առանձին։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 50. Ինքներդ կազմեցե՛ք վորեվե բայի վաղակատար ներկայի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։*

*§ 59. 1. Արևը դեռ* **չեր ծագել**, *մեր կոլլեկտիվը* **հասել եր** *սարի ստորոտը։ Ընկերներից մի քանիսն արդեն սարն* **եյին բարձրացել**, *տեղ* **եյին ընտրել**։

*2. Շները հալածել, խեղդոտել եյին նրան, անողորմ կերպով բզկտել նրա մորթին, մանուկները քարկոծ եյին արել։*
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Փողոցում»)*

*Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի* **վաղակատար անցյալ**։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 71. **Վաղակատար անցյալը** ցույց է տալիս մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից առաջ է կատարվել յեվ ավելի վաղ, քան անցյալում կատարվող վորեվե ուրիշ յեղելություն *(դու կարդում եյիր, իսկ նա արդեն կարդացել եր)*։

ԿԱՆՈՆ 37. Վաղակատար անցյալում՝ **եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին**—առանձին են գրվում։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 51. Ինքներդ կազմեցեք վորեվե բայի վաղակատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բացասական։*

*§ 60. Մեր դպրոցի շենքն այսօր* **մաքրված է**, *ամեն ինչ* **կարգի յե բերված**։ *Դասարաններում պատերից նկարներ, քարտեզներ ու դիագրամներ* **են կախ տված**։ *Դպրոցի մուտքի մոտ ազդ է* **կպցրած**՝ *վոտքերը մաքրելու և ապա ներս մտնելու մասին։*



*Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի* **հարակատար ներկա** *ժամանակ։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 72. **Հարակատար ներկան** ցույց է տալիս մի յեղելություն, վոր ավելի վաղ է կատարվել, քան ներկայում կատարվող մի ուրիշ յեղելություն. բացի այդ, յեղելությունը հարատեվում է մինչեվ խոսելու վայրկյանը *(դու նոր ես նստում, իսկ նա արդեն նստած է.—դու նոր ես քնում, իսկ նա արդեն քնած է)*։

ԿԱՆՈՆ 38. Հարակատարի **ած** վերջավորությունը գրվում է **ծ**-ով *(գրած, գրված, ջարդած, ջարդված)*։

ԿԱՆՈՆ 39. Հարակատար ներկայում՝ **եմ, ես, է, ենք, եք, են**՝ առանձին են գրվում։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 52. Ինքներդ կազմեցեք վորեվե բայի հարակատար ներկայի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական։*

*§ 61. Հրապարակի մեջտեղը* **շինված եր** *մի բարձր ամբիոն ճառախոսների համար։ Անհագին բազմություն* **եր հավաքված**։ *Շենքերի ճակատները* **զարդարված եյին** *կարմիր դրոշակներով, հեղափոխական գործիչների նկարներով, ծաղիկներով ու կանաչներով։ Մենք* **կանգնած եյինք** *ամբիոնի մոտ։*

*Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի* **հարակատար անցյալ** *ժամանակ։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 73. **Հարակատար անցյալը** ցույց է տալիս մի յեղելություն, վոր անցյալում մի ուրիշ յեղելությունից ավելի վաղ է կատարված, բացի այդ, հարատեվում է մինչեվ անցյալի մի ուրիշ յեղելություն *(դու յերեկ քնում եյիր, իսկ նա արդեն քնած եր)*։

ԿԱՆՈՆ 40. Հարակատար անցյալում՝ **եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին**—առանձին են գրվում։

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 53. Ինքներդ կազմեցեք վորեվե բայի հարակատար անցյալի խոնարհման պատկերը։*

*§ 62. 1. Դպրոցի դահլիճում* **ժողով ունեցավ** *աշխորհրդի ժողովը։ Նախագահը* **կարդաց** *օրակարգը. մի քանի լրացումներ* **յեղան**։ *Յուրաքանչյուր հարց առանձին առանձին քննության առարկա* **դարձավ**։ *Բոլոր վորոշումները քարտուղարն* **արձանագրեց**։

*2. Բակի լայն դռները* **բացվեցին**, *կառքն ու ձին* **անհետացան**, **ներս մտավ** *և ինքը տան տերը, դռները* **փակվեցին**։
*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Փողոցում»)*

3. Շոգենավը կես ժամի չափ կանգ առավ Հըդսընի առջև։ Շոգեշարժ նավակներով յեկան ինչ-վոր պաշտոնյաներ, կատարեցին ինչ-վոր ձևականություններ։ Այդ միջոցին նայեցի դեպի ովկիանոս և զարմացա։

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ամերիկայում»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի անցյալ կատարյալ։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 74. Անցյալ կատարյալը ցույց է տալիս մի յեղելություն, վոր խոսելու վայրկյանից պարզապես առաջ է կատարվել։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 54. Կազմեցեք վորեվե բայի անցյալ կատարյալի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական։

Ցույց տվեք բայերի անցյալ կատարյալն ու անկատարը հետեվյալ հատվածում.

Ծերունին գլխիկոր դուրս յեկավ հիվանդանոցի բակը և նստեց մի քարի վրա։ Նա մի ծանր ախ քաշեց, մուշտուկը հանեց գրպանից ու դրեց բերանին։ Ծուխը քուլա-քուլա վերև եր բարձրանում։ Ծերունին մի կողմից մուշտուկն եր քաշում ու մյուս կողմից ինքն իրեն խոսում. .

(ԱՆՈՒՇ՝ «Մանդոյր Սեթը»)

Ցույց տվեք առանձին ասացվածները, բայերը, ժամանակները յեվ յեղանակները հետեվյալ լոզունգներում.

Համ Կ (բ) Կ ԿԿ-ի լոզունգները Կարմիր Բանակի տարեդարձի առթիվ

— Իմպերիալիստները կատաղաբար պատերազմ են պատրաստում ԽՍՀՄ-ի դեմ։ Հակախորհրդային հալածանքն ուժեղանում է։ Կարմիր բանակ, արթուն կաց։

— Վողջույն համաշխարհային հեղափոխության զինված ջոկատ, Խորհրդային Միության մարտական փառապանծ պաշտպան Կարմիր բանակին։

— ՀամԿ(բ)Կ-ի Կարմիր բանակի առաջնորդն ու կազմակերպիչն է։ Ավելի սերտ համախմբենք բանակի մարտական շարքերը ՀամԿ(բ)Կ-ի և նրա լենինյան ԿԿ-ի շուրջը։

— Պայքար մղենք հանուն ինդուստրիացման, վոր հիմքն է կազմում սոցիալիզմի կառուցման և Խորհրդային Միության պաշտպանության։

— Փոխարինենք կուլակային տնտեսությունը խորհրդային



և կոլտնտեսություններով։ Լիկվիդացիայի յենթարկենք կուլակությունը՝ պորտաբույծների, արյունռուշտների և շահագործիչների այդ դասակարգը։ Պրոլետար, հիշիր, վոր կատարելով և գերակատարելով արդփին պլանը՝ դու ամրապնդում ես Խորհրդային Միությունը։

— Մեր հրավառ վողջույնը կարմրադրոշ Հեռավոր-արևելյան բանակին, նրա մարտիկներին, հրամանատարներին և քաղաշխատավորներին։ Փառք և պարծանք սոցիալիզմի մարտում զոհված հերոսներին։

— Նվաճենք տանկը և ինքնաթիռը, նվաճենք մոտորը։ Նվաճենք հզոր տեխնիկա Կարմիր բանակի համար։

— Կարմիր բանակի կոմյերիտական, առաջինը յեղիր ուսմամբ և կարգապահությամբ, ամենահմուտը տեխնիկայի յուրացման մեջ, առաջինը՝ մարտական դիրքերում։ Կեցցե լենինյան կոմյերիտմիությունը։

— Բանվորներ, գյուղացիներ և բանվորուհիներ - գեղջկուհիներ, անդամագրվեցեք ՊԱՏԸ-Ավիաքիմին, ուժեղացրեք յերկրի պաշտպանությունը։ Արհմիություններ, ավելի ուժ տվեք պրոլետարիատի ռազմական պատրաստությանը։

— Ջին դեռ յերկար ժամանակ լինելու յե մոտորի հավատարիմ օգնականը։ Կոլտնտեսություններ և խորհտնտեսություններ, մարտական ձի տվեք Կարմիր բանակին։

(«Խորհրդային Հայաստան», 1930 թ. № 41 (2597)

## ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

(Ընդհանուր պատկեր)

ա. ուտել. բ. ուտելիս (ուտելու, կերած) լինել

### I. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

#### 1. Անկատար ներկա

| | |
|---|---|
| ուտում եմ | ուտելիս եմ լինում |
| ուտում ես | ուտելիս ես լինում |
| ուտում է | ուտելիս է լինում |
| ուտում ենք | ուտելիս ենք լինում |
| ուտում եք | ուտելիս եք լինում |
| ուտում են | ուտելիս են լինում |

| | |
|---|---|
| չեմ ուտում | ուտելիս չեմ լինում |
| չես ուտում | ուտելիս չես լինում |
| չի ուտում | ուտելիս չի լինում |
| չենք ուտում | ուտելիս չենք լինում |
| չեք ուտում | ուտելիս չեք լինում |
| չեն ուտում | ուտելիս չեն լինում |

### 2. Անկատար անցյալ

| | |
|---|---|
| ուտում եյի | ուտելիս եյի լինում |
| ուտում եյիր | ուտելիս եյիր լինում |
| ուտում եր | ուտելիս եր լինում |
| ուտում եյինք | ուտելիս եյինք լինում |
| ուտում եյիք | ուտելիս եյիք լինում |
| ուտում եյին | ուտելիս եյին լինում |

| | |
|---|---|
| չեյի ուտում | ուտելիս չեյի լինում |
| չեյիր ուտում | ուտելիս չեյիր լինում |
| չեր ուտում | ուտելիս չեր լինում |
| չեյինք ուտում | ուտելիս չեյինք լինում |
| չեյիք ուտում | ուտելիս չեյիք լինում |
| չեյին ուտում | ուտելիս չեյին լինում |

### 3. Ապառնի ներկա

| | |
|---|---|
| ուտելու յեմ | ուտելիս եմ յեղել |
| ուտելու յես | ուտելիս ես լինելու |
| ուտելու յե | ուտելիս ե լինելու |
| ուտելու յենք | ուտելիս ենք լինելու |
| ուտելու յեք | ուտելիս եք լինելու |
| ուտելու յեն | ուտելիս են լինելու |

| | |
|---|---|
| չեմ ուտելու | ուտելիս չեմ լինելու |
| չես ուտելու | ուտելիս չես լինելու |
| չի ուտելու | ուտելիս չի լինելու |
| չենք ուտելու | ուտելիս չենք լինելու |
| չեք ուտելու | ուտելիս չեք լինելու |
| չեն ուտելու | ուտելիս չեն լինելու |

### 4. Ապառնի անցյալ

| | |
|---|---|
| ուտելու եյի | ուտելիս եյի լինելու |
| ուտելու եյիր | ուտելիս եյիր լինելու |



| | |
|---|---|
| ուտելու եր | ուտելիս եր լինելու |
| ուտելու եյինք | ուտելիս եյինք լինելու |
| ուտելու եյիք | ուտելիս եյիք լինելու |
| ուտելու եյին | ուտելիս եյին լինելու |

| | |
|---|---|
| չեյի ուտելու | ուտելիս չեյի լինելու |
| չեյիր ուտելու | ուտելիս չեյիր լինելու |
| չեր ուտելու | ուտելիս չեր լինելու |
| չեյինք ուտելու | ուտելիս չեյինք լինելու |
| չեյիք ուտելու | ուտելիս չեյիք լինելու |
| չեյին ուտելու | ուտելիս չեյին լինելու |

### 5. Վաղակատար ներկա

| | |
|---|---|
| կերել եմ | ուտելիս եմ յեղել |
| կերել ես | ուտելիս ես յեղել |
| կերել ե | ուտելիս ե յեղել |
| կերել ենք | ուտելիս ենք յեղել |
| կերել եք | ուտելիս եք յեղել |
| կերել են | ուտելիս են յեղել |

| | |
|---|---|
| չեմ կերել | ուտելիս չեմ յեղել |
| չես կերել | ուտելիս չես յեղել |
| չի կերել | ուտելիս չի յեղել |
| չենք կերել | ուտելիս չենք յեղել |
| չեք կերել | ուտելիս չեք յեղել |
| չեն կերել | ուտելիս չեն յեղել |

### 6. Վաղակատար անցյալ

| | |
|---|---|
| կերել եյի | ուտելիս եյի յեղել |
| կերել եյիր | ուտելիս եյիր յեղել |
| կերել եր | ուտելիս եր յեղել |
| կերել եյինք | ուտելիս եյինք յեղել |
| կերել եյիք | ուտելիս եյիք յեղել |
| կերել եյին | ուտելիս եյին յեղել |

| | |
|---|---|
| չեյի կերել | ուտելիս չեյի յեղել |
| չեյիր կերել | ուտելիս չեյիր յեղել |
| չեր կերել | ուտելիս չեր յեղել |

| | |
|---|---|
| չէյինք կերել | ուտելիս չէյինք յեղել |
| չէյիք կերել | ուտելիս չէյիք յեղել |
| չէյին կերել | ուտելիս չէյին յեղել |

**7. Հարակատար Ներկա**

| | |
|---|---|
| կերած եմ | — |
| կերած ես | — |
| կերած է | — |
| կերած ենք | — |
| կերած եք | — |
| կերած են | — |

———

| | |
|---|---|
| չեմ կերած | |
| (կամ կերած չ | — |
| չես կերած | — |
| չի կերած | — |
| չենք կերած | — |
| չեք կերած | — |
| չեն կերած | — |

**8. Հարակատար անցյալ**

| | |
|---|---|
| կերած էյի | — |
| կերած էյիր | — |
| կերած էր | — |
| կերած էյինք | — |
| կերած էյիք | — |
| կերած էյին | — |

———

| | |
|---|---|
| չէյի կերած | |
| (կամ կերած չէյի) | — |
| չէյիր կերած | — |
| չէր կերած | — |
| չէյինք կերած | — |
| չէյիք կերած | — |
| չէյին կերած | — |

**9. Անցյալ կատարյալ**

| | |
|---|---|
| կերա | ուտելիս յեղա |
| կերար | ուտելիս յեղար |



| | |
|---|---|
| կերավ | ուտելիս յեղավ |
| կերանք | ուտելիս յեղանք |
| կերաք | ուտելիս յեղաք |
| կերան | ուտելիս յեղան |

———

| | |
|---|---|
| չկերա | ուտելիս չեղա |
| չկերար | ուտելիս չեղար |
| չկերավ | ուտելիս չեղավ |
| չկերանք | ուտելիս չեղանք |
| չկերաք | ուտելիս չեղաք |
| չկերան | ուտելիս չեղան |

———

## II. ԸՂՁԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

**1. Ապառնի ներկա**

| | |
|---|---|
| ուտեմ | ուտելիս լինեմ |
| ուտես | ուտելիս լինես |
| ուտի(ե) | ուտելիս լինի |
| ուտենք | ուտելիս լինենք |
| ուտեք | ուտելիս լինեք |
| ուտեն | ուտելիս լինեն |

———

| | |
|---|---|
| չուտեմ | ուտելիս չլինեմ |
| չուտես | ուտելիս չլինես |
| չուտի | ուտելիս չլինի |
| չուտենք | ուտելիս չլինենք |
| չուտեք | ուտելիս չլինեք |
| չուտեն | ուտելիս չլինեն |

**2. Ապառնի անցյալ**

| | |
|---|---|
| ուտեյի | ուտելիս լինեյի |
| ուտեյիր | ուտելիս լինեյիր |
| ուտեր | ուտելիս լիներ |
| ուտեյինք | ուտելիս լինեյինք |
| ուտեյիք | ուտելիս լինեյիք |
| ուտեյին | ուտելիս լինեյին |

———

| | |
|---|---|
| չուտեյի | ուտելիս չլինեյի |
| չուտեյիր | ուտելիս չլինեյիր |
| չուտեր | ուտելիս չլիներ |
| չուտեյինք | ուտելիս չլինեյինք |
| չուտեյիք | ուտելիս չլինեյիք |
| չուտեյին | ուտելիս չլինեյին |

## III. ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

### 1. Ապառնի ներկա

| | |
|---|---|
| կուտեմ | ուտելիս կլինեմ |
| կուտես | ուտելիս կլինես |
| կուտի(ե) | ուտելիս կլինի |
| կուտենք | ուտելիս կլինենք |
| կուտեք | ուտելիս կլինեք |
| կուտեն | ուտելիս կլինեն |

| | |
|---|---|
| չեմ ուտի(լ) | ուտելիս չես լինի(լ) |
| չես ուտի | ուտելիս չես լինի |
| չի ուտի | ուտելիս չի լինի |
| չենք ուտի | ուտելիս չենք լինի |
| չեք ուտի | ուտելիս չեք լինի |
| չեն ուտի | ուտելիս չեն լինի |

### 2. Ապառնի անցյալ

| | |
|---|---|
| կուտեյի | ուտելիս կլինեյի |
| կուտեյիր | ուտելիս կլինեյիր |
| կուտեր | ուտելիս կլիներ |
| կուտեյինք | ուտելիս կլինեյինք |
| կուտեյիք | ուտելիս կլինեյիք |
| կուտեյին | ուտելիս կլինեյին |

| | |
|---|---|
| չեյի ուտի(լ) | ուտելիս չեյի լինի(լ) |
| չեյիր ուտի | ուտելիս չեյիր լինի |
| չեր ուտի | ուտելիս չեր լինի |
| չեյինք ուտի | ուտելիս չեյինք լինի |
| չեյիք ուտի | ուտելիս չեյիք լինի |
| չեյին ուտի | ուտելիս չեյին լինի |



## IV. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

### 1. Ապառնի ներկա

| | |
|---|---|
| պետք ե ուտեմ | ուտելիս պետք ե լինեմ |
| պետք ե ուտես | ուտելիս պետք ե լինես |
| պետք ե ուտի(ե) | ուտելիս պետք ե լինի |
| պետք ե ուտենք | ուտելիս պետք ե լինենք |
| պետք ե ուտեք | ուտելիս պետք ե լինեք |
| պետք ե ուտեն | ուտելիս պետք ե լինեն |

| | |
|---|---|
| չպետք ե ուտեմ | ուտելիս չպետք ե լինեմ |
| (պետք ե չուտեմ) | (չպետք ե ուտելիս լինեմ) |
| չպետք ե ուտես | ուտելիս չպետք ե լինես |
| չպետք ե ուտի(ե) | ուտելիս չպետք ե լինի |
| չպետք ե ուտենք | ուտելիս չպետք ե լինենք |
| չպետք ե ուտեք | ուտելիս չպետք ե լինեք |
| չպետք ե ուտեն | ուտելիս չպետք ե լինեն |

### 2. Ապառնի անցյալ

| | |
|---|---|
| պետք ե ուտեյի | ուտելիս պետք ե լինեյի |
| պետք ե ուտեյիր | ուտելիս պետք ե լինեյիր |
| պետք ե ուտեր | ուտելիս պետք ե լիներ |
| պետք ե ուտեյինք | ուտելիս պետք ե լինեյինք |
| պետք ե ուտեյիք | ուտելիս պետք ե լինեյիք |
| պետք ե ուտեյին | ուտելիս պետք ե լինեյին |

| | |
|---|---|
| չպետք ե ուտեյի | ուտելիս չպետք ե լինեյի |
| (պետք ե չուտեյի) | (չպետք ե ուտելիս լինեյի) |
| չպետք ե ուտեյիր | ուտելիս չպետք ե լինեյիր |
| չպետք ե ուտեր | ուտելիս չպետք ե լիներ |
| չպետք ե ուտեյինք | ուտելիս չպետք ե լինեյինք |
| չպետք ե ուտեյիք | ուտելիս չպետք ե լինեյիք |
| չպետք ե ուտեյին | ուտելիս չպետք ե լինեյին |

## V. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

կե՛ր ուտելիս չեղե՛ր կերե՛ք ուտելիս չեղե՛ք
մի՛ ուտի ուտելիս մի՛ լինի մի՛ ուտեք ուտելիս մի՛ լինիք

Ուտելիս լինել բայի պես խոնարհեցեք.
ուտելու լինել և կերած լինել.
գնալու լինել և գնացած լինել։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 55. Արտագրեցե՛ք՝ դրական բայերը բացասական դարձնելով յեվ, ընդհակառակը, բացասական բայերը՝ դրական.

Որ.՝ հարցրո՛ւ Տիգրանին, նա քեզ կասի այդ մասին։ Մի՛ հարցնի Տիգրանին, նա քեզ չիասի այդ մասին։

Ստացի՛ր այդ գրությունը և Արշակին տա՛ր։ –Սիսաք, գնա՛ ջուր բերես։—Արամը յեկե՞լ է, արդյոք։—Նրան ենք սպասում։—Յեկել է, տեսել ու գնացել։—Թե տեսել է և թե հետը խոսել։—Վոչ կարդացել է, վոչ էլ միտքը հասկացել։—Յես այդ բանը նոր եմ իմանում։—Գրիգորը գյուղ կգնար, յեթե կառք լինե՛ր։—Յերանի գնայի և նրան տեսնեյի։—Հերթը քոնն է, դո՛ւ պիտի գնաս։— Վոչ Շուշիկն է յեկել, վոչ էլ Վարսիկը։— Մենք հաճախ տեսնում եյինք նրանց։— Գյուղը քաղաքից հեռու չէ։— Նա կարոտ չի ոգնության։– Յեկ և այս բանը տես։— Յեթե գրադարան գնաս, այդ գիրքը կստանաս։— Լավ կանես, յեթե գնաս։— Մի՛ փախցնի, այդ իմն է։—Մի՛ հարցնի, պատասխանը չես ստանա։—Այդ տղան հինգ տարեկան կլինի։— Մեր գնացած ճանապարհը տաս կիլոմետր կլիներ։

Ցո՛ւյց տվեք բայերը՝ խոսքերը լրացնելով.

1. Ոխտն աղբյուրից ջուր է առել
կույս սափորով, լուռ ու մունջ,
ոխտը ծաղկից ծաղիկ քաղել,
կապել սիրո ծաղկեփունջ.
Ջուրն ու ծաղկունք աստղունք դրել,
խնդիրք արել աստղերին,
փափագ սրտով խնդիրք արել՝
բարի ժպիտն իր սերին...

(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ՝ «Անուշ»)



2. Ամառնամուտ է և ծիրան,
Անում է շուրջդ ամեն ինչ.
Արևն է վերևից ծորում,
Բուրում քաղցրություն,
Նարինջ։

Հույզերի ալիք մի անգին
Ցնփվում է վոլորտում իմ հոգու, —
— Ամառնամուտն է իմ կյանքի,
Վոր հոգուս դռներն է թակում։

Ամառնամուտ է ամենուր,
Անում կա շուրջս ճոնչող,
Ցավ գլխումս մութ մի հանելուկ
Բչփորում է բութ մի փորիչով...

(ԽՈՐԵՆ ՌԱԴԻՈ՝ «Ամառնամուտ»)

ՀԱՐՑ.

Ի՞նչն է պակասում խոսքերի մեջ։
Ի՞նչ ժամանակ են դրված բայերը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 56. Արտագրեցեք հետևյալ հատվածը՝ **ներկա ժամանակը փոխելով անցյալ կատարյալի**.

Որ.՝ Արամը գնում է տուն, տեսնում է մորը։—Արամը գնաց տուն, տեսավ մորը։

Լույսը բացվում է։ Փոքրիկ Սուրիկը զարթնում է քնից, լվացվում է, նախաճաշ անելուց հետո դպրոց է շտապում։ Ճանապարհին պատահում է իր ընկերոջը՝ Չարաճճի Լևիկին. յերկուսը միասին, կատակներ անելով, գնում են դպրոց։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 57. Արտագրեցե՛ք հետևյալ հատվածը՝ **բայերի առաջին դեմքը յերրորդ դեմքի փոխելով**.

Որ.՝ յես վեր կացա և գնացի.—նա վեր կացավ ու գնաց.

Յես դեռ շատ փոքր եյի, յերբ առաջին անգամ ավտոմոբիլ ու յերկաթուղի տեսա։ Հիշում եմ, թե վո՛րքան զարմացա. չեյի կարողանում հասկանալ նրանց շարժվելու պատճառը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 58. Արտագրեցե՛ք հետևյալ հատվածը՝ **ըղձական յեղանակը հրամայականի փոխելով**.

Որ.՝ այս գիրքը տանես ու տաս նրան.— այս գիրքը տա՛ր և տո՛ւր նրան։

Սուրիկ, առավոտը շուտ վեր կենաս ու շուկա գնաս, ճաշի մթերքն ինքդ առնես, տուն բերես. ճանապարհին չուշանաս, սրանրա հետ չխոսես, շուտ տուն գաս, մթերքները մայրիկիդ հասցնես։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 59. Պատմեցե՛ք անցյալում տեղի ունեցած վորևէ դեպք ներկա ժամանակով. ձեր պատմածը գրի առեք։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 60. Պատմեցեք ձեր կենսագրությունը շատ համառոտ յեվ վաղակատար ներկայով (որ.՝ յես ծնվել եմ...)։ Ձեր պատմածը գրի՛ առեք։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 61. Պատմեցե՛ք անցյալում հաճախ կրկնվող մի բան (որ.՝ յես ամեն օր գնում եյի լողանալու)։ Ի՞նչ ժամանակով եք պատմում։ – Նույնը պատմեցե՛ք անկատար ներկայով։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 62. Նկարագրեցե՛ք ձեր դպրոցը, ձեր տունը, գյուղը, քաղաքը, ծին...։ Առարկաների նկարագրության մեջ բայերն ի՞նչ ժամանակ եք դնում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 63. Ձեր գյուղում ի՞նչ առածներ եք լսել, ասացե՛ք։ Ի՞նչ ժամանակներ են գործածվում այդ առածներում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 64. Ձեր գյուղում ի՞նչ սովորություններ կան, պատմեցե՛ք, պատմածը գրի առե՛ք։ — Ի՞նչ ժամանակով եք պատմում ձեր գյուղի սովորությունները։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 65. Ի՞նչ կուզեյիք դուք դառնալ, ասացե՛ք։—Ի՞նչ ժամանակով եք հայտնում ձեր ցանկությունները յեվ ի՞նչ յեղանակով։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 66. Առողջապահական միքանի կանոններ շարադրեցե՛ք։—Բայերն ի՞նչ յեղանակ յեվ ի՞նչ ժամանակ եք դնում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 67. Թվաբանական, յերկրաչափական... միքանի օրենքներ ասացե՛ք։—Բայերն ի՞նչ յեղանակ յեվ ի՞նչ ժամանակ եք դնում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 68. Բնութագրեցե՛ք ձեր կարդացած պատմվածքների հերոսներից մեկին։ — Բնութագրության մեջ բայերն ի՞նչ ժամանակ եք դնում։



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 69. Խոնարհեցե՛ք՝ գնալիս լինել, գնալու լինել, գնացած լինել։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 70. Գտե՛ք ստորեվ հիշատակված բայերի յեղանակներն ու ժամանակները.

Յերեք շաբաթ կլինի, վոր նա հիվանդ պառկած է։ — Ասա նրան, վոր յես գնում եմ տուն։ — Գաս ինձ մոտ՝ խոսենք։ — Կառք պիտի լինի, վոր գնամ։— Մենք միասին գնում եյինք, Գուրգենին հանդիպեցինք։— Դու գրում ես, իսկ յես արդեն գրել եմ։—Դու ուտում եյիր, իսկ յես արդեն կերել եյի։— Մայրը քնում է, իսկ յերեխան արդեն քնած է։— Դու հագնվում եյիր, իսկ յես հագնված եյի։—Մի կառք լիներ, այնտեղ գնայի։— Սահակը գնացած պետք է լինի։—Յերբ դու գալիս ես ինձ մոտ, յես գնացած եմ լինում։ — Յերբ այստեղ եմ հասնում, դու միշտ այստեղով անցնելիս ես լինում։— Յեթե գնալու լինեյի, կառք կկանչեյի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 71. Լրացրե՛ք հետեվյալ բայերը ստորեվ ցույց տված ձեվով.

| **1. Անկատար ներկա** | **2. Վաղակ. ներկա** | **3. Անցյալ կատ.** | **4. Հրամ.** | **5. Արգել. հրամ.** |
| --- | --- | --- | --- | --- |
| Գնում եմ | գնացել եմ | գնացի | գնա́ | մի́ գնա |
| Ուտում եմ | կերել եմ | կերա | կե́ր | մի́ ուտի |
| Տեսնում եմ | տեսել եմ | տեսա | տե́ս | մի́ տեսնի |
| Հասնում եմ | » | » | » | » |
| Մտնում եմ | » | » | » | » |
| Իմանում եմ | » | » | » | » |
| Իմացնում եմ | » | » | » | » |
| Թռչում եմ | » | » | » | » |
| Փախչում եմ | » | » | » | » |
| Կորչում եմ | » | » | » | » |
| Գալիս եմ | » | » | » | » |
| Տալիս եմ | » | » | » | » |
| Փախցնում եմ | » | » | » | » |
| Կորցնում եմ | » | » | » | » |
| Կարդացնում եմ | » | » | » | » |
| Կարդալ եմ տալիս | » | » | » | » |
| Գրել եմ տալիս | » | » | » | » |
| Սիրտ եմ անում | » | » | » | » |
| Գնալիս եմ լինում | » | » | » | » |
| Գնալու չեմ լինում | » | » | » | » |
| Գնացած եմ լինում | » | » | » | » |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առնում եմ | առել եմ | առա | առ | մի՛ առնի |
| Չեմ ուտում | » | » | » | » |
| Չեմ մտնում | » | » | » | » |
| Չեմ փախչում | » | » | » | » |
| Սիրտ չեմ անում | » | » | » | » |
| Ճաշած չեմ լինում | » | » | » | » |

§ 63 ա) 1. Այն աշակերտը, վոր կարդում էր, յեկավ։
2. **Կարդացող** աշակերտը յեկավ։
բ) 1. Այն նամակը, վոր գրեցիր, տուր։
2. Քո **գրած** նամակը տուր։
գ) 1. Այն գիրքը, վոր պիտի կարդաս, կբերեմ։
2. Քո **կարդալու** գիրքը կբերեմ։

Կարդացող, գրած, կարդալու — **դերբայներ** են։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 75. **Դերբայ** կոչվում են բայի այն ձևերը, վորոնք դեմք չունեն։

Դերբայները հետեվյալ վերջավորությունները ունեն.

ա) **ալ, ել** — կարդալ, գրել — այս դերբայը կոչվում է **անորոշ դերբայ**, վոր բայի գործողության անունն է ցույց տալիս. գործ է ածվում իբրև բայանուն (գրել, գրելու, գրելուց, գրելով) և դեմք ու թիվ չունի։

բ) **ում, իս** — կարդում, կարդալիս — **անկատար դերբայ**, վոր ցույց է տալիս այնպիսի յեղելություն, վոր շարունակվում է, դեռ չի վերջացել ու վոր կարող է գործածվել իբրև բայական մակբայ (յես նրան **կարդալիս** (կարդալու ժամանակ) տեսա), և վորից կազմվում են **անկատար ներկան** և **անկատար անցյալը** (գրում եմ, գրում էի)։

գ) **ու, իք** — գրելու, գրելիք — **ապառնի դերբայ**, վոր ցույց է տալիս հետո կատարվելիք յեղելություն. — ու վերջավորությամբ ապառնի դերբայից կազմված են սահմանական յեղանակի **ապառնի ներկան** և **ապառնի անցյալը** (գրելու եմ, գրելու էի). կարող է գործածվել իբրև բայածական (գրելու թուղթ) իսկ **իք** վերջավորությամբ ապառնի դերբայը գործ է ածվում կամ իբրև **գոյական** (յես գրելիք ունեմ — ինչ ունեմ) և կամ իբրև **բայածական** (իմ գրելիք նամակը)։

դ) **ած, ել** — գրած, գրել, կարդացած, կարդացել. — ած վերջավորությամբ դերբայը կոչվում է **հարակատար անցյալ դերբայ**,



նրանով կազմվում են **հարակատար ներկան** և **հարակատար անցյալը** (կարդացած եմ, կարդացած էի). կարող է գործածվել իբրև **ածական** (կարդացած գիրք). **ել** վերջավորությամբ դերբայը կոչվում է **վաղակատար դերբայ**. նրանով կազմվում են **վաղակատար ներկան** և **վաղակատար անցյալը**։

ե) **ող** — գրող, կարդացող — **յենթակայական դերբայ**, վոր ցույց է տալիս անողի կամ յեղողի գաղափարը և կարող է գործածվել իբրև **բայածական** (կարդացող աշակերտ)։

Տվեք ստորև դրված բայերի հարակատար, վաղակատար յեվ յենթակայական դերբայները. օրինակ՝ գրել—գրած, գրել, գրող. գնալ — գնացած, գնացել, գնացող. տեսնել — տեսած, տեսել, տեսնող. կորչել — կորած, կորել, կորչող և այլն։

1. Խոսել, նստել, յերգել, վազել, կարել, թափել, հնարել, ճանապարհորդել, սպասել։
2. Կարդալ, գնալ, մնալ, հիանալ, զարմանալ, մոռանալ, գոյանալ, քարանալ։
3. Վախենալ, գիտենալ, մոտենալ։
4. Տեսնել, մեռնել, հասնել, յելնել, մտնել։
5. Փախչել, սառչել, ուռչել։
6. Կարդացնել, հիացնել, զարմացնել, մոռացնել, մեծացնել, փոքրացնել։
7. Խոսեցնել, մոտեցնել, նստեցնել։
8. Գրել տալ, կարել տալ, ջարդել տալ։
9. Յեռ գալ, պար գալ, թափ տալ, սիրտ անել։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 72. Բացատրեցե՛ք **ատ, ոտ, տ** միջածանցների նշանակությունը հետեվյալ անորոշ դերբայների (կամ նրանցից կազմվող դիմավոր բայերի) մեջ.

| | |
|---|---|
| կոտրել — կոտրատել | նստել — նստոտել |
| կտրել — կտրատել | պառկել — պառկոտել |
| ջարդել — ջարդոտել | փշրել — փշրտել |
| ծակել — ծակոտել | պատռել — պատռոտել։ |

ՍԱՀՄԱՆՈՒՄ 76. **Ատ, ոտ, տ** միջածանց ունեցող դերբայները յեվ բայերը **բազմապատկական** են կոչվում յեվ ցույց են տալիս գործողության կամ յերեվման նայեվ գործող անձերի բազմապատկություն (ջարդոտել = միքանի տեղից ջարդել. նստոտել = մեկից ավելի նստողներ)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 73. *Բացատրեցե՛ք* **ացն, եցն, ցն** *միջածանցների նշանակությունը հետևյալում.*

| | | | |
|---|---|---|---|
| *կարդալ* | *— կարդացնել* | *մոտենալ* | *— մոտեցնել* |
| *խաղալ* | *— խաղացնել* | *կորչել* | *— կորցնել* |
| *նստել* | *— նստեցնել* | *փախչել* | *— փախցնել* |

*Վերոհիշյալ ձևերով ածանցեցե՛ք հետևյալները.*

*Խոսել, իմանալ, սառել, հասնել, պրծնել, դառնալ, լալ, ուտել։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 77. **Ացն, եցն, ցն** միջածանցներով դերբայները յեվ բայերը **պատճառական** են կոչվում, վորովհետեվ ցույց են տալիս, վոր մի առարկա պատճառ ե դառնում, վոր մի ուրիշն այս կամ այն գործողությունը կատարի. *որ.՝ Հայկը նստեցրեց Աշոտին=Հայկը պատճառ դարձավ, վոր Աշոտը նստի։*

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 74. *Բացատրեցե՛ք* **վ** *միջածանց նշանակությունը.*

| | | | |
|---|---|---|---|
| *կարել* | *— կարվել* | *հեռանալ* | *— հեռացվել* |
| *սպանել* | *— սպանվել* | *ներկայանալ* | *— ներկայացվել* |
| *տանել* | *— տարվել* | *վերանալ* | *— վերացվել* |
| *գողանալ* | *— գողացվել* | *յուրացնել* | *— յուրացվել* |

ՍԱՀՄԱՆՈՒՄ 78. **Վ** միջածանց ունեցող դերբայները յեվ բայերը **կրավորական** են կոչվում, վորովհետեվ ցույց են տալիս այնպիսի գործողություն, վոր նախադասության մեջ անող կամ յեղող առարկան (յենթական) մի ուրիշից կրում ե իր վրա։

*Դերբայները կազմությամբ յերկու տեսակ են լինում* 1. **պարզ**, 2. **ածանցական**։

**Պարզ** *կոչվում են այն դերբայները, վորոնց* **ալ, ել** *վերջավորություններն ավելանում են բայի* **հիմքի** *վրա, վոր կարող ե լինել մի արմատ, մի պարզ, բարդ, կամ ածանցական բառ. օրինակ՝* **կարդ-ալ** *(կարդ արմատ),* **յերգ-ել** *(յերգ պարզ բառ),* **նկարազարդ-ել** *(նկարազարդ բարդ բառ),* **շնորհավոր-ել** *(շնորհավոր ածանցավոր բառ)։*

**Ածանցական** *կոչվում են այն դերբայները, վորոնց հիմքի և լծորդի մեջ վորևե միջածանց ե մտնում. այդ միջածանցները հետևյալներն են, վորով և դերբայներն ու բայերն են կոչվում.*

1. **Սոսկածանց** *դերբայներ (բայեր)*—**ան, են, ն, չ**, *սոսկածանց միջածանցներով. օրինակ՝ ուրախ-***ան***-ալ, մոտ-***են***-ալ, տես-***ն***-ել, փախ-***չ***-ել։*



2. **Բազմապատկական** — **ատ, ոտ, տ** *բազմապատկական միջածանցներով։*

3. **Պատճառական** — **ացն, եցն, ցն,** *պատճառական միջածանցներով։*

4. **Կրավորական** — **վ** *կրավորական միջածանցով։*

## Ե. ՄԱԿԲԱՅ

§ 64. *Բանվորներն* **արագ** *գործի կպան, բրիչներն* **ուժգին**, **շեշտակի** *մխվում եյին յերկրի կուրծքը։— «***Հիմա** *կգլորենք»,—* **խրոխտ** *հնչեց մեկի* **շատ** *ուժեղ ձայնը։*

**Ուժգին, շեշտակի, հիմա, խրոխտ, շատ** *բառերը* **մակբայներ** *են։*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 79. **Մակբայ** կոչվում են այն ածական բառերը, վորոնց արտահայտած գաղափարներն անկախ գոյություն չունեն կամ իբրեվ անկախ գոյություն ունեցող չեն մտածվում, այլ կախված վորեվե ուրիշ գաղափարից, որ.՝ **խրոխտ հնչեց** կապակցության մեջ **խրոխտ** բառի արտահայտած գաղափարը մտածվում ե **հնչեց** բառի արտահայտած գաղափարի հետ կապված։ Մակբայները բայի կամ ածականի վրա դրվելով ցույց են տալիս հատկանիշի հատկանիշ, կամ բայի գործողության զանազան **պարագաները**, *այսինքն, թե բայի գործողությունը վորտեղ ե կատարվում* (տեղի պարագա—**ամենուրեք** *յեղել եմ*), *յերբ ե կատարվում* (ժամանակի պարագա — **հիմա** *կգա*), *ինչպես կամ ինչ կերպ ե կատարվում* (ձեվի կամ վորակի պարագա — **քաջաբար** *կռվեց*), *ինչ չափով, վորքան, քանի անգամ ե կատարվում* (քանակի պարագա—**կրկնակի** *ու* **յեռակի** *մեծացավ*), *ինչու համար, ինչ նպատակով ե կատարվում* (նպատակի պարագա), *ինչու, ինչ պատճառով ե կատարվում* (պատճառի պարագա)։

Ածականները, բայի վրա դրվելով, մակբայ են դառնում յեվ վորեվե պարագա յեն ցույց տալիս։ Ածականն ածականի վրա դրվելով՝ նույնպես մակբայ ե դառնում, հատկության վորեվե աստիճան ցույց տալով *(տես «հատկության աստիճաններ» գլուխը)։*

*Այսպիսով ածականները կիրառությամբ կարելի յե յերեք խմբի բաժանել.*

1. **Մակածականներ**, *վորոնք դրվում են անունների վրա —* **լավ** *մարդ,* **մեծ** *տուն.*

2. **Մակբայներ**, *վորոնք դրվում են բայի վրա —* **լավ** *խոսեց.*

3. **Մակածականներ**, *վորոնք դրվում են ածականների վրա*—**լավ գրած նամակ**.—**շատ** *լավ գրած նամակ*:

*Մակածականը կարող է հատկության աստիճան ցույց տալ (§ 43, 44, նույն «Հատկ. աստ.» գլխի մեջ և կանոն 20 ա., բ.):*

Հայերենում **բուն մակբայներ** շատ քիչ կան. *պակասը լրացվում է ածականներով կամ տեղի, ժամանակի անուններով և չափ ու քանակ, նպատակ ու պատճառ արտահայտող բառերով:* **Բար, պես, որեն, ակի** *վերջացող բառերը գործ են ածվում և իբրև մակբայներ (բայի հետ), և իբրև ածականներ (յերբ գոյականի վրա յեն դրվում)* (**ճշտակի** *խփեց — մակբայ.* **ճշտակի** *հարված—ածական*):

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 75. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք մակբայները.*

*1. Արդեն յերեկո յէ. արևի հրավառ ճառագայթներն առատ սփռվել են լայնորեն տարածված դաշտավայրի վրա: Հրեղեն գունդն արագ դեպի իր մուտքն է դիմում: Յերկնքի վրա աստ և անդ յերևում են ամպի շատ փոքրիկ կտորներ՝ վերջալուսի շողերով առատորեն վողողված ու կարմիր ներկված:*

*2. Հողմերն են վոսոխ մեր գլխին ճախրում,*
*ծանր շնչում են ուժեր դժնդակ.*
*վոսոխների դեմ պայքար ենք մղում,*
*մեր դիմաց դեռ կա մի անհայտ վիճակ:*
*Սակայն մենք խիզախ բարձր կբռնենք*
*մեծ բանվոր դասի դրոշը կարմիր,*
*դրոշը կռվի համայն մարդկության*
*վսեմ մի կյանքի և ազատության:*

*(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Վարշավյան յերգ»)*

## Զ. ԿԱՊ

### ա. ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ու ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*§ 65. Գնացքը Յերևանից մեկնեց* **դեպի** *Թիֆլիս:— Վաղարշապատից* **մինչեվ** *Յերևան տասնութ վերստ է:— Բոլորը յեկան,* **բացի** *Աննիկից:—Առողջ լինելու* **համար** *պետք է պահել առողջապահական կանոնները:— Կռիվ* **առանց** *սպանության: — Կռիվ հացի* **համար**:



**Դեպի, մինչեվ, բացի, առանց, համար**—*անփոփոխ բառեր են և կոչվում են* **կապ**:

*ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 76. Լրացրեք հետեվյալ նախադասությունները՝ փակագծերում դրած բառերը համապատասխան ձևով դնելով. որ.՝ մենք այստեղ մնացինք առանց ... (հաց և ջուր)—մենք այստեղ մնացինք առանց հացի և ջրի:*

*Մենք շատ ենք լսել ... (Արամ)* **մասին**:— *Նա յեկավ աղբյուրից ... (Ջուր տանել)* **համար**:— *Բոլորը կատարել են,* **բացի**... *(Արշակ, Մինաս, Վաչիկ):—Յես կանգնած եմ մի բարձր... (շենք)* **հանդեպ**: — **Ըստ** *այդ ... (կարգադրություն), դու գյուղ պիտի մեկնես:—Սուրիկը կռվել է ... (Գրիգոր)* **հետ**:—*Յերեք անգամ... (գալ)* **հանդերձ**, *յես չկարողացա քեզ տեսնել:*

ՍԱՀՄԱՆՈՒՄ 80. **Կապ** կոչվում են այն բառերը, վորոնք անփոփոխ են, դրվում են գոյականից առաջ կամ հետո յեվ այդ գոյականը իբրեվ լրացում կապում են մի ուրիշ բառի, գլխավորապես բայի հետ, իբրեվ նրա խնդիր: Գոյականից **առաջ** դրվող կապերը կոչվում են **նախդիրներ**, իսկ գոյականից **հետո** դրվողները՝ **հետադիրներ**: Գոյականի այս կամ այն ձևով դրվելը կախում ունի նախդիր կամ հետադիր կապից:

### բ. ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

*§ 66. Մենք կանգնած ենք մի բարձր շենքի* **առաջ**:—*Գիրքը ընկել է սեղանի* **տակ**:— *կանգնեց քո* **դիմաց**:— *Նա փախավ քո* **դիմացով**: — *Գիրքը վերցրու սեղանի* **տակից**: — *Նա փախավ սեղանի* **տակով**:—*Յես այնտեղ եյի կռվի* **ժամանակ**:

**Առաջ, տակ, դիմաց, ժամանակ** *և այլն փոփոխվող բառերը (տեղի անուններ) կարող են գործ ածվել իբրև* **կապական բառեր**, *մի ուրիշ գոյականից հետո դրվելով:*

*Ցույց տվեք կապերը յեվ կապական բառերը.*

*Գյուղի նեղ փողոցներով նա անցնում եր գողի նման կակածամիտ: «Ջլինի՞ ապին գալիս ա»... մտածեց Արտոն և առանց մարմինը շարժելու՝ գլուխը դեպի յետ ծռեց:*

*Նա գնում եր կամացուկ, կծկված, ու վոտները գետնին եյին կպչում առանց փոքրիկ իսկ ձայն հանելու:*

*Այսպես, մինչև գյուղից դուրս յեկավ: Իսկ յերբ բավականին հեռացավ, սիրտն աստղալից յերկնքի նման բացվեց ու յերջանկավետ ժպտերը նորից կյանք առան:*

*(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)*

Աթոն այդ յերեկո արտից տուն եր վերադառնում, սայլի վրա բարձած ցորենի դեզի հետ։ Հայրը գալիս եր Աթոյի հետ, և մի զույգ դեղին յեզները դանդաղ շարժվում եյին։ Աղբյուրի մոտ հանդիպեց Ցեղոն։ Գյուղում յերկար ժամանակ խոսում եյին կոմսոմոլի մասին։

(Մ. ԱՐՄԵՆ «Արևը, հուրհրան արևը»)

§ 67. Մենք մնացինք առանց հացի և ջրի. — մենք անհաց և անջուր մնացինք։—Առանց վշտի – անվիշտ։ — Առանց կամքի — անկամ, կամազուրկ։ – Առանց սիրո – անսեր, սիրազուրկ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 77. Վերոհիշյալ ձևով ինչպես կլինի՝ Առանց հանգստի... Առանց դադարի... Առանց ադմուկի... Առանց զարդարանքի... Առանց ուրախության...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 78. Արևը մտնելու ժամանակ — արևմտոցին։ – Լույսը բացվելու ժամանակ — լուսաբացին։— Հավը խոսելու ժամանակ... Կալսելու ժամանակ... Յերկիրը շարժվելու ժամանակ... Որը մթնելու ժամանակ... Նահանջելու ժամանակ... Գոմեշները կովելու ժամանակ... Հորթերը թողնելու ժամանակ... Այգին քաղելու ժամանակ... Ծառերը տնկելու ժամանակ ... Գարունը մտնելու ժամանակ... Ամառը, աշունը, ձմեռը մտնելու ժամանակ...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 79. Պատերազմից առաջ — նախապատերազմյան,— հեղափոխությունից առաջ — մինչ-հեղափոխական, — ջրհեղեղից առաջ... մարդուց առաջ... պատերազմից հետո—հետ-պատերազմյան,—հեղափոխությունից հետո...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 80. Ըստ այդ կարգադրության— այդ կարգադրության համաձայն։ – Ըստ Լուսժողկոմատի կարգադրության... Ըստ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետի... Ըստ ԽՍՀՄ որենսդրության և ըստ Կենտգործկոմի դեկրետի...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 81. Ց'տեսություն — մինչև տեսություն.—Ց'այսոր... Ց'նոր կարգադրություն... Ց'այժմ...

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 82. Նա գնաց մինչև հինգ կիլոմետր — հինգ կիլոմետրի չափ — շուրջ հինգ կիլոմետր։ — Մինչև հինգ ռուբլի... Մինչև յերեք ամիս... Մինչև մի ժամ... Մինչև տաս կիլոգրամ...



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 83. Վերլուծեցե՛ք հետևյալ բառերի կազմությունը, ցույց տվեք նրանցում **ընդ** յեվ **ըստ** նախդիրները՝ իբրև բաղադրիչ մասեր։—Ընդհանուր=ընդ-հանուր։— ընդարձակ... ընդգրկել... — անընդհատ... — որըստորև... ընդհատակյա... — ընդծովյա... — մեջընդմեջ...

## Է. ՇԱՂԿԱՊ

§ 68. Արշակն ու Սուրիկը տուն գնացին։ — Յես **յեվ** դու այնտեղ մնացինք։— Յես **էլ** գնացի, դու **էլ** գնացիր։— **Թե՛** յես գնացի, **թե՛** դու գնացիր։—Սուրիկը յեկավ, **բայց** քեզ չտեսավ։— Յես գալիս եմ, **իսկ** դու գնում ես։— Մենք հավաքվեցինք, **վոր** միասին աշխատենք։—Մենք կառաջադիմենք, **յեթե** աշխատենք։

**Ու, յեվ, էլ, թե, բայց, իսկ, վոր, յեթե** բառերը **շաղկապներ** են։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 81. **Շաղկապ** կոչվում են այն բառերը, վոր կապում են բառ բառի կամ նախադասություն նախադասության հետ. որ.՝ Արշակն ու Սուրիկը տուն գնացին — նախադասության մեջ **Արշակն**, **Սուրիկը** բառերը կապված են իրար հետ ու շաղկապով։ Յես գալիս եմ, իսկ դու գնում ես—այստեղ՝ **յես գալիս եմ** նախադասությունը **դու գնում ես** նախադասության հետ կապված է **իսկ** շաղկապով։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 84. Արտագրեցե՛ք յեվ ընդգծեցե՛ք շաղկապները.

Վարդա՛ն, տա՛ր իմ գիրքը, բայց չուշացնես, վորովհետև ինքս էլ դեռ չեմ կարդացել։— Յեթե գայիր, կտանայիր։— Նըստենք ու խոսենք։— Թե դու և թե նա պետք է աշխատեք։— Գըտանք, վոր բերենք։— Կամ դու պիտի գաս, կամ նա պիտի գա։— Ուշացար, ուստի և քեզ բաժին չհասավ։ — Լավ չեմ զգում ինձ, սակայն պիտի աշխատեմ։— Արագ վազեցի, բայց և այնպես չըհասա։— Կամաց գնացի, այնուամենայնիվ հասա։—Յերբ միասին ենք աշխատում, ավելի արդյունքի յենք հասնում։ — Տուր այն գիրքը, վոր խնդրել եմ։ — Կատարի՛ր, ինչ վոր քեզ ասել եմ։ — Պատասխանատու կլինի նա, ով կխախտի կանոնադրությունը։— Գնա՛, ուր ուզում ես։—Յեկ, յերբ կամենաս։— Թեև հոգնած եյի, բայց և այնպես աշխատեցի։— Նախ յեկանք, ապա գնացինք։ — Մասիսը կամ Արարատը մեզնից հեռու չի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 85. Շաղկապներով կապված նախադասությունները փոխեցե՛ք ցույց տված ձևով (առանց շաղկապների) ու գրի՛ առեք.

1. Գնա տուն, որ դաս պատրաստես,— գնա տուն՝ դաս պատրաստելու։

Յեկ մեր տուն, որ գիրքդ ստանաս...։

Կուժն աղբյուրը տարավ, որ ջուր բերի...։

2. Յես դասի չեկա, որովհետև հիվանդ եյի — յես դասի չեկա՝ հիվանդ լինելու պատճառով. կամ՝ հիվանդ լինելով, յես դասի չեկա։

Դու հանցավոր ես, որովհետև այդ բանն արել ես...

Սառույցը հալվեց, որովհետև յեղանակը տաքացավ...

3. Մենք վեր կացանք, յերբ լույսը բացվում եր — լուսաբացին մենք վեր կացանք. կամ՝ լույսը բացվելիս մենք վեր կացանք։

Յես վախենում եյի, յերբ ամպը գոռում եր...

Դու չեկար, յերբ արևը մտնում եր...

Մենք վեր թռանք, յերբ հրացանը տրաքեց...։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 86. Ինքներդ հորինեցե՛ք հետևյալ ձևի կապակցություններ յեվ փոխեցեք առանց շաղկապի (ցույց տված ձևով). —

4. Այն մարդը, որ ուրիշի աշխատանքով է ապրում, նա շահագործող է — ուրիշի աշխատանքով ապրող մարդը շահագործող է։

5. Յեկավ այն աշակերտը, որ գնացել եր գյուղ — գյուղ գնացող աշակերտը յեկավ։

6. Ով գիրք չունի, նա չի կարող այդ պատրաստել — գիրք չունեցողն այդ պատրաստել չի կարող։

7. Ով չի աշխատում, նրա տունը կքանդվի — չաշխատողի տունը կքանդվի։

8. Ինչ որ քամին բերում է՝ քամին էլ կտանի — քամու բերածը քամին կտանի։



## Ը. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 69. Ե՛հ, Գրիգո՛ր, բավական է։ — Պա՛ պա՛ պա՛, մեծ-մեծ մի խոսիր։ — Վա՜յ, միթե կարելի չե այդ անել։ — Ամեն ինչ կորավ, ափսո՜ս։ — Յես ինչ գիտեմ, օ՛, թե դանակը վորտեղ է։ Դե՛հ, բավական է, գնանք։ — Հապա՛, վեր կենանք։ — Դե՛, գործի կպչենք։ — Զը՜նգ զը՜նգ, հնչեց զանգը։

Ե՜հ, պա՛ պա՛ պա՛, ափսո՜ս, օ՛, դեհ՛, դե՛, հապա՛, զը՜նգ բառերը ձայնարկություններ են։

ՍԱՀՄԱՆՈՒՄ 82. Ձայնարկություն կոչվում են այն բառերը, վորոնք մի ձայնով կամ բացականչությամբ ցույց են տալիս խոսողի զգացմունքը կամ կամքը, կամ վորոնք նմանաձայնություն են արտահայտում։

ԿԱՆՈՆ 41. ա) Ձայնարկությունների վրա դրվում է յերկար կամ բացականչական նշան (˜), կամ շեշտ (՛)։

բ) Ձայնարկությունները նախադասության մյուս բառերից բաժանվում են ստորակետով, յերբ նախադասության սկիզբը կամ վերջն են ընկնում, յեվ ստորակետով (սկզբից յեվ վերջից), յերբ նախադասության մեջն են ընկնում։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 87. Արտագրեցե՛ք յեվ ձայնարկությունների տակն ընդգծեցե՛ք

1) Լևիկն ու Աշխենը դասամիջոցին կոոպերատիվ եյին խաղում (յերկուսն էլ նույն խմբում եյին սովորում)։

— Ե՛յ, Լևի՛կ, մի կիլո մեղր տուր։

— Ե՛, Աշխե՛ն, փող մող ունե՞ս վոր։

— Տո՛, բա չունե՞մ, — պատասխանեց Աշխենը։

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, ինչ մեղր է, հա՛, լաղա՛թ։

— Վա՛յ, ափսո՜ս, ծոր տվեց գետին։ Փշա՛, անտեր հավ, քո ուտելու բանը չի։

Ծը՜նգ ճը՜նգ ճը՜նգ...—խփեց ժամի տասը։

Զը՜նգ զը՜նգ զը՜նգ...—խփեց դպրոցի զանգը։

— Դե՛, բավական է, Լևի՛կ,—ասաց Աշխենը,—գնանք դասի, հետո կոոպերատիվը կշարունակենք։

— Ուռա՛, կեցցե՛ մեր կոոպերատիվը,—բացականչեց Լևիկը՝ Աշխենի հետ դեպի դասարան վազ տալով։

2. Անասելի քրքիջ եր բարձրացել գյուղական աղջիկների մեջ։

— Ո՜հ, ա՛յ Սասո, Սասո՛,— բղավեց չարաճճի Շողոն, հենց վոր յերևաց Սասիկի գլուխը...

— Հա՛, հա՛, հա՛,— մի ընդհանուր փռթկում ընկավ մեջները։

— Ի՜, ա՛ղջի, հենց ասում եք, էլի, բա էլ ո՞ւր գնամ...

— Ե՛յ, անզգա՛մ, վեդրա՛ս... վո՛ւյ, ես ինչ լեթված ա, նորաթս խլեց։— Ա՛ռ հա կտաս,— վրա բերեց դույլը Նարգիզը ընկերուհու գլխին։

— Ամա՜ն, ամա՜ն, գլուխս։

— Վո՛ւյ, ծակծըկոտվես դու...— վրա թափվեցին ամեն կողմից հանցագործ աղջկա վրա։

(ԱՐԱՔՍ՝ «Նոր Հորիզոն»)

ՀԱՐՑ

Դիտեցեք այս հոդվածների մեջ պատահած նշանները։

## ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐ

## ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

### (ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ)

1. **Գոյական անուն**—1. հատուկ, 2. հասարակ։

2. **Դերանուն** — 1. անձնական, 2. ցուցական, 3. փոխադարձ, 4. հարաբերական, 5. հարցական, 6. ստացական. 7. անորոշ։

3. **Ածական** — 1. վորակական, 2. թվական, ա. քանակական, բ. դասական, 3. հարցական, 4. ցուցական, 5. անորոշ։

4. **Բայ**։

5. **Մակբայ**։

6. **Կապ** (Նախդիր և հետադիր) և **շաղկապ**։

7. **Ձայնարկություն**։



# VII. ԼԵԶՎԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Լեզվի մեջ չորս տեսակի նշաններ են գործ ածվում.

1. **Տառեր**, վորոնք հնչյունների նշաններն են և լինում են մեծատառ (գլխագիր, գլխատառ) և փոքրատառ։ Տառերն իրենց ձևով լինում են՝

ա. **Գլխագիր**. օրինակ՝ **Ա, Բ, Գ** և այլն։

բ. **Բոլորագիր**. օրինակ՝ ա, բ, գ և այլն։

գ. **Շղագիր**. օրինակ՝ ա, բ, գ և այլն։

**Բոլորագիրը** գործ է ածվում սովորական տպագրության համար. իսկ **նոտրագիր** ու **շղագիր** տպվում են այն բառերը, վորոնց վրա առանձնապես ուշադրություն պետք է դարձնել։

ՀԱՐՑ.

Ինքներդ ասացեք՝ յերբ է մեծատառ գրվում։

2. **Տրոհության նշաններ**.

ա. Վերջակետ (։)։

բ. Միջակետ (.)։

գ. Ստորակետ (,)։

դ. Բութ (՝)։

**Տրոհության** նշանները ցույց են տալիս, թե վորտեղ պետք է մենք կանգ առնենք, խոսքերը, յերբեմն նաև բառերն իրարից բաժանենք, վոր մեր արտահայտած մտքերը չփոխվեն։

3. **Առոգանության նշաններ**.

ա. Շեշտ (՛)։

բ. Հարցական նշան (՞)։

գ. Յերկար կամ բացականչական (՜)։

**Առոգանության** նշանները բառի ձայնավորի վրա դրվելով՝ ձայնի յեղանակավորումն են արտահայտում, վորով իմացվում է, թե վորտեղ առանձնապես ուժեղ պետք է արտասանել, կամ յերկարացնել յեվ այլն։

4. **Բացահայտության նշաններ**.

ա. Չակերտներ՝ բաց և փակ (« » „ “)։

բ. Փակագծեր՝ բաց և փակ ( )։

գ. Կախման կետեր կամ յերեք կետ (...)։

դ. Բազմակետ (չորս կամ ավելի կետ) (....)։

ե. Գիծ (—)։

գ․ Գծիկ կամ միության գիծ (-, օրինակ՝ մանր-մունր)։

է․ Տողադարձի նշան կամ յենթամնա (-)։

ը․ Ծանոթության նշան (* կամ 1), 2))։

**Բացահայտության** նշանները գրվածքի միտքը գլխավորապես տեսությամբ են բացահայտում։

*Դիտեցե՛ք նշանների գործածությունը ստորև բերված հատվածներում և աշխատեցե՛ք կանոններ հանել. ձեր կանոնները համեմատեցեք «տեղեկանք»-ներում դրված կամ այս գրքի 2 րդ մասի վերջում ամփոփված կանոնների հետ։*

# I․ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

## 1. ՎԵՐՋԱԿԵՏ

*Դիտեցե՛ք վերջակետի գործածությունը հետևյալ հատվածում.*

*Ամառ էր։*

*Ծաղկաձորեցի Սիմոնն իրենց գյուղացիների համար շատ էր հունձ անում։*

*Ամեն օր ութ գրվանքա գարի էր տուն բերում, կինը ծեծում էր գարին ու յերեխաների համար խաշիլ յեփում։*

*Մի իրիկնապահ էլ Սիմոնը հոգնած տուն յեկավ. սաստիկ քրտնած էր։*

*Մի շաբաթ հիվանդ պառկեց ու էլ վեր չկացավ։*

*Սիմոնի հիվանդ կինն ամուսնուց հետո յերկար չապրեց։*

*Դարդն ու վիշտը նրան էլ յերկու ամսից հետո գերեզման դրին։*

*Յերբ հայրիկն ու մայրիկը մեռան, հորեղբայրը նրանց մի հատիկ այծը չվերադարձրեց։*

*Մի քանի օր հետո հարևանուհի Շախոն յեկավ, մայրիկի շալը կոնատակը դրեց։ Տանը մենակ Լիլիկն էր. լաց յեղավ, շալի ծայներից քաշեց.*

*— Մոքիր, մայրիկիս շալը չեմ տա։*

*— Մերդ հերու քսան քրեզան գարի է փոխ առել, ես նրա տեղը. հլա հինգ ձուն էլ փիշքաշ, յեթիմ եք։*

*Շախոն քամփեց Լիլիկի գլխին ու շալը տարավ։*

*(ԱՆՈՒՇ՝ «Ծաղկաձորեցի Թաթիկը»)*



*ՏԵՂԵԿԱՆՔ.*

Այնտեղ, վորտեղ միտքն ամբողջանում, լրանում է, այլևս կիսատ չի մնում, վերջակետ է դրվում։

*Վերևի հատվածում — «Յերբ հայրիկն ու մայրիկը մեռան...» — լրիվ արտահայտություն չի, մենք սպասում ենք, վոր հայրիկի ու մայրիկի մեռնելուց հետո մի բան պիտի տեղի ունենա։ Յերբ այդ բառերից հետո կարդում ենք՝ «հորեղբայրը նրանց մի հատիկ այծը չվերադարձրեց», այն ժամանակ միտքը լրանում, ամբողջանում է. այդտեղ կարելի է վերջակետ դնել։*

**Վերջակետից հետո գրվող նախադասությունը սկսվում է մեծատառով։**

## 2. ՄԻՋԱԿԵՏ (·)

*Դիտեցե՛ք միջակետի գործածությունը հետևյալ հատվածներում.*

*1. Յեվ յերբ հայրը մեռավ (իսկ հայրը վոչխարատեր Ծատին էր), մեռելահացն ուտելիս մի ալևոր բարեմաղթեց լոշ ականջի տավարին ու ոջախին առատություն և դառնալով նրան՝ ասաց.*

*— Ծատու տղա, նզովյալ լինես, յեթե շվաքդ անպակաս անես էս ոջախին։*

*(ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծատուն տղան»)*

*ՏԵՂԵԿԱՆՔ.*

Յերբ ուրիշի խոսքն անփոփոխ գրի յենք առնում, ինչպես նա ասել է, այդ խոսքից առաջ դնում ենք միջակետ։

*2. Նրան հանգիստ չէյիք տեսնի. ջուր էր կրում, կար ու կարկատան անում Ղափանենց համար։*

*Լ. գյուղում Ղափանենք հարուստ էյին. հինգ տարի էր՝ Խոսիկը նրանց մոտ էր։*

*(ԱՐԱՔՍ՝ «Նոր հորիզոն»)*

*ՏԵՂԵԿԱՆՔ.*

Բարդ ասացվածի յերկար մասերը, կամ առհասարակ այն մասերը, վորոնք վորոշ ինքնուրույնություն ունեն, բաժանվում են միջակետով։

## 3. ՍՏՈՐԱԿԵՏ (,)

*Դիտեցեք ստորակետը հետեվյալ օրինակներում.*

*1. Յեվ ովքե՞ր էին*
*նրանք.*
*—կիսամերկ*
*ռուս,*
*հրեա,*
*թաթար,*
*գալլ,*
*իռլանդացի —*
*բոլորը—*
*բանվոր,*
*մուշա,*
*գյուղացի։*
*(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)*

*ՏԵՂԵԿԱՆՔ.*

Նախադասության համանման իմաստով համադաս լրացումները իրարից բաժանվում են ստորակետով։

*Յեթե համանման իմաստով համադաս լրացումներից վերջին յերկուսը կապված են* **յեվ**, *ու բառերով, ապա ստորակետ չի դրվում՝* **Աշոտը, Միսակը, Գրիգորն ու Տիգրանը գնացին։**

*2. Անապատումը մեր անծիր ու անսահման,*
*իմ* **ուղտ,**
*իմ* **սիրելի,**
*պարանոցդ վեր պարզած՝*
*ուզում էիր Շեմս-արևը համբուրել։*
*(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Վե՛ր կաց, սիրելիս»)*

*3.* **Մա՛յր,** *ծեր է, ծեր է հայրը մեր.*
*Ինչքա՜ն, էլ ինչքա՜ն չի գալիս։*

*Հե՜յ,*
**Ռա՛մ Ռոյ,**
*Հնդիկ* **զինվոր,**



*Տերդ մորակող ու դաժան՝*
*Յերկրումդ քեզ գերեց։*
*(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Ռամ Ռոյը»)*

*3. Շոգիդ ու չունչս*
*Իրար են ձուլվում,—*
**Անի՛վ** *եմ, դարձիր։*
*(ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ «Անիվի յերգը»)*

4. — **Աղջի՛**, *ելի անբանի պես վեր ընկա՞ր։*
— *Ախր, Հեքո՛* **քույրիկ**, *գործ եմ անում։*
-- **Աղջի՛, Խասո՛**, *վո՞նց ես դրա ձեռի տակ մնում։*
— **Շողո՛**, *մեր որն էլ կտրվի՞։*
— *Ո՜ւ, ա՜յ* **կնիկ**, *էդ ինչե՞ր ես ասում։*
— *Գիտե՞ս ինչ,* **Խասո՛։**
— *Ի՞նչ արիր,* **Պետրո՛ս։**
— **Պետրո՛ս, Խասի՛կ**, *ելի ճանկե՞լ եք իրար։*
*(ԱՐԱՔՍ՝ «Նոր հորիզոն»)*

*5. Ե՜յ, հազա՜ր հազար* **ավտոմոբիլներ,**
*Որ այդպես արագ թռչում եք, սլանում,*
*Ո՞ւմ եք պատկանում։*

**Համալսարաննե՛ր, ասեղակայաննե՛ր,**
*Զքնա՜ղ թատրոններ, հանճարի տներ,*
*Որ այս հեքիաթի պարծանքն եք կազմում,*
*Ո՞ւմ եք պատկանում։*
*(ՀԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Հավասարություն»)*

*ՏԵՂԵԿԱՆՔ.*

*Այն առարկայի անունը, որին խոսք է ուղղվում մի բան ասելու կամ հարցնելու համար, կոչվում է* **կոչական։ Խոսքը** *կարող է ուղղվել թե շնչավոր և թե անշունչ առարկաներին։ Վերևի օրինակների մեջ ընդգծված բառերը* **կոչականներ** *են (ուղտ, սիրելի, մայր, Ռամ Ռոյ, Շողո, Պետրոս, ավտոմոբիլներ, թատրոններ և այլն)։*

**Կոչական բառերը խոսքից բաժանվում են ստորակետով** *(Աշոտ, գնա տուն)*. **իսկ յերբ խոսքի մեջտեղ են ընկնում, յերկու կողմից առնվում են ստորակետերի մեջ** *(ձեր կատուն, Աշոտ, ինչ յեղավ)*։ **Յերբ կոչականը խոսքի վերջն է ընկնում,**

սկզբից գրվում է ստորակետ, իսկ կոչականից հետո գրվում է իմաստի համապատասխան վորեվե կետ (ել այստեղ չմնամ, Աշոտ. շուտով ժամի հինգը կլինի)։

Յեթե կոչական բառը վորեւե լրացում է ունենում (իմ ազատ, հազա՛ր հազար ավտոմոբիլներ, չքնա՛ղ թատրոններ), այդ լրացումը կոչականից վորեւե կետով չի բաժանվում։

6. Ջա՛ն, մեր բանակը կուռ, մեր կրծքերը յերկաթ,
Բետոնի պես ամուր մեր բանակը կարմիր,
Ջա՛ն, մեր ձեռները կոշտ, մեր ճակատը հպարտ —
Չի կարող մեզ ընկճել և վոչ մի թշնամի։
(ԱԼԱԶԱՆ՝ «Առավոտ»)

7. Ե՛յ, քո՛նն է հունձը, մաշինա՛, —
Տխուր է գնգում գերանդին։
(ՆԱՅԻՐԻ ԶԱՐՅԱՆ՝ «Հնձվորը»)

8. Ո՛, ամառնամուտ իմ կյանքի,
Վոր բացվում ես շեկ,
Արնագույն։
(ԽՈՐԵՆ ՌԱԴԻՈ՝ «Ամառնամուտ»)

9. Հեյ-հե՛յ, հեռավոր Հինդում,
Բիխուրի գավառում փոքրիկ,
Հայրենի գյուղն է յերևում,
Գյուղը աշխատող ու սոված։
(ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ՝ «Ռամ Ռոյը»)

### ՏԵՂԵԿԱՆՔ.

Ձայնարկությունները (ջա՜ն, ա՛յ, ո՛, հեյ-հե՛յ և այլն) խոսքից բաժանվում են ստորակետով, ինչպես կոչականները։

10. Նորից արևն ելավ, Նորից վառեց կրակ,
Նորից հնչեց կարմիր զորանոցում թմբուկ,
Նորից բացվեց ահա մեր սարերի վրա
Խորհրդային ազատ առավոտը խնդուն։
(ԱԼԱԶԱՆ՝ «Առավոտ»)

11. Շողացին սվիններ, սրեր,
յերգեցին կրծքեր հզոր,
դրոշներ ծփացին արնավառ։
(ԵՂ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)



### ՏԵՂԵԿԱՆՔ.

Միեվնույն ստացվածի մասը կազմող համադաս, մեկով իրար մոտիկ նախադասությունները բաժանվում են ստորակետով։

13. Նա հայր ուներ, իսկ հայրը՝ վոչխարներ։
... Գյուղի քահանան նրան Աբրահամ էր կնքել, բայց գյուղը նրան ավելորդ անուն էր տվել։
... Շները՝ գայլաբույլ ճզմտացին, բայց Ծատուն տղան ունքերն էլ իրար չտվավ։
(ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծատուն տղան»)

### ՏԵՂԵԿԱՆՔ.

Յերբ միեվնույն ստացվածի մասը կազմող ու մեկով իրար մոտիկ համադաս նախադասությունները կապված են իրար հետ համապատասխան շաղկապներով, ապա շաղկապներից առաջ ստորակետ է դրվում։

Յեթե այդպիսի համադաս նախադասություններից վերջին յերկուսը կապված են յեվ, ու շաղկապներից մեկնումեկով և այդ նախադասությունների բայերի գործողությունը կատարող առարկան (յենթական) նույնն է, այդ դեպքում յեվ, ու շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում, իսկ յեթե յենթակաները տարբեր են, ստորակետ դրվում է (յես գնացի յեվ նրան տեսա — այստեղ գնացի և տեսա բայերի յենթական նույնն է — յես գնացի և յես տեսա, ուստի ստորակետ չի դրվում։ — Յես գնացի, յեվ դու հետո յեկար, — այստեղ գնացի և յեկար բայերի յենթակաները տարբեր են — գնացի յես, իսկ յեկար՝ դու. ուստի այս դեպքում յեվ շաղկապից առաջ ստորակետ է դրվում։

Յերբ միևնույն յենթակայով համադաս խոսքերը կապված են յեվ, թե շաղկապներով, վոր կրկնվում են համադաս խոսքերից ամեն մեկի վրա, այդ դեպքում համադաս խոսքերը բաժանվում են ստորակետով (և՛ գնացի, և՛ տեսա, և՛ իմացա. — թե՛ գնացի, թե՛ տեսա, թե՛ իմացա)։

Համադասական կամ շաղկապից առաջ ստորակետ չի դրվում, յեթե բացահայտական նշանակությամբ է գործ ածվում կամ նույնություն է ցույց տալիս (Հրազդան կամ Զանգու. — Մասիս կամ Արարատ, — բայց՝ արծաթ, կամ վոսկի)։

14. Հետո մի քանի տարի անց, յերբ Ծատուն տղի բեղերն այնքան էլին մեծացել, վոր ապուր ուտելիս ձավարի հատիկներ էլին մնում բեղերի արանքում...

Ծատուն տղան այնքան վոչխար ուներ, վոր յերեք չոբան հերիք չեր անում..

Յերբ տերտերը յեկեղեցում քարոզ եր տալիս, ասում, թե բոլորը մի հոտ են յեղեղեցու համար, թե կա յերկնային մի հովիվ, Ծատուն տղան իսկույն մտքով սարն եր թռչում, ուր կախ ընկած դմակով վոչխարներն իրեն արածում, չաղանում, դառնում դեղին վոսկի։

Պառավ նանն ել զարմացավ, յերբ իմացավ, թե տղան առավոտ ծեգին քաղաք ե գնում։

(ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծատուն տղան»)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Բարդ ասացվածի ստորադաս նախադասությունները գլխավոր նախադասությունից բաժանող ստորադասական շաղկապներից առաջ (*վոր, թե, յեթե, յերբ, ինչպես և այլն*) դրվում է ստորակետ։

*Յեթե* **վոր** *շաղկապն ավելորդ կերպով իբրև* **բարդաբար** *գործ ե ածվում* **ով, ինչ, ուր, յերբ, քանի, ինչպես** *և այլն բառերից հետո (յերբ* **վոր**, *ուր* **վոր**, *քանի* **վոր**, *ինչպես* **վոր** *և այլն), այդ բառերից ստորակետով չի բաժանվում։*

## 4. ԲՈՒԹ (՝)

*Դիտեցեք բութի գործածությունը հետևյալ օրինակներում.*

*17. Յեվ ինչու միայն նա յերգի,*
*Միայն նա՝*
*Հովակիմը, Կարոն,*
*Սողոմոնը, Մարգարը,*
*Կամ մի բիթլիսցի,*
*Վանեցի Պողոս։*

*Բոլոր կողմերից*
*Հավաքված յելան՝*
*Թուրք, իտալացի,*
*Հնդիկ, վրացի,*
*Ռուս, շոտլանդացի,*
*Հայ, խունխուզ,*
*Թաթար, կիրգիզ, չինացի...*

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)



ՏԵՂԵԿԱՆՔ.

Թվարկումներից առաջ դրվում է բութ (*իմ ընկերներն են՝ Արամը, Սոսը, Մուշեղը*)։

*19. Նա հայր ուներ, իսկ հայրը՝ վոչխարներ...*

*Պառավ նանին ճախարակի մոտ եր դարդահալ լինում, մյուսը՝ յափում, կարում, փոքրերի հոգսը քաշում...*

(ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծատուն տղան»)

*20. Այսպես մեկդ ձենում մյուսին, ավետում ե հեռու*
*տեղից —*
*Դյուզաքյանդը՝ Քափանակին, Թոփդոլաղը՝*
*Իլխիաբին։*

ՏԵՂԵԿԱՆՔ.

Եթե բարդ ասացվածի համադաս նախադասություններից յերկրորդի մեջ վորեվե կարեվոր բառ (*օրինակ՝ բայը*) **զեղչված է**, չի դրված, այդ դեպքում փոխարենը դրվում է **բութ**. *ինչպես 19-րդ օրինակում՝* **Նա հայր ուներ, իսկ հայրը՝ վոչխարներ**, *2-րդ խոսքի մեջ զեղչված ե* **ուներ** *բայը (իսկ հայրը վոչխարներ ուներ). այդ զեղչումը խոսելիս արտահայտվում ե* **հայրը** *բառից հետո ձայնը բարձրացնելով և տրոհելով, իսկ գրության մեջ՝ բութ դնելով։*

*22. Սերոբն ուզեց՝ այդ բանն Արշակին ասի, բայց խոսքը բերնում մնաց...*

*Գրիչը ձեռքն առավ՝ Աշոտին նամակ գրի։*

*Ուզեց՝ Տիգրանից մի նվեր ստանա։*

ՏԵՂԵԿԱՆՔ.

Եթե բարդ ասացվածի գլխավոր յեվ լրացական մասերը միացնող շաղկապը զեղչված է, փոխարենը բութ է դրվում. *օրինակ՝* **Սերոբն ուզեց՝ այդ բանն Արշակին ասի** — *այս յերկու նախադասության մեջ զեղչված ե* **վոր** *ստորադասական շաղկապը (Սերոբն ուզեց,* **վոր** *այդ բանն Արշակին ասի) և զեղչված շաղկապի փոխարեն բութ ե դրված։ Այդպես նաև մյուս օրինակներում։*

*23. Հաստ ու վոստոտ ձեռնափայտին* **հենած՝** *ապին բըռնեց Գարսևան աղի տան ճանապարհը....*

Նա արդեն ընդունակ յերիտասարդ բանվորներից ջոկել եր մի յոթ հոգու՝ նոր մեքենաների վրա սովորելու համար։

(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Յերբ նախադասությունն ունի դերբայ լրացում, իսկ վերջինս էլ իր հերթին նույնպես լրացում ունի, այդ դեպքում նախադասությունն իր դերբայ լրացումից (ու վերջինիս լրացումից) բաժանվում է բութով. օրինակ՝ վերևի օրինակներից— ալին բռնեց Դարենվան ագի տան ճանապարհը նախադասությունն ունի մի հարակատար անցյալ դերբայ լրացում— հենած, վերջինս էլ՝ մի ուրիշ լրացում— ձեռնափայտին. այս էլ իր հերթին յերկու լրացում ունի— հաստ ու փոստ. նախադասությունն իր դերբայ լրացումից ու վերջինիս հետ կապ ունեցող բառերից բաժանված է բութով։

24. Յեվ լուսաբացին, յերբ հոգնած լինեք,
Յերբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,
Արևածագի խնդությամբ արբած,
Կանչեմ ձեզ, ճչամ՝ յեղբայրնե՛ր, յելե՛ք:

(Վ. ՏԵՐՅԱՆ՝ «Վերադարձ»)

Արշոն ասում եր՝ ժամք կոմսոմոլ։ (ԱՐԱՔՍ)
Մեկ էլ կարոտով նայեց նրան ու ասաց՝ գնաս բարով։

ՏԵՂԵԿԱՆՔ.

Ուղղակի կարճ խոսքերից առաջ դրվում է բութ։ Ուղղակի խոսք կոչվում է ուրիշի ասածը, յերբ անփոփոխ մեջ է բերվում։ Վերևի օրինակների մեջ յեղբայրնե՛ր, յելե՛ք և գնաս բարով ուղղակի խոսքեր են։

## II. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

### 1. ՇԵՇՏ (՛)

25. Չա՛խկ-չո՛ւխկ, չա՛խկ-չո՛ւխկ, քնի՛ր, կի՛մա:

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Արևը, հուրհրան արևը)

Մասո՛ւ տղա, նզովյալ լինես, չեթե շվաքդ անպակաս անես ես օջախին։

(Ա. ԲԱԿՈՒՆՑ՝ «Մասուն տղան»)



— Աղջի՛, Խասո՛, վո՞նց ես դրա ձեռի տակ մնում։
— Ա՛յ Խասիկ, մեր ջանը դուրս գա մի կտոր հացի համար։
— Շողո՛, մեր որն էլ կորչի, թքենք ու հեռանանք։
— Թո՛ղ, Խա՛սիկ, մի՛ պատմի, արյունը խփում է քունքերիս մեջ։
— Դե՛հ, վե՛ր կաց՝ գնանք։
— Չե՛, չեմ ուզում, Հեքոն կգա, կկատաղի։
— Սո՛ւս, սու՛ս, դո՛ւրս արի, միքիչ ետեղ պտտվենք։
— Է՜, իրավո՛ւնք չունես։
— Մի՛ մտածի, Շողո՛, ամբողջ կոմսոմոլն ետեղ ա։

(ԱՐԱՔՍ՝ «Նոր հորիզոն»)

Հրեն Կապսը սարին կանգնած՝ հովվականչին ձեն է տալիս,
Թե՝ հե՛յ, լա՛ճ՝ հրես ջրիս ձե՜նն է գալիս, ձե՜զ է գալիս։

(ՀԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Բայլեկին և Շիր-կանալը»)

Է՜յ, ծո՛վն է հունձը, մաշինա՛,—
Տխուր է գնգում գերանդին։

(Ն. ԶԱՐՅԱՆ՝ «Հնձվոր»)

Դո՛ւք— նավե՛ր, ջրե՛ր, յերկաթուղինե՛ր,
Հանքե՛ր ու ցանքե՛ր ազատ աշխարհում,
Ո՞ւմ եք պատկանում։
— Հանո՛ւր մարդկության։

(ՀԱԿ. ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Հավասարություն»)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Շեշտ դրվում է՝ 1) կարճ ու սուր արտասանվող ձայնարկությունների վրա (չա՛խկ-չո՛ւխկ, ա՜յ, դե՜, հե՜յ, և և այլն).

2) կոչական բառերի վրա, որոնք ցույց են տալիս այն առարկան, որին դիմում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար. վերևի օրինակներում՝ կինա՛, աղջի՛, Խասո՛, Շողո՛, մաշինա՛, նավե՛ր, ջրե՛ր, յերկաթուղինե՛ր և այլն):

Յեթե կոչական բառն ունի որևէ լրացում (վերադիր)— առաջից դրած, շեշտը կարող է դրվել այդ լրացումի վրա (վերևի օրինակների մեջ՝ Մասո՛ւ տղա, ուր բուն կոչական բառն է տղա, իսկ Մասու բառն այդ կոչականի լրացումն է.— ա՛յ Խասիկ, չքնա՛ղ թատրոններ և այլն).

3) բայերի հրամայական յեղանակի վերջին վանկի վրա (վե-

ըևի օրինակների մեջ—քնի՛ր, թո՛ղ, մի՛ պատմի, վե՛ր կաց, դո՛ւրս արի, մի՛ մտածի և այլն)։ Արգելական հրամայականի շեշտը դըրվում է արգելական մի մակբայի վրա (մի՛ պատմի)։ Հարադրյալ բայերի հրամայական շեշտը դրվում է հարադրի վրա—վե՛ր կաց, դո՛ւրս արի և այլն).

4) **առանձնապես ուժեղ արտասանվող բառերի վրա,** ինչպես վերևի օրինակներում՝ **իրավո՛ւնք** չունես, **քո՛նն է հունձքը** և այլն։

## 2. ՀԱՐՑԱԿԱՆ (՞)

26. — Յեվրոպացի, դու լավ վարպետ ես, — ասում է մի բանվոր. — էլ **վո՞րտեղ ես աշխատել**։

— Էլ **վո՞րտեղ** չեմ աշխատել, — պատասխանում է «Յեվրոպացին»։ — Յես, **գիտե՞ք**, շատ եմ աշխատել։ Քսանմեկ տարի։

— Դու **ինչո՞ւ** չեկար, Յեվրոպացի։

— **Չե՞ս** ձանձրանում այստեղ, Յեվրոպացի։

— **Ինչո՞ւ** պիտի ձանձրանամ, — շարունակում է բարձրաձայն։

— **Ո՞վ** գիտե։

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Յեվրոպացին»)

— Ի՛, աղջի, հենց ասում եք, էլի, բա էլ **ո՞ւր** գնամ։

— Գետիդ **ի՞նչ ա**..— մեջ մտավ ծիծաղելով հարևանենց չաղլիկ Սոնան։

— **Ի՞նչ** ես ասում.—կարմրեց ամոթահար Խասիկը։

— Ե՛, Սոնա՛։

ԱՐԱՔՍ՝ «Նոր հորիզոն»)

Յեվ **ինչո՞ւ** միայն նա յերգի.
Իսկ **Իվա՞նը, Ֆուստո՞ւմը, Ջունգ-Ցո՞ւն,**
Վոր իրար ճանաչում են վաղուց...
Յեվ **մի՞թե** դուք չգիտեք...
Էլ **ինչո՞ւ** միայն նա յերգի...
Թող յերգեն՝ ինչքան մարդ վոր կա։ —
Թող աշխարհը ամբողջ յերգի—
Զնգա՛, զնգա՛, զնգա՛...

(ՅԵՂ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)



ՏԵՂԵԿԱՆՔ.

**Հարցական դրվում է այն բառի վրա, վորով հարց է տըր-վում։** Այդ բառն արտասանելիս մեր ձայնը վոլորվելով բարձրանում է։ Հարց տրվում է սովորաբար չիմացած բանի մասին, սակայն կարող է տրվել նաև **իմացածի** մասին։ Վերջին տեսակի հարցը **ճարտասանական** հարց է կոչվում։ Այսպիսի հարցի պատասխանը հարցնողն ինքը գիտե, բայց հարցնում է ունկընդրին և յերբեմն էլ ինքը պատասխանում։

Վերևի օրինակներում ճարտասանական հարցական խոսքեր են—**էլ վո՞րտեղ չեմ աշխատել յես,—ինչո՞ւ պիտի ձանձրանամ,—Գետիդ ի՞նչ ա,—յեվ ինչո՞ւ միայն նա յերգի,—յեվ մի՞թե դուք չգիտեք** և այլն։

**Դրական ճարտասանական հարցերն ունեն բացասական նշանակություն, իսկ բացասական ճարտասանական հարցերը—դրական։** Վերևի օրինակներում—**էլ վո՞րտեղ չեմ աշխատել յես = ամեն տեղ աշխատել եմ յես.—ինչո՞ւ պիտի ձանձրանամ=չպիտի ձանձրանամ.—ինչո՞ւ միայն նա յերգի=միայն նա չպիտի յերգի.— յեվ մի՞թե դուք չգիտեք=դուք գիտեք**։

## 3. ՅԵՐԿԱՐ (՜)

— **Յալլա՜, յալլա՜, յալլա՜...**
— **Հա՜, հա՜, հա՜...**
— Հա՜ զուռբան, հա՜ զուռբան, **հա՜, հա՜...**
— Վո՜ժ տուր, վո՜ժ տուր...

(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)

— **Հո՜**, մարա՜լ յեզ, հո **հո՜**, ջեյրա՜ն յեզ, **հո՜**, մարալ, **հո՜**, ջեյրան...

**Հե՜յ** գիտի Աթո՛, ժեռած Աթո։

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Արևը, հուրհրան արևը»)

Բայց Իվանը հանկարծ բղավեց.
— **Կանգնեցե՜ք, կանգնեցե՜ք, կանգնեցե՜ք...**
Կանչեց աշխուժով հրձիգ.
—Բանվորներ ամբողջ յերկրի՝
**Միացե՜ք, միացե՜ք, միացե՜ք**։

(ՅԵՂ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Որ ու արև չտեսանք,
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

(ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Յերկար նշանը դրվում է այն բառերի վրա, վորոնք սովորականից յերկար արտասանվելով՝ բացականչություն են արտահայտում, կամ զգացմունք։ Ձայնարկությունների վրա կամ յերկար է դրվում, կամ շեշտ, նայած տեղին և առոգանության։

Վերևի օրինակներում ընդգծված (շղատառ) բառերը (յա՜լլա՜, հա՜, հո՜, հե՜յ և այլն) ձայնարկություններ են։

# III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

## 1. ՉԱԿԵՐՏՆԵՐ (« » „ “)

28. «Սարեր, լեռներ ճեղքեց, ոտար աշխարհ հանեց. գյամին կրակի պես փախցրեց հեռո՜ւ, հեռո՜ւ, մեր աչքից, մեր կրծքից խլեց մեր վորդուն...»,—գրել եր մայրը. «Այնտեղ ի՞նչ լավ եր, օջախի շուրջը ոլորը շարված... նա վո՞րքան յերջանիկ եր. բայց այժմ, հրացանն ամուր գրկած՝ հսկում է մարդկանց. ինչու... ինչո՞ւ...»։

«Անցե՛ք տեղներդ»,—հրամայեցին մեզ։
«Նը-շա՛ն»,—գոռացին մեզ։

(Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ «Պահակը»)

«Յեվրոպացին» այդպես է սիրում լվացվել։ Գործարանի բոլոր բանվորներին ծանոթ է նրա սովորությունը։

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Յեվրոպացին»)

«Ես տնաքանդի ռուսը տես մի ինչե՜ր արաց»...—ասում է մեկը, վոտքով ծուլորեն խփելով յերկաթուղագծին և յուղոտ մի ժպիտ յերեսին՝ լսելով յերկաթուղագծի զնգոցը։

— Ասպես վոր նստելու լինես, մինչև ու՞ր կգնաս...
«Հենց ու՜ր վոր ուզես»—պատասխանում է մյուսը։
— Մոսկվա կգնա՞ս։
«Իհարկե, կգնաս»։
— Կի՞վ...



«Կիվ էլ կգնաս»...

Ու տիրում է լռություն՝ ակնածանք ու զարմանք։

..... Քաղաքում կա միայն յերկու բաղնիք, յերկուսն էլ ասիական, թեկուզ մեկի անունն է «Ճերմակ», վորովհետև նրա պատերն սպիտակացրած են կրով. — իսկ մյուսը, վոր մեչեթի նման ձմերուկաձև գմբեթ ունի, կոչվում է «Ցանցագիա» բաղանիք...

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Յերկիր Նայիրի»)

... Այդպիսի «կոմմունիստներ», վորոնք վճռական մոմենտին մնում են «չեզոքության» դիրքերում.... չեն կարող օգուտ բերել... Այն «կոմմունիստները» և «կոմյերիտականները», վորոնք համատարած կոլլեկտիվացման շրջաններում հրաժարվում են մտնել կոլտնտեսություն, նրանք վոչինչ ընդհանուր չունեն մեզ հետ և չպետք է թույլ տալ, վոր նրանք խանգարեն մեր աշխատանքը.....

..... Կոմյերիտական կազմակերպությունները պիտի արդարացնեն Լենինի խոսքերը, դառնան «հարվածային խմբեր»...

(Ա. Խանջյան՝ «Համատարած կոլլեկտիվացման մարտական խնդիրները», «Խորհրդային Հայաստան», 1930 թ. № 20)

Մի՞թե «ազգադավ» կարգերը,
Բարքերը մեր
Տանել՞ դարձան քեզ։
. . . . . . . . . .

Որերը,
Վոր գիտեյին քեզ բերել
Գուրգուրանք հոգեթով,
Արբեցում
Ու «սեր».....

«Որիորդ» Ո՛լգա,
Որերն այն՝
Քեզ կատվի պես շոյող,
Գնացին անդարձ.....

(ԱԼԱԶԱՆ՝ «Որիորդ Օլգա»)

«Խորհրդային Հայաստան»-ում, «Յեվանգարդ»-ում, «Մանկալ»-ում հոդվածներ են լույս տեսնում կոլխոզշարժման մասին։

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Որ ու արև չտեսանք,
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք։

(ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Յերկար ձայնը դրվում է այն բառերի վրա, վորոնք սովորականից յերկար արտասանվելով՝ բացականչություն են արտահայտում, կամ զգացմունք։ Ձայնարկությունների վրա կամ յերկար է դըրվում, կամ շեշտ, նայած տեղին և առոգանման։

Վերևի օրինակներում ընդգծված (շղատառ) բառերը (յալլա՜, հա՜, հո՜, հե՜յ և այլն) ձայնարկություններ են։

# III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

## 1. ՉԱԿԵՐՏՆԵՐ (« » „ “)

28. «Սարեր, լեռներ ճեղքեց, օտար աշխարհ հանեց. գյամին կրակի պես փախցրեց հեռո՜ւ, հեռո՜ւ, մեր աչքից, մեր կըրծքից խլեց մեր վորդուն...»,—գրել եր մայրը. «Այնտեղ ի՞նչ լավ եր, օջախի շուրջը բոլորը շարված... նա վո՞րքան յերջանիկ եր. բայց այժմ, հրացանն ամուր գրկած՝ հսկում է մարդկանց. ինչու... ինչո՞ւ...»։

«Անցե՜ք տեղներդ»,—հրամայեցին մեզ։
«Նը-շա՜ն»,—գոռացին մեզ։

(Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ «Պահակը»)

«Յեվրոպացին» այդպես է սիրում լվացվել։ Գործարանի բոլոր բանվորներին ծանոթ է նրա սովորությունը։

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Յեվրոպացին»)

«Ես տնաքանդի ռուսը տես մի ինչե՜ր արաց»...—ասում է մեկը, վոտքով ծուլորեն խփելով յերկաթուղագծին և յուղոտ մի ժպիտ յերեսին՝ լսելով յերկաթուղագծի զնգոցը։
— Եսպես վոր նստելու լինես, մինչև ո՞ւր կգնաս...
«Հենց ո՞ւր վոր ուզես»—պատասխանում է մյուսը։
— Մոսկվա կգնա՞ս։
«Իհարկե, կգնաս»։
— Կի՞վ...



«Կիվ էլ կգնաս»..
Ու տիրում է լռություն՝ ակնածանք ու զարմանք։

..... Քաղաքում կա միայն յերկու բաղնիք, յերկուսն էլ ասիական, թեկուզ մեկի անունն է «Ճերմակ», վորովհետև նրա պատերն սպիտակացրած են կրով. — իսկ մյուսը, վոր մեչեթի նման ձմերուկաձև գմբեթ ունի, կոչվում է «Ֆանտազիա» բաղնիք...

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Յերկիր Նայիրի»)

... Այդպիսի «կոմժունիստներ», վորոնք վճռական մարտի ժամին մնում են «չեզոքության» դիրքերում.... չեն կարող օգուտ բերել... Այն «կոմմունիստները» և «կոմյերիտականները», վորոնք համատարած կոլլեկտիվացման շրջաններում հրաժարվում են մտնել կոլտնտեսություն, նրանք վոչինչ ընդհանուր չունեն մեզ հետ և չպետք է թույլ տալ, վոր նրանք խանգարեն մեր աշխատանքը.....

..... Կոմյերիտական կազմակերպությունները պիտի արդարացնեն Լենինի խոսքերը, դառնան «հարվածային խմբեր»...

(Ա. Խանջյան՝ «Համատարած կոլլեկտիվացման մարտական խնդիրները», «Խորհրդային Հայաստան», 1930 թ. № 20)

Մի՞թե «ազգադավ» կարգերը,
Բարքերը մեր
Տանելի՞ դարձան քեզ։
. . . . . . . . . .

Որերը,
Վոր գիտեյին քեզ բերել
Գուրգուրանք հոգեթով,
Արբեցում
Ու «սեր».....

«Որիորդ» Օ՛լգա,
Որերն այն՝
Քեզ կասվի պես շոյող,
Գնացին անդարձ.....

(ԱԼԱԶԱՆ՝ «Որիորդ Օլգա»)

«Խորհրդային Հայաստան»-ում, «Ավանգարդ»-ում, «Մաճկալ»-ում հոդվածներ են լույս տեսնում կոլխոզշարժման մասին։

Կինո «Պրոլետար»-ում և «Նայիրի»-ում այսօր հետաքրքիր ֆիլմեր են ցուցադրվում։

«Արարատ» գործարանի բանվորությունը բանբրիգադներ է ուղարկել։

Մենք այս յեռամսյակում վերլուծել ենք— Ալազանի «Դասալիք»-ը, Մ. Արմենի «Յեվրոպացին», «Արեվը, հուրհրան արեվը», Ակսել Բակունցի «Ծառուն տղան», Հակոբ Հակոբյանի «Բոլշեվիկ և Շիր-կանալը», Գ. Աբովի «Շիրակի ջրանցքի բանվորներին» և այլն գրվածքները։

ՏԵՂԵԿԱՆՔ.

Չակերտների մեջ են առնվում՝

1. Ուրիշի խոսքերը, յեթե այդ խոսքերն անփոփոխ, ինչպես ուրիշն ասել է, մեջ են բերվում։

Ուրիշի գրվածքից մեջ բերած կտորները։

2. Գրվածքների, լրագրերի, հանդեսների անունները, յերբ այդ անունները հիշատակվում են այս կամ այն հոդվածում («Դասալիքը», «Ծառուն տղան», «Խորհրդային Հայաստան», «Նոր Ուղի» և այլն)։

3. Այն հիմնարկների անունները, վորոնց անունները առանց չակերտների այլ իմաստ ունեն (Կինո «Պրոլետար», «Նաիրի», «Արարատ» գործարան, «Հերմես» տպարան և այլն)։

4. Հակառակ իմաստով, յերբեմն հեգնական մտքով գործածված բառերը (այդպիսի «կոմմունիստներ», «չեզոքության» դիրքերում, «կոմյերիտականները», «ընկեր» Ոլգա, «սեր», «աղգաղավ», «ուրախ», «քաջ» և այլն)։

2. ՓԱԿԱԳԾԵՐ ( )

29. Ապա գրասենյակի դուռը փակելով՝ ըստ սովորականին սկսեց նրա «փեշը քաշել» (խրատել հասկացիր, ընթերցող, ըստ Մանրուսյանի բառարանի)....

Այս չորսը միջուկն են, իսկ սրանց ավելի մոտիկ կանգնած են Արսենը («բաղասեր Արսեն») և Սեդրակը («խոզասեր Սեդրակ»)։

(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)

Յեվ յերբ հայրը մեռավ (իսկ հայրը վոչխարասեր Ծասին եր), մեռելահացն ուտելիս մի ալևոր բարեմաղթեց լոշ ականջի տավարին ու ոջախին առատություն։

(ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ՝ «Ծառուն տղան»)



Զգիտե՞ք... իմացեք հիմա
(Ականջներդ լա՛յն բացեք)
Ուրիշ հանճարներ չկան աշխարհում.....
Յեվ գիտե՞ք՝ ինչե՞ր են յերգել
(Զկարծեք, վոր չէին մի «Հայնե»,
«Լիր արֆա», «Ֆաուստ» մի հիմար.
Նրանք ժամանակ չունեն
Այդպիսի յերգերի համար...)

. . . . . . .

Կամ աշնան տերևի նման
Կարող է թռչել կարոն
(Կուզեք՝ թող լինի Հյուգո)
Բիթլիսից՝ Մարսել, Յերևան,
Պեքին, Գահիրե, Ջիքագո...

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան—
(Արեվածա՛գ, ո՛, արշալո՛ւյս արյունոտ).
Կանգնած եյին զինվորներն ու քահանան,
Գունատ ու լուռ կանգնած եյին նրա մոտ...

Տեր քահանան վոչ մի աղոթք չեր հիշում
(Սիրտը նրան շշնջում եր՝ անիծի՛ր).
Լուսածագի ծիրանավառ մշուշում
Ցայտում եյին ճաճանչները ցան ու ցիր...

Մռայլ սպան լուռ նայում եր աջ ու ձախ
(Արդյոք հիշեց նա իր մորը սգավոր).
Գունատվում եր մութ գիշերը, և ուրախ
Արեգակն եր վոսկեզօծում սար ու ձոր...

Լուսաբացին նա բարձրացավ կախաղան—
(Արեվածագ, ո՛, արշալո՛ւյս արյունոտ).
Կանգնած եյին զինվորներն ու քահանան,
Գունատ ու լուռ կանգնած եյին նրա մոտ...

(Վ. ՏԵՐՅԱՆ՝ «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան»)

*Մայրենի լեզվի նկատմամբ բարձր տիպի (V—VII) դպրոցի նպատակներից են՝ բացի զուտ լեզվական ունակությունների* (**գրավոր յեվ բանավոր**) *զարգացումից՝ տեղեկություններ տալ աշակերտներին XIX և XX դարի գրականության մասին՝ տվյալ ժամանակաշրջանի հեղինակների այնպիսի գրվածքների միջոցով, վորոնք՝*

**ա**) *մատչելի յեն տվյալ տարիքին,*

**բ**) *զուրկ չեն գեղարվեստական արժեքից,*

**գ**) *բնորոշում են տվյալ հեղինակի սոցիալական դեմքը և գրական առանձնահատկությունները։*

*(ՑԵ. ՉԱՐԵՆՑ՝ „Գրականության դասընթաց», ուսման 6-րդ տարի, 1928)*

*ՏԵՂԵԿԱՆՔ*

**Փակագծերի մեջ են առնվում՝**

*1)* Ասացվածի մեջ այն նախադասությունները կամ բառերը, վորոնք բուն ասացվածի հետ սերտ առնչություն չունեն, միջանկյալ նախադասություններ կամ բառեր են, *կամ դրվում են վորպես բացատրություն ասացվածի մեջ գործածված վորևէ բառի, կամ մտքի. որինակ՝* **յեվ յերբ հայրը մեռավ** *(***իսկ հայրը վոչխարատեր Մոսին էր***), մեռելահացն ուտելիս մի ալևոր բարեմաղթեց... այս ասացվածի մեջ* **իսկ հայրը վոչխարատեր Մոսին էր** *նախադասությունը սերտ կերպով չի կապվում ասացվածի հետ և շատ յերկրորդաբար միայն լրացնում է ասացվածի* **հայրը** *բառի իմաստը, պարզելով, թե ով էր հայրը. այս նախադասությունն ընդհատում է* **յեվ յերբ հայրը մեռավ** *նախադասությունը և ասացվածի մեջ մտնում է վորպես* **միջանկյալ** *մի մաս, ուստի առնվում է փակագծերի մեջ։ Այդպիսի նախադասությունները յեթե բաց թողնենք, ասացվածի միտքը չի փոխվի։*

*.... Սկսեց նրա «փեշը քաշել» (խրատել հասկացիր, ընթերցող, ըստ Սանթրոսյանի բառարանի)—այստեղ փակագծերի մեջ առնված նախադասությունն ասացվածի «փեշը քաշել» բառերի բացատրությունն է։*

*2) Թվարկումների ժամանակ փակագիծ է գործածվում հետևյալ ձևով 1)..., 2)..., 3)...,—ա)..., բ)..., գ)... և այլն։*



**Յ. ԿԱԽՄԱՆ ԿԵՏԵՐ** (...)

*30. Բաղում է Արտոն, ինքն էլ չի իմանում՝ արթո՞ւն է, թե՞ քաղաքում...*

*Հասկերի վոսկի գլխիկների միջից քաղաքն է փռվել նրա դեմ՝ իր ուղիղ փողոցներով և սև, քարաշեն տներով։*

*Քաղաքը... տները... պրոժեկտոր... թատրոն... պաշտոններ...*

*.... Մտքի աչքերով սլանում է հեռուներն ու հեռուները...*

*.... Կանգ առավ, նորից կկոցեց աչքերը, յերկար մտածեց. «...կոմսոմոլ է... ջհաննամ թե կոմսոմոլ է... հաստագլուխ է, հաստագլուխ... բերնում բան չի մտնում... Ա՛շի, անգլյալ գող է, ուղղ արա, թող գնա...»։*

*(ԱԼԱԶԱՆ՝ «Դասալիքը»)*

*— Ոգնեցե՛ք... շտապեցե՛ք... յես փող կտամ... ջո՛ւր հասցրեք, ի՞նչ եք սառել, անպիտաններ... քանդեցի՛ք դուք իմ տունը, սրիկաներ... գողեր... ավազակներ,—անդադար հայհոյում էր նա մշակներին, շվարած այս ու այն կողմ վազվզելով։*

*— Փախե՛ք... փախե՛ք... հեռացե՛ք... պատը քանդվում է։*

*— Վա՛յ, գլուխս... վա՛յ... խեղդվեցի՜... ոգնեցե՛ք...*

*— Ձե՛ռքս... ձե՛ռքս... ա՛յ... այրվում է ձեռքս... ո՛ւֆ... ո՛ւֆ...*

*(ՇԻՐՎԱՆԶԱԴԵ՝ «Հրդեհ նավթագործարանում»)*

*Շիրակի դաշտերից հանկարծ*
*Ջրահապատը խանդով առաջին*
*Նաիրի դաշտերում գնգաց...*
*Ջրահապատը գնգաց գնգուն,*
*Շիրակի դաշտերից կանչեց...*
*Հիշո՞ւմ ես՝ յեղավ տոն,*
*Լույսի ու յերկաթի մեծափառ հանդես.*
*Ջրերի վրա վիթխարի մի տուն.*
*—որոր...*
*շփոթում...*
*Մարսելիեզ.—*
*անտես...*

Ու մեռան...
Գնացին...
Ո՞ւր...

(ՑԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Ամենապոեմ»)

— Քանի՞ հոգի յեն ձեր խնամքի տակ։

— Իմ... իմ... — կմկմաց Ալեքսանը. — յերկու հոգի՝ կինս, փոքր վորդիս... իսկ մեծը...—յերկարացրեց նա ու կանգնեց։

— Նա. . նա... իմ հայրն եր,—ասաց Համոն.—իսկ հիմա... վո՛չ,—դուրս թռավ նրա բերանից։

(ԱՆՈՒՇ՝ «Վճռական քայլը»)

ՏԵՂԵԿԱՆՔ.

Կախման կետեր (*յերեք կետ*) դրվում են՝

1. Յերբ խոսքն անկախ, կիսատ է թողնվում ինչ-ինչ պատճառներով, յերբեմն այնպես, վոր ընթերցողը հասկանում է։ *Օր.՝ յերբ կարդում ենք՝* ձայնդ...—*հասկանում ենք՝* ձայնդ կտրիր։

2. Յերբ խոսքերը զեղչված բայերով իրար են հաջորդում՝ տրպավորություն թողնելու կամ զգացմունք արտահայտելու համար։ *Օ-րինակ, յերբ կարդում ենք՝* ամեն տեղ — զնգոց... յերկաթի զըրգիռ. որերը — հրետանի...,— *հասկանում ենք՝* ամեն տեղ զնգոց կա, յերկաթի գրգիռ կա, որերը հրետանի յեն։

## 4. ԲԱԶՄԱԿԵՏ (....)

31. Մի լար, վորդիս, վոր չես լսում
Ել մայրական քաղցր որոր.
Յես մեծ կռվի յերգ եմ հյուսում
Օրոցքիդ մոտ ամեն օր։

. . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . .

Դու լսում ես՝ այնտեղ, դըրսում
Ճաչ ու շառաչ, լաց ու կոծ.—
Մեր արյունն է այնտեղ հոսում,
Ներկած և՛ տուն, և՛ փողոց...

. . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . .

(ԱԼ. ԾԱՏՈՒՐՅԱՆ՝ «Բանվորուհու օրորը»)



ՏԵՂԵԿԱՆՔ.

Բազմակետը (*առնվազն չորս կետ. չշփոթել կախման կետերի կամ յերեք կետի հետ*) գործ ենք ածում այն ժամանակ, յերբ ուրիշի գրվածքից մեջբերումներ ենք անում՝ վորոշ մասեր բաց թողնելով. *ահա այդ բաց թողած մասերի տեղ բազմակետ ենք դընում (տես վերևի օրինակը. այդ վոտանավորից բաց թողած յերկրորդ տան չորս տող կետերի փոխարեն կարելի յեր առաջին տան վերջը չորս կետ դնել)։ Բազմակետը մեծ մասամբ գործ է ածվում այս կամ այն գրվածքից* ցիտատներ *բերելու ժամանակ, յեթե վորոշ բառեր կամ նախադասություններ բաց են թողնվում։*

## 5. ԳԻԾ (—)

32. Բանվորները զարմանում են։ Հավաքվում են իրար գլխի և «Յեվրոպացու» գլխին։

— Վարպե՛տ, այնպես ես խոսում, կարծես թե դու շինած լինես այս գործարանը։ Այդքան բան վո՞րտեղից գիտես...

«Յեվրոպացին» մի աչքը փակում է, ապա մյուսը և ծիծաղում է։

— Համարյա թե։ Յես եմ շինել, բա ի՞նչ։

Ու ծիծաղում է։

Բանվորները չեն հավատում և չեն հասկանում։

— Բա՛ս...

— Ֆրանսիացիներին յե՞րբ խաբել ավեք։

(Մ. ԱՐՄԵՆ՝ «Յեվրոպացին»)

— Ձեր ազգանո՞ւնը։
— Կ...ով։
— Քանի՞ տղամարդ։
— Յերկու։
— Կի՞ն։
— Մեկ։
— Յերեխա՞։
— Չորս։
— Փո՞քր են։
— Այո։
— Ո՞վ է այս ծերունին։
— Ամուսնուս հայրը։
— Վաղո՞ւց է հիվանդ։

— Վաղուց։
— Բժիշկ գալի՞ս է։
— Բժշկի կարիք չկա... Նա կմեռնի...

(ՄԻՔ. ՄԱՆՎԵԼՅԱՆ՝ «Սև քաղաքում»)

Նա իզուր է աշխատում ծածկել ինձնից իր վիշտը. մի վիշտ — և այն էլ ծանր վիշտ — կրծում է նրա սիրտը և մեծ մտատանջություն է պատճառում նրան....

Գուշակությունս ճիշտ դուրս յեկավ. դժբախտությունը, — և այն էլ ինչպիսի՜ դժբախտություն, — առաջին անգամ բաց արավ մեր տան դուռը և ներս մտավ՝ այնտեղից այլևս յերբեք չհեռանալու մտքով։

Մի անգամ միայն — այն էլ հազիվ յերկու րոպե -- ճանաչեց ինձ և լաց յեղավ։

Ինձ տեսնելուն պես դեմքը սաստիկ խոժոռեց (այդ առաջին անգամն էր, վոր ինձ այդպես էր հանդիպում) և հետո, յերևի ճանաչելով, ժպտաց և, բարևելու փոխարեն, Թաշկինակը քնքշորեն իմ կողմը գցեց։

Զքավորությունը (ո՞վ գիտե, գուցե ծայրահեղ աղքատությունը) ներս կմտնի մեր տուն։

Այն բոլորը, ինչ վոր կտեսնես, շատ ծիծաղելի — չեմ ասում դառն — կատակ կթվա քեզ։

Մայրս ուզում է տունը ծախել, բայց յես չեմ թողնում. դրանից ստացած փողն էլ շուտով կհատնի (մանավանդ վոր տունն անհամեմատ պակաս են գնահատում), այնուհետև ինչ պիտի անենք, ինչո՞վ պիտի վճարենք բնակարանի վարձը։

(ՆԱՐ-ԴՈՍ՝ «Աննա Սարոյան»)

### ՏԵՂԵԿԱՆՔ

Յերկու կամ ավելի անձերի խոսակցությունը գրավոր արտահայտելիս յուրաքանչյուրի խոսքն սկսվում է նոր տողից, և սկիզբը գիծ է դրվում։ Այսպիսով՝ գիծը փոխարինում է չակերտներին։ Պատմողի կամ հեղինակի բառերն ուրիշի բառերից բաժանվում են ստորակետով ու գծով (, –). օրինակ՝

— **Ո՞վ է այստեղ,— հարցրեց Գրիգորը.** այստեղ **ո՞վ է այստեղ** ուրիշի (Գրիգորի) բառերն են, իսկ **հարցրեց Գրիգորը** պատմողի բառերն են և նախորդ բառերից բաժանված են ստորակետով և գծով։



Միջանկյալ բառերն ու խոսքերն ասացվածքի մյուս մասերից կարող են բաժանվել կամ փակագծերով, ինչպես վերը տեսանք, կամ ստորակետով ու գծով և կամ միայն գծով՝ սկզբից ու վերջից. օրինակ՝ **մի վիշտ — յեվ այն էլ ծանր վիշտ — կրծում է նրա սիրտը.** այստեղ բուն ասացվածն է **մի վիշտ կրծում է նրա սիրտը.** իսկ **յեվ այն էլ ծանր վիշտ** բառերը, ընդհատելով նախադասությունը, միջանկյալ կերպով ընկել են խոսքի մեջ, բաժանվելով վերջինիցս, սկզբից ու վերջից, գծերով։ Այսպիսով գիծը (կամ ստորակետն ու գիծը) վորոշ դեպքերում փոխարինում են փակագծերին։

### Ե. ԳԾԻԿ ԿԱՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻԾ (-)

**Ռադիո-կայան** է իմ հոգին հիմա
Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդեպ...

Ու **հեռու-հեռուն**՝
Կարմիր Մոսկվում,
Տիբեթում դեղին,
**Սան-Ֆրանցիսկոյում**, Լոնդոնում հսկա
Ու Սինգափուրում —
Բոլոր վայրերում, բոլոր կողմերում
Աշխարհը մի նոր յերգով է հղի։

(ՅԵ. ՉԱՐԵՆՑ՝ «Դեպի ապագան»)

Գիշերն եկավ, **զով-հովն** ընկավ,
Աստղունք լուսնին ձեն տվին,
Լուսնյակն ելավ, **մով-ծովն** ընկավ,
Հավքերն ինձի ձեն տվին։

---

Բալես ունի **հնգու-մարա**,
Վոսկի օրոցք, ատլաս ծածկոց....
Նանիկ կենես, նանի՛ **գա՛ր-գա՛ր**,
Աչքդ, ունքդ աստղ ու կամար...
Տիտիկ արա, ծիծիկ մամա,
**Պիծիկ-միծիկ** տոտիկ արա....

(ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ)

**Ջը՛նգ-ջը՛նգ**, — լսվեց [illegible] կայարանի զանգը։

— **Դը-գը-դը-գը՛**, [illegible] մեքենան արագ աշխատում էր։

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան Публичная библиотека

— **Չը՛խկ-չըխկ, չը՛խկ-չըխկ**, —լուսամուտի մոտ նստած մեքենագրուհին անընդհատ տպում էր։

(ԱՆՈՒՇ՝ «Մանայոր Սեթը»)

Դիտեցեք գծիկի գործածությունը հետեվյալ բառերի մեջ.

1. Աման-չաման, մանր-մունր, փալաս-փուլաս, կլոր-մլոր, սեկ-մեկ, պարապ-սարապ, ծակ-ծուկ, ավալ-թավալ, ափալ-թափալ և այլն։

2. Ահ-դող, հալ-մաշ, կաշ-կարասի, գունդ-կծիկ։

3. Բաց-խուփ, դնալ-գալ, գրել-կարդալ, տուն-տեղ։

4. Լեփ-լեցուն, կաս-կարմիր, ճիփ-ճերմակ, դափ-դատարկ։

5. Անգլո-ամերիկական, ֆրանս-գերմանական, ռուս-հայկական, հունա-հռոմեական, հայ-թուրքական և այլն։

6. Սուն-Յաթ-Սեն, Զան-Ցո-Լին, Ու-Պեյ-Ֆու։

7. Մարդ-գազան, դպրոց-խանութ։

ՏԵՂԵԿԱՆՔ.

**Գծիկ կամ միության գիծ գրվում է՝**

1. Երկու բառի մեջ, որոնք մի իմաստ են արտահայտում (*մարդ-գազան, դպրոց-խանութ*)։

2. Փոփոխությամբ կրկնվող բարդ բառերի միջեվ (*մանր-մունր, աման-չաման*)։

3. Երբեմն նույնությամբ կրկնվող, մեծ մասամբ միավանկ բառերի, ձայնարկությունների միջեվ (*կամաց-կամաց, մեծ-մեծ, խոր խոր, ըը՛նգ-ըը՛նգ, չը՛խկ-չը՛խկ և այլն*)։

*Բացատրեցեք հետեվյալ վոտանավորի կետադրությունը.*

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

# ՄԱՅՐԸ

*Սանգուղքն անծայր, խոլ ու ահագնած,*
*Ուր մոլեգնում էր բուքը շառաչուն,*
*Գնդակի նման սուլող, սրընթաց*
*Մի ձիավոր էր քամու պես թռչում։*



*Նա պիտի անցներ հայրենի գյուղով,*
*Սոսենու ճերմակ անտառի միջից,*
*Ուր յեղնիկներն են փախչում յերկյուղով*
*Հովից վայր ընկած տերեվի շնչից…*

*Տեսնում է փայտե խրճիթները փակ,*
*Իր տանիցան՝ ծավալուն ձյունով.*
*Ահա այն վայրը… ուր մայրը ճերմակ*
*Ճանապարհ դրեց իրեն հեծկլտունով…*

*Ու նորից գնաց — ցրուրտ, միգասքող*
*Տայգաներ դոփեց — սառցներից դեն,*
*Սոենկա Ռազինի ահեղ մոլուցքով*
*Պայքար էր մղում կոլչակների դեմ…*

*Պայքարի բուքն էր գազազում խելառ,*
*Բուք էր և ձիու բաշը պղնձի,*
*Վորպես աղեղի պրկըված մի լար՝*
*Թռչում էր ինքն ու քամաշունչ մի ձի։*

*Յեվ ահա, ծանոթ հայրենի գյուղում*
*Մի կին կտրում է ճանապարհ նրա.*
*Ծառանում է ձին — ձյուներում շողուն,*
*Յետ նորից իջնում վոտքերի վրա։*

*—Իսկ ո՞ւր են մերոնք…մյ դու խենթացած։*
*—Շատերը ընկան դիպուկ գնդակով.*
*Իվանչո՞ւկը… հա… դե նա չել գնաց…*
*Յերբ գնում եյինք կրակի տակով…*

*Մեզանից շատե՛ր… շատերը չկան…*
*Բայց բանը նայիր սպիտակների,*
*Ե՛խ, իմ սիրելի, պառավ կազաչկա,*
*Պինդ են զարկերը մեր տղաների…*

*Տեսնում է մայրը՝ մի բոբբ ակնթարթ*
*Ակայծեց իրա սրտում անպատիր.*
*Ցուրտ սանգներում արշավում է հաղթ*
*Վորդին վորպես մի հսկա բազատիր.*

—Յեվ դու՛ք հաղթեցի՞ք... էխ, էխ ջահելնե՛ր,
Պինդ են զարկերը ձեր բազուկների:
—Այո՛... յեթե... քո Իլյան չլիներ՝
Ամբողջ յերկու գունդ կմնար գերի...

Բայց նա յել ընկավ՝ պառավ Դոնեցի,
Դոնեցի հերոս կազակի նման...
Յեվ մայրը՝ սրտում դառըն կսկիծի
Մորմո՛քն է փոխում անհագ խնդության...

Շուրջը սանձարձակ բուքն է մոլեգին
Նրա սրտի տեղ պաղպաղո՛ւմ, լալիս.
Յեվ մայրն ասում է թռչող կազակին.
—Կանգնի՛ր, ձիավո՛ր, —յես էլ եմ գալիս...

—

# ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Եջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 25 | 5 ներ. | տերևոտ | տերևատ |
| 33 | 17 » | հառաջել | հառաչել |
| 34 | 3 » | դառը | դառը |
| 40 | 9 վեր. | դրոշ | դրոշներ |
| 56 | 23 » | վորոնցին | վորոնցից |
| 57 | 2 » | քիրմանի | Քիրմանի |
| » | 3 » | հնդու | Հնդու |
| 59 | 11 ներ. | Սաքով | Սաքոն |
| 89 | 4 վեր. | արդֆին | արտֆին |
| 90 | 22 » | ուտելիս եմ յեղել | ուտելի՞ս եմ լինելու |
| 92 | 12 » | (կամ կերած | (կամ կերած չեմ) |
| 96 | 2 ներ. | բարի ժպիտն | բարի ժպտան |
| 115 | 6 վեր. | անիվ եմ, | անիվ իմ, |
| 121 | 11 ներ. | հեյ, և ե այլն). | հեյ, և այլն). |

— Յեվ դու՛ք հաղթեցի՞ք... ե՛ս, ե՛ս ջահելնե՛ր,
Պինդ են զարկերը ձեր բազուկների։
— Այո՜... չեթե... քո Իլյան չլիներ՝
Ամբողջ յերկու գունդ կմնար գերի...

Բայց նա յել ընկավ՝ պառավ Դոնեցի,
Դոնեցի հերոս կազակի նման...
Յեվ մայրը՝ սրտում դառըն կսկիծի
Մորմոքն է փոխում անհագ խնդության...

Շուրջը սանձաթող բուքն է մոլեգին
Նրա սրտի տեղ պաղաղում, լալիս.
Յեվ մայրն ասում է թռչող կազակին.
— Կանգնի՛ր, ձիավո՛ր, — յես էլ եմ գալիս...

---

# ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Եջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 25 | 5 ներ. | տերևոտ | տերևատ |
| 33 | 17 » | հառաջել | հառաչել |
| 34 | 3 » | դառը | դառը |
| 40 | 9 վեր. | դրոշ | դրոշներ |
| 56 | 23 » | վորոնցին | վորոնցից |
| 57 | 2 » | քիրմանի | Քիրմանի |
| » | 3 » | հնդու | Հնդու |
| 59 | 11 ներ. | Սաքով | Սաքոն |
| 89 | 4 վեր. | արդֆին | արտֆին |
| 90 | 22 » | ուտելիս եմ յեղել | ուտելիս՞եմ լինելու |
| 92 | 12 » | (կամ կերած | (կամ կերած չեմ) |
| 96 | 2 ներ. | բարի ժպիտն | բարի ժպտան |
| 115 | 6 վեր. | անիվ եմ, | անիվ իմ, |
| 121 | 11 ներ. | հեյ, և ե այլն). | հեյ, և այլն). |

4037

ԳԻ՛ՆԸ 60 ԿՈՊ. *($8^1/_2$ մամուլ)*

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

А. ПЕТРОСЯН

**Практическая грамматика армянского языка**

**Часть I**

Госиздат ССР Армении

Эривань—1930

ՀՀ Ազգային գրադարան
NL0248158

7281